

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ



## ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

### Ներածություն

Վրաստանը, որպես Եվրախորհրդի անդամ երկիր, մտավ լեզվական և մշակութային առումով հարուստ տարածք: Առանց օտար լեզվի իմացության անհնար է ինտեգրվել այդ տարածքի մեջ և լիարժեք իրականացնել անհատական հնարավորությունները: Դրա հետ կապված՝ հանրակրթական դպրոցների Ազգային ուսումնական պլանը ենթադրում է երկու կամ երեք օտար լեզուների ուսուցում:

Օտար լեզվի իմացությունը հաստատող միջազգային դիպլոմների ստացմանն աջակցելու նպատակով՝ ուսումնական պլանում սահմանված է դպրոցական չափորոշչի համապատասխանությունը Եվրախորհրդի կողմից հաստատված մակարդակներին և մատնացույց է արված, թե ուսուցման որ աստիճանն է համապատասխանում եվրաչափորոշչի ուսուցման այս կամ այն մակարդակին:

### Օտար լեզվի ուսուցման նպատակներն ու խնդիրները

Օտար լեզուն, որպես Ազգային ուսումնական պլանի անբաժանելի մաս, ծառայում է կրթության գլխավոր պետական խնդրի իրագործմանը՝ ազատ անձի դաստիարակությանը, որն իր մեջ է ներառել ազգային և համամարդկային արժեքներ՝ անձի, որը կկարողանա իր ներդրումն ունենալ քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման մեջ:

Մեր նպատակն է աշակերտին տալ այնպիսի կրթություն, որի շնորհիվ նա կարող է.

- Խոսել երկու կամ երեք լեզուներով:
- Հաջողությամբ շփվել այլ մշակույթների ներկայացուցիչների հետ:
- Հասկանալ տարբեր մշակույթների համատեքտերը և տեքստերը:
- Հասկանալ արժեքը և հարգել ցանկացած մշակութա-լեզվական ինքնատիպությունը:
- Ինքնուրույն խորացնել և հարստացնել գիտելիքները լեզվական կամ մշակութային տեսակետից:
- Համագործակցել տարբեր լեզվա-մշակութային նույնականություն ունեցող քաղաքացիների հետ:
- Ինքնուրույն խորացնել գիտելիքը և հարստացնել այն լեզվական թե մշակութային տեսակետից:
- Ինքնուրույն սովորել այլ օտար լեզուներ:

## Այդ նպատակներին հասնելը ենթադրում է երեք տեսակ խնդիրների լուծում.

1. Աշակերտը պետք է ընկալի ինչպես լեզվական, այնպես էլ մշակութային բնույթի տեղեկություն:
2. Աշակերտը պետք է ձեռք բերի տարբեր կարգերի հմտություն-կարողություններ.
  - Խոսքային հմտություն-կարողություններ (լսել, խոսել, կարդալ, գրել):
  - Օտար մշակույթը հասկանալու կարողություն:
  - Օտար լեզվի ուսանման հմտություն-կարողություններ (ուսանման ուսուցում):
  - Կենսականորեն կարևոր հմտություն-կարողություններ (համագործակցություն, ազատ ընտրություն կատարելու կարողություն, ինքնալիարժեքացում, ստեղծագործական մոտեցում և այլն):
3. Աշակերտի մոտ պետք է ձևավորվեն հետևյալ տեսակի վերաբերմունքներ.
  - Անհատական տարբերությունների գնահատում և հարգանք:
  - Լեզվա-մշակութային պատկանելության ապրումներ:
  - Հարազատ մշակութային միջավայրի ինքնատիպության, նրա անկրկնելիության հասկացում և հարգանք:
  - Դրական վերաբերմունք ինչպես մշակութային, այնպես էլ անհատական բազմազանության հանդեպ և դրա ընկալումը՝ որպես աշխարհի բազմազանության մասնավոր արտահայտում:
  - Հետաքրքրություն օտար աշխարհի հանդեպ:
  - Օտար լեզուներ ուսումնասիրելու ցանկություն:

### Օտար լեզուն

#### տարրական, բազային և միջնակարգ աստիճաններում

Օտար լեզվի ուսուցումը դպրոցի տարբեր աստիճաններում հետապնդում է տարբեր դաստիարակչական և կրթական նպատակներ:

#### Օտար լեզվի ուսուցումը տարրական աստիճանում

Տարրական աստիճանում օտար լեզվի ուսուցման դաստիարակչական նպատակն է հաջորդ՝ բազային աստիճանում հաջողությամբ ուսուցանելու նախապատրաստումը: Դրա համար հարկավոր է ապահովել հետևյալը.

- Գործի դնել և զարգացնել դեռահասի մտավոր և հոգեբանական-էմոցիոնալ

ներուծը (հիշողություն, երևակայություն, բազմակողմանի մտածողություն և այլն):

- Ձևավորել դրական վերաբերմունք իր, ուրիշ մարդկանց, ուսման, առարկայի, արտաքին աշխարհի հանդեպ:
- Ջարգացնել կենսական հմտություն-կարողություններ, որոնցից ուսուցման այդ փուլում առաջնային են համարվում կամքը, ուշադրության կենտրոնացումը, կանոնների պահպանումը և դրանք հարգելը, ուսումնական առարկաների, գործունեության հանդեպ կազմակերպվածությունը, համագործակցությունը (աշխատանք զույգերով, խմբերով, փոխօգնություն), ստեղծագործական մոտեցումը:

Ինչ վերաբերում է օտար լեզվի ուսումնասիրման կրթական նպատակին, ուսուցման այդ փուլում առաջնակարգ տեղ է գրավում օտար լեզվով բանավոր խոսքը (լսել-խոսել) և մշակութային տեղեկության ընկալումը:

Ուսուցման տարրական աստիճանում կարևոր խնդիր է հանդիսանում աշակերտի հետաքրքրությունների խթանումը, պատճառաբանության ուժեղացումը. դեռահասը պետք է սիրի օտար լեզվի ուսուցման գործընթացը և հենց օտար լեզուն և մշակույթը: Ուսուցման գործընթացում պետք է բացառվեն անհաջողության և պարտության զգացումները: Դրա համար դասավանդման մեթոդիկական պետք է նախատեսի երեխաների հոգեբանական զարգացման առանձնահատկությունները և օգտագործի ուսուցման համապատասխան եղանակները:

### Օտար լեզվի ուսուցումը բազային աստիճանում

Բազային աստիճանը պարտադիր ուսուցման ավարտական փուլն է. բազային աստիճանի ավարտից հետո աշակերտների մի մասը թողնում է դպրոցը և ներգրավվում ակտիվ կյանքին: Այս աստիճանում լեզվի գլխավոր դաստիարակչական նպատակն է հանդիսանում քաղաքացիական գիտակցության և ստեղծագործական վերաբերմունքի (հանդուրժողականություն, անձնական և հասարակական պատասխանատվություն, ինքնուրույնություն, ինքնազարգացում, քննադատական մտածողություն, ինքնաարտահայտում...) կարողությունների զարգացումը:

Օտար լեզվի կրթական նպատակն է աշակերտին զինել բազային գիտելիքներով, որոնք կնպաստեն նրանց կողմնորոշմանը ժամանակակից կյանքում: Մասնավորապես, այդ ցիկլի վերջում աշակերտը պետք է կարողանա.

- Գրավոր և բանավոր հաղորդակցվել երկու օտար լեզուներով ամենօրյա կենցաղային իրավիճակներում:
- Ինքնուրույն բարձրացնել գիտելիքների մակարդակը այս կամ այն ուղղությամբ (լսել, խոսել, ընթերցել, գրել, մշակույթ):
- Մասնակցել տարբեր մշակութային և սոցիո-մշակութային համատեքստերում գործնական հարցման:

Ուսուցման բազային աստիճանի գլխավոր խնդիրն է աշակերտներին պատրաստել այնպիսի կարևոր որոշման ընդունմանը, ինչպիսին է կյանքի ճանապարհի ընտրությունը (ընդգրկում ակտիվ կյանքին, մասնագիտական կրթություն ստանալը, դպրոցում ուսման շարունակելը): Դա ապահովելու համար ուսուցման մեթոդիկայի մեջ պետք է ներդրվեն այնպիսի ռազմավարություններ, որոնք կբացահայտեն աշակերտի ներուժի առանձնահատկությունները (բազմակողմանի գնահատում):

### Օտար լեզվի ուսուցումը միջնակարգ աստիճանում

Այս աստիճանում օտար լեզվի ուսուցման գլխավոր դաստիարակչական նպատակն է մնում աշակերտների մեջ քաղաքացիական գիտակցության և ստեղծագործական հմտություն-կարողությունների ձևավորումը: Աշակերտին, գործունեության ինչ ոլորտ էլ որ նա ընտրի, օտար լեզուն հարկավոր է որպես գիտելիքների հարստացման և փորձի փոխանակման միջոց: Այսպիսով, ուսուցման միջնակարգ աստիճանում օտար լեզվի ուսուցման կրթական նպատակն է աշակերտին այնպիսի գիտելիքներով ապահովելը, որպեսզի նա մեկ կամ երկու լեզուներով կարողանա.

- Հասկանալ, մշակել, վերլուծել տարբեր բնույթի բանավոր և գրավոր տեքստեր (ռեպորտաժ, գործնական նամակ, հարցազրույց, ռեֆերատ, կենսագրություն, հրապարակախոսական հոդված, գեղարվեստական ստեղծագործություն և այլն)՝ ուսումնական գործունեության մեջ դրանց հետագա օգտագործման նպատակով:
- Բանավոր և գրավոր բացատրությունները, սեփական կարծիքը և վերաբերմունքը արտահայտել և հիմնավորել:
- Կազմել ընկերական կամ գործնական նամակներ, ակտիվ թեմաներով բանավոր զեկուցումներ, նախագծեր ներկայացնել և այլն:

### Օտար լեզվի ուսումնական պլան դպրոցի տարբեր աստիճաններում

Ազգային ուսումնական պլանը տարրական աստիճանում ենթադրում է միայն մեկ օտար լեզվի ուսուցում, իսկ բազային և միջնակարգ աստիճաններում՝ երկու լեզուների: Եթե դպրոցը հնարավորություն ունի ուսուցանել իր աշակերտներին մի քանի օտար լեզուներ, ապա աշակերտն իր ցանկությամբ ընտրում է որևէ լեզու: Օրինակ, եթե դպրոցն ունի համապատասխան մարդկային ռեսուրսներ ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների ուսուցման համար, ապա տարրական աստիճանում աշակերտների մի խումբը կարող է ընտրել ռուսաց լեզուն, երկրորդը՝ ֆրանսերենը, իսկ երրորդն՝ անգլերենը: Տարրական աստիճանում ֆրանսերեն լեզու ուսուցանող աշակերտները բազային աստիճանում երկրորդ լեզու կընտրեն ռուսերենը կամ անգլերենը և այլն: Միջնակարգ աստիճանում թույլատրելի է, որ աշակերտը դադարեցնի առաջին օտար լեզվի ուսուցումը և դրա փոխարեն սկսի երրորդ օտար լեզվի ուսուցումը, եթե, իհարկե, դպրոցն ունի այդպիսի ընտրության հնարավորություն (տե՛ս՝ աղյուսակ 1 և 2):

Աղյուսակ 1

	Տարրական				Բազային			Միջնակարգ		
Դասարան	3	4	5	6	7	8	9	10	11	12
Օտար լեզու 1	+	+	+	+	+	+	+	+	+	+
Օտար լեզու 2	-	-	-	-	+	+	+	+	+	+

Աղյուսակ 2

	Տարրական				Բազային			Միջնակարգ		
Դասարան	3	4	5	6	7	8	9	10	11	12
Օտար լեզու 1	+	+	+	+	+	+	+	-	-	-
Օտար լեզու 2	-	-	-	-	+	+	+	+	+	+
Օտար լեզու 3	-	-	-	-	-	-	-	+	+	+

Որպես երրորդ լեզու առաջարկվում է որևէ ոչ եվրոպական լեզու (սահմանամերձ գոտիների կամ հարևան պետության լեզուն):

Որպեսզի պարտադիր ուսուցման սահմաններում, երկու օտար լեզուներ սովորելիս, աշակերտը նույն մակարդակի գիտելիքներ ձեռք բերի, բազային աստիճանի ժամային ցանցում ժամերի ավելի մեծ քանակ է հատկացվում երկրորդ օտար լեզվին (այսինքն՝ օտար լեզու 2-ին): Միջնակարգ աստիճանի ժամային ցանցում կլինեն այլընտրանքային տարբերակներ. դպրոցն ինքն է ընտրում՝ որ լեզվին ավելի շատ քանակի ժամեր հատկացնի:

Օտար լեզվի առարկայական ծրագիրը կազմված է երեք բաղադրիչներից. ներածական մաս, չափորոշիչ և ծրագրի բովանդակություն:

**Օտար լեզվի չափորոշիչ:** Չափորոշիչն ընդհանուր է ցանկացած օտար լեզվի համար, որը կարող է ուսուցանվել դպրոցում: Այն սահմանում է օտար լեզվի ուսուցման սպասվելիք արդյունքները ուսուցման յուրաքանչյուր աստիճանի համար:

Օտար լեզվի չափորոշիչը բաժանված է ոչ թե դասարանների, այլ լեզվի տիրապետման մակարդակների համաձայն: Համապատասխանաբար, դասագրքերն էլ կգրվեն չափորոշիչ մակարդակների համաձայն:

**Տարրական և բազային-միջնակարգ աստիճանի մակարդակներ:** Տարրական աստիճանի չափորոշիչ մակարդակները և նրանց հիման վրա ստեղծված դասագրքերը իմաստային և մանկավարժական տեսակետից համապատասխանում են այս աստիճանի աշակերտների հոգեբանական զարգացման առանձնահատկություններին: Այսպիսով, տարրական աստիճանի մակարդակները և նրանց հիման վրա կազմած դասագրքերը պիտանի չեն լինի բազային-միջնակարգ աստիճանի աշակերտների համար, և ընդհակառակը՝ բազային-միջնակարգ աստիճանի չափորոշիչ մակարդակները և նրանց հիման վրա կազմած դասագրքերը պիտանի չեն լինի տարրական աստիճանի աշակերտներին:

Տարրական աստիճանի համար 4 մակարդակ է առանձնացված, իսկ բազային-միջնակարգ աստիճանի համար՝ 7 մակարդակ:

Տարրական աստիճանի մակարդակներ	SI	SII	SIII	SIV			
Բազային-միջնակարգ աստիճանի մակարդակներ	Բ-ՄI	Բ-Մ II	Բ-Մ III	Բ-Մ IV	Բ-Մ V	Բ-Մ VI	Բ-Մ VII

Մակարդակների և դասարանների համապատասխանությունը: Մակարդակների համաձայն բաժանումն ավելի ճկուն է դարձնում օտար լեզուների ուսումնական պլանը և ուսուցչին հնարավորություն է տալիս կոնկրետ դասարանի պահանջմունքների համաձայն ընտրել այս կամ այն մակարդակի դասագիրք: Օրինակ I մակարդակի անգլերենի դասագիրքը նա կարող է օգտագործել նաև VII դասարանում, եթե աշակերտներն այս փուլում են սկսում անգլերենի ուսուցումը և նաև X դասարանում, եթե նրանք այս փուլում կսկսեն անգլերեն սովորել:

**Դասարանների և մակարդակների համապատասխանությունը առաջին, երկրորդ և երրորդ օտար լեզվի համար**

		Տարրական				Բազային-միջնակարգ					
		III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Օտ. լեզու 1	Մակարդակ	SI	SII	SIII	SIV	Բ-Մ II/ Բ-Մ III	Բ-Մ III/ Բ-Մ IV	Բ-Մ IV/ Բ-Մ V	Բ-Մ V/ Բ-Մ VI	Բ-Մ VI/ Բ-Մ VII	Բ-Մ VII
Օտ. լեզու 2	Մակարդակ					Բ-Մ I	Բ-Մ II	Բ-Մ III	Բ-Մ IV	Բ-Մ V	Բ-Մ VI
Օտ. լեզու 3	Մակարդակ								Բ-Մ I	Բ-Մ II	Բ-Մ III



Ինչպես երևում է աղյուսակից, առաջին օտար լեզվի դեպքում, բազային-միջնակարգ աստիճանի յուրաքանչյուր դասարանում երկուսական մակարդակ է առաջարկված, ինչը մատնանշում է այն, որ ուսուցիչն ընտրության հնարավորություն ունի: Յոթերորդ դասարան տեղափոխված աշակերտները, տարբեր դասարաններում և տարբեր դպրոցներում հնարավոր է տարբեր մակարդակներով տիրապետեն տարրական դասարաններում սովորած լեզվին, ինչը կախված է տարբեր գործոններից: Այսպիսով, ուսուցիչն ինքն է վճռում, թե կոնկրետ 7-րդ դասարանում երկրորդ մակարդակի (Բ-Մ II) դասագիրք օգտագործի, թե երրորդ մակարդակի(Բ-Մ III): Կարող է այնպես էլ լինել, որ աշակերտներին առաջին մակարդակի դասագիրք անհրաժեշտ լինի: Այսպիսի դեպքերում ուսուցիչը չպետք է խուսափի առաջին մակարդակի դասագիրք ընտրելուց:

Երկրորդ օտար լեզվի դեպքում երկրորդ մակարդակի դասագիրքը (Բ-Մ II) պիտանի կլինի 8-րդ դասարանում, իսկ երրորդ օտար լեզվի դեպքում՝ տասնմեկերորդում:

Մակարդակների համակարգի ներդրման էությունը կայանում է նրանում, որ ուսուցիչը գործի դասարանում առկա ռեալ իրավիճակից և այս կամ այն դասարանում օգտագործի այն մակարդակի դասագիրք, որը համապատասխանում է աշակերտների պահանջներին:

Այնպես որ, ուսուցչի գերակայությունն է ընտրել, թե որ դասարանում որ մակարդակի դասագիրք օգտագործի:

### **Եվրախորհրդի կողմից սահմանված լեզվի տիրապետման մակարդակներ**

Կրթության կոմիտեի և օտար լեզուների բաժանմունքը օտար լեզուների ուսանում-ուսուցման և գնահատման համար կազմել է և հրապարակել ընդհանուր եվրոպական երաշխավորական շրջանակ: Այս շրջանակի նպատակն է ստեղծել անդամ-երկրների համար ընդհանուր բազա լեզվի իմացության որակավորման որոշման համար և օժանդակել ուսուցիչների, ծրագիր ստեղծողների, հավաստագիր հանձնողների և օտար լեզուն սովորեցնող վարչությունների համաձայնեցված գործողություններին:

Երաշխավորությունների շրջանակը որոշում է լեզվի իմացության երեք հիմնական մակարդակներ.

- A – հիմնական սպառող (լեզվի տարրական իմացություն)
- B – անկախ սպառող (լեզվի լավ տիրապետում)
- C – մասնագետ (լեզվի ազատ տիրապետում):

Այդ երեք մակարդակները բաժանվում են վեց ճյուղավորումների. A1 (բանալի), A2 (հիմք), B1 (սահմանային), B2 (սահմանային զարգացած), C1 (բարձր), C2 (կատարյալ): Հանրակրթական դպրոցի օտար լեզվի չափորոշիչը նպատակ է դնում հաղթահարել B1 (սահմանային) մակարդակը:

Չափորոշչի համապատասխանությունը Եվրախորհրդի կողմից սահմանված լեզվի տիրապետման մակարդակներին այսպիսին է.

Տարրական աստիճանի մակարդակներ				
Օտար լեզվի չափորոշչի մակարդակներ	SI	SII	SIII	SIV
Եվրախորհրդի չափորոշչի համապատասխան մակարդակ	A1.1	A1.2	A2.1	A2.2

Օտար լեզվի չափորոշչի մակարդակներ	Բ-Մ I	Բ-Մ II	Բ-Մ III	Բ-Մ IV	Բ-Մ V	Բ-Մ VI	Բ-Մ VII
Եվրախորհրդի չափորոշչի համապատասխան մակարդակ	A1	A2	B1.1	B1.2	B1.3	B1.4	B+/ B2 նչ լրիվ

**Ծրագրի բովանդակությունը:** Առարկայական ծրագրի երրորդ մասը ծրագրի բովանդակությունն է, որը երաշխավորական (և ոչ պարտադիր) բնույթի է: Ծրագրի բովանդակությունն այն լեզվական նյութի և սոցիոմշակութային թեմատիկայի ցանկն է, որով կարելի է զարգացնել չափորոշչով սահմանված հմտություն-կարողությունները: Ազգային ուսումնական պլանի շրջանակներում ծրագրի բովանդակությունը սահմանվել է չորս օտար լեզուների համար (ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, անգլերեն): Դպրոցները, որոնք պլանավորել են այլ օտար լեզուներ անցնել, կառաջնորդվեն միայն չափորոշչով:

**Օտար լեզվի ուսուցման ուղղությունները և դրանց բովանդակությունը**

Նախանշված նպատակների ապահովման համար օտար լեզվի ուսուցումը կձևավալվի յոթ ուղղություններով. լսել, ընթեցել, գրել, խոսել, ուսման ուսուցում, մշակույթների երկխոսություն, օտար լեզվի գործնական կիրառում:

## Լսել, խոսել, ընթերցել, գրել

Առաջին չորս ուղղությունները (լսել, խոսել, ընթերցել, գրել) ունեն ընդհանուր ներքին կառուցվածք, որն ընդգրկում է երեք տարբերվող տիպի արդյունքներ.

1. Հաղորդակցական արդյունքներ, որոնք նկատի ունեն տեքստերի բովանդակությունը հասկանալ-վերլուծել (կարդալու և լսելու ընթացքում) և ստեղծել (գրելիս և խոսելիս) :
2. Ռազմավարական արդյունքներ, որոնք նկատի ունեն լսելու, կարդալու, խոսելու, գրելու ռազմավարությունների տիրապետում:

Ներքին կառուցվածքի նպատակն է ընդգծել այն կարողությունները, որոնց զարգացումը ընդհանուր նպատակ է բոլոր լեզուների ուսանում-ուսուցման համար, կլինի սա վրաց լեզու և գրականություն, վրացերենը, որպես երկրորդ լեզու, գերմաներենը, ֆրանսերենը, ռուսերենը թե անգլերենը: Ցանկալի է լեզուների ուսուցման ժամանակ հաղթահարվի դժվարությունը և ներդրվի լեզուների ինտեգրված մանկավարժություն: Եվ իսկապես, ցանկացած տիպի (մայրենի թե ոչ մայրենի ) լեզվի ուսուցման ժամանակ աշակերտը կանգնում է նման հիմնախնդիրների առջև: Օրինակ՝ նա պետք է որոշի, թե ինչ կառուցվածքի է տեքստը, ինչ բովանդակություն է պարունակում, ինչ լեզվական բնութագրիչներ ունի, ինչ ռազմավարություններ պետք է օգտագործի նրա իմաստավորման համար և այլն: Ավելին, նույնպիսի լեզվա-հաղորդակցական խնդրի առջև է կանգնած աշակերտը ցանկացած ոչ լեզվական առարկայի դեպքում (կլինի սա պատմություն, մաթեմատիկա, ֆիզիկա թե այլ առարկա), երբ պետք իմաստավորի տեքստը, կազմի այն կամ լսարանի առջև ելույթ ունենա: Այնպես որ լեզվա-հաղորդակցական կարողությունները ընդհանուր բնույթի են՝ այս կարողություններին աշակերտը պետք է տիրապետի ցանկացած առարկայի յուրացման գործընթացում: Ինտեգրված դիդակտիկան նկատի ունի լեզուների ուսանման ժամանակ ստացած փորձի փոխկապակցում, օժանդակում աշակերտի կողմից ձեռք բերած փորձի մի լեզվից մյուսը տեղափոխելուն: Այսպիսի մոտեցումը ամրապնդում է կարողությունները, հարստացնում փորձը և մեծացնում աշակերտների գործունակությունը: Սրա իրականացման նպատակով ուսուցիչը պետք է մտածի սովորած թե սովորելու լեզուների միջև կամուրջներ ձգելու մասին: Այսպես օրինակ՝ օտար լեզվի հինգերորդ մակարդակի չափորոշչում արտացոլված ռազմավարությունը՝ *աշակերտը լրիվ կկարդա տեքստը, տարբեր խորհրդանշաններով կնշի գլխավոր հարցերը, երկրորդական գաղափարները, հանգուցային բառերը*՝ պատկանում է այնպիսի կարողությունների թվին, որոնք նա կարող է արդյունավետ օգտագործել տեքստի իմաստավորման ժամանակ ցանկացած առարկայից, կլինի սա լեզվական (վրացերեն, անգլերեն, ռուսերեն թե այլ), թե ոչ լեզվական առարկա (պատմություն, ֆիզիկա, աշխարհագրություն և այլն): Կամուրջներ ձգելու համար ուսուցիչը պետք է աշակերտին գիտակցել տա, որ կոնկրետ կարողությունը կարելի է տեղափոխել տարբեր առարկաներ և կոնկրետ համատեքստեր:

Հենց դրա օժանդակմանն են ծառայում բազմաթիվ ստուգիչներ, որոնք ներկայացված

են օտար լեզվի չափորոշչի ռազմավարական արդյունքներում և *ուսանման ուսուցում* ուղղության մեջ: Օրինակ կբերենք դրանցից մի քանիսը.

Ուղղություն կարդալ, արդյունք – օտար, Բ-Մ V.10, ստուգիչներ.

- *«Նկարագրում է, թե ինչ միջոցով/ճանապարհով կարողացավ վճռել ընթերցանության խնդիրը:*
- *Համեմատում է ուրիշների ընտրած եղանակը և անում եզրակացություն, թե որ մոտեցումն է ավելի արդյունավետ:*
- *Ընթերցանության խնդիրների վճռման համար օգտագործում է ինչպես մայրենի, այնպես էլ օտար լեզվից ստացած փորձը»:*

Ուղղություն գրել, արդյունք – օտար, Բ-Մ V.15, ստուգիչ.

- *Հիշում է, թե ուրիշ առարկաներից ինչ ռազմավարություն է օգտագործել տեքստ կազմելիս, համեմատում է հին և նոր փորձը, անում է եզրակացություններ:*

Տարրական և բազային-միջնակարգ աստիճանում ուսանում-ուսուցման տարբեր փուլերում լսելը, խոսելը, կարդալը, գրելը տարբեր ուսուցողական ծանրաբեռնվածություն ունեն, այդ պատճառով այս ուղղությունները կանվանենք ուսուցման փուլերի համաձայն:

Ազգային ուսումնական պլանի շրջանակներում օտար լեզվի ուսումնական 3 հիմնական փուլ է առանձնացվում.

**Առաջին (սկզբնական)** փուլն ընդգրկում է տարրական աստիճանի, նաև բազային-միջնակարգ աստիճանների առաջին և երկրորդ մակարդակները կամ՝ SI, SII, Բ-Մ I, Բ-Մ II:

**Երկրորդ (միջին)** փուլն ընդգրկում է տարրական աստիճանի, նաև բազային-միջնակարգ աստիճանների երրորդ և չորրորդ մակարդակները կամ՝ SIII, SIV, Բ-ՄIII, Բ-ՄIV:

**Երրորդ (վերջին)** փուլն ընդգրկում է բազային միջնակարգ աստիճանի հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ մակարդակները կամ Բ-ՄV, Բ-ՄVI, Բ-ՄVII:

### Ուսուցման առաջին փուլ

**Լսել՝** այս փուլում լսելուն, որպես օտար լեզվի ընկալման ուղու, առաջնային նշանակություն է տրվում: Բառային շրջայում լսողությամբ հնչյունների, բառերի, պարզ նախադասությունների ընկալմանը հատուկ նշանակություն է տրվում, քանի որ օտար լեզվին բնորոշ հնչողությունն ուշադրությամբ լսելն անհրաժեշտ է հասկանալու կարողության և ճիշտ արտասանության ձևավորման համար, ինչն, իր հերթին, հիմք է դառնում հաջող հաղորդակցման համար: Հնչյունաբանական լսողության զարգացումը կկատարվի բովանդակային համատեքստում: Տեքստերն անպայման պետք է ուղեկցվեն դիդակտիկ նյութերով (նկար, առարկա, պատկերներ, լուսանկարներ և այլն) և հնչյունային ստուգիչներով (որևէ աղմուկ, հստակ

արտահայտված հնչերանգներ և այլն), որոնց հիման վրա աշակերտներն ավելի հեշտ կհասկանան տեքստը:

Տարրական փուլում աշակերտներից չի պահանջվում տեքստի լիակատար հասկացում (բավական է հասկանալ հաղորդակցությունը և հիմնական տեղեկությունը) կամ տեքստի ապակառուցքավորում և վերլուծություն լեզվաբանական տեսակետից:

Առաջին փուլում, ինչպես և երկրորդում, լաված տեքստերն օգտագործվում են որպես բանավոր խոսքի նմուշներ: Այդ պատճառով.

- Տեքստերը չպետք է ծանրաբեռնված լինեն անծանոթ բառապաշարով և քերականական կառուցվածքներով, ցանկալի է աշակերտներին առաջարկել ուսուցողական\* տեքստեր:
- Տեքստերի լեզուն պետք է համապատասխանի գործառական լեզվին և պահպանի ժամանակակից լեզվի նորմերը:

**Խոսել.** առաջին փուլում աշակերտը դեռ կդժվարանա խոսել: Ուսուցման ռազմավարությունն ուղղված կլինեն վերարտադրմանը: Վերարտադրման նպատակն է ճիշտ արտասանության ձևավորումը և բառապաշարի հարստացումը, ամրապնդումը: Վերարտադրման համար օգտագործվում են բանաստեղծություններ, համրանքախաղեր (փոքրիկների համար), երգեր, երկխոսություններ, սկետչեր:

Կիրառումը կատարվում է շատ սահմանափակ տեսքով. սովորողները, օգտագործելով սովորած բառական նյութը, հարցեր են տալիս և պատասխանում դրանց, ինչպես նաև նմուշների օգնությամբ տեսարաններ խաղարկում:

**Ընթերցանություն.** հարկավոր է տարբերել երկու կարողություն՝ բարձրաձայն ընթերցանություն ազատ, այսինքն՝ այն ճիշտ հնչյունավորել և հասկանալ կարդացածի բովանդակությունը:

Հնչյունավորման կարողության վարժման համար պետք է տանք այնպիսի տեքստ, որի բովանդակությունը նա արդեն իմաստավորել է, քանի որ բարձրաձայն ընթերցման ժամանակ աշակերտը բովանդակության մասին չի մտածում: Նրա ողջ ուշադրությունը տեղափոխված է հնչյունաբանական կողմի վրա, նրա գիտակցությունը կապված է տառերը հնչյունների հետ կապելով: Այս ժամանակ նա կարդում է այն, ինչ տեսնում է և ոչ թե այն, ինչը գիտակցում է: Կարդացածը հասկանալու կարողության վարժման համար ցանկալի է, որ աշակերտներին դնենք ակտիվ ընթերցողի վիճակի մեջ: Այդ նպատակով մինչև տեքստի ընթերցումը նրանց պետք է տանք կոնկրետ ընթերցանության խնդիր: Կոնկրետ խնդրով նրանց պետք է մոտեցնենք տեքստին:

Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ տարրական աստիճանում ուսուցման առաջին տարում կարդալու հմտություն-կարողության վրա պակաս շեշտադրություն է արվում, առավելությունը շնորհվում է վայրընթաց մեթոդին, այսինքն՝ առանց մասնատման բառերը ճանաչելուն: Ցանկալի է կարդալու սիստեմային ուսուցումը սկսվի փոքր ուշ, ուսուցման երկրորդ-երրորդ տարում:

**Գրել.** այստեղ ևս ուսուցումը լիովին հենվում է վերարտադրման վրա: Ինչպես ընթերցանության դեպքում, գրելու ունակության զարգացումն այլ կերպ է

կատարվում տարրական աստիճանում, քանի որ աշակերտները մինչ այժմ տեխնիկա-մոտորային բնույթի խնդիրներ ունեն: Հաշվի առնելով այդ՝ ուսուցման տարրական աստիճանի առաջին տարում հատուկ ուշադրություն է դարձվում գրության տեխնիկա-մոտորային հմտություն-կարողության ձևավորմանը: Աշակերտը դուրս է գրում տառեր, սովորած բառեր. տիրապետում տառերը միացնելու տեխնիկային:

Որպեսզի տարրական փուլում վերարտադրումը չլինի հոգնեցուցիչ, նշանակալի է աշակերտին առաջարկել բազմազան, հետաքրքրաշարժ և, ինչն ամենակարևորն է, բովանդակալից համատեքստներ (օրինակ, հարցաթերթիկի լրացում, որտեղ աշակերտը կգրի՝ որ կերակուրն է սիրում, կամ որը՝ ոչ):

Գրավոր վերարտադրումը նպաստում է ինչպես ընթերցանության կարողության բարելավմանը, այնպես էլ լեզվական նյութի մտապահմանը:

### Ուսուցման երկրորդ (միջին) փուլ

**Լսել.** երկրորդ փուլում օգտագործվում են ինչպես ուսուցողական, այնպես էլ կիսով չափավտենտային տեքստեր, որոնց ծավալն ու բարդության մակարդակը գերազանցում են նախորդ մակարդակի տեքստերին:

Հասկանալու տեսակետից պահանջը կաճի, աշակերտներից պահանջվում է տեքստի լիարժեք հասկացում և լեզվական երևույթների ուսումնասիրում, վերլուծություն:

**Խոսել.** երկրորդ փուլում առաջնային է դառնում աշակերտի խոսելը: Ավելի բազմազան են դառնում հաղորդակցական իրավիճակները, որոնցում նա մասնակցում է որպես ունկնդիր և գործող անձ: Նա սկսում է ավելի ազատ օգտագործել լեզվական պաշարն՝ ինչպես կեղծակերպած, այնպես էլ իրական հաղորդակցություններում:

**Ընթերցանություն.** երկրորդ փուլում աշակերտներից պահանջվում է տարբեր տիպի և բովանդակության տեքստեր հասկանալ: Տեքստերը դեռ կլինեն փոքր չափերի, կիսով չափ ավտենտային\* կամ ավտենտայինների նման ուսուցողական:

Ըստ դրված խնդրի՝ աշակերտները կսովորեն ընթերցանության տարբեր ռազմավարություններ կամ տեսակներ օգտագործել (ճանաչելով, ուսումնասիրելով, որոնելով):

**Գրել.** երկրորդ փուլում ուշադրությունն աստիճանաբար փոխվում է, վերարտադրելուց անցնում է օգտագործման: Նմուշների համապատասխան՝ աշակերտները սովորում են փոքր չափերի գործնական տեքստեր կազմել, ինչն օգնում է նրանց ձեռք բերել իրադարձությունների, փաստերի, երևույթների գնահատման և հաջորդական փոխանցման և գնահատման կարողություններ: Այդ ունակությունները հաջորդ փուլում ավելի շատ կտարածվեն և կհղկվեն: Պատճառաբանության բարձրացման համար ցանկալի է այնպիսի ակտիվությունների օգտագործում, որոնց դեպքում աշակերտը պետք է «խաղա» լեզվի հետ և ստեղծագործաբար օգտագործի բառապաշարը (օրինակ՝ ակրոստիքոս հորինի՝ որոշակի սովյալների համաձայն):

### Ուսուցումը երրորդ (վերջին) փուլում

**Լսել.** եթե մինչ այժմ լսելու համար նախատեսված տեքստերը օգտագործվում էին որպես բանավոր խոսքի մնուշներ, այժմ խոսելն ու լսելը չեն խաչաձևվում և չեն ենթարկվում իրար: Այսպիսով, կարելի է ազատ օգտագործել ավտենտային տեքստերը և հնարավորություն տալ լսելու ունակությանը զարգանալ ավելի արագ և խորը՝ անկախ խոսքային կարողությունից: Այս փուլում աշակերտները սովորում են հասկանալ տեքստը՝ հենվելով միայն ակուստիկ կերպարի վրա:

**Խոսել.** ավելի հարուստ են դառնում հաղորդակցական իրավիճակների տեսակները: Դասասենյակում հաղորդակցումն ամբողջությամբ իրականացվում է օտար լեզվով: Ուսուցման ռազմավարություններն ուղղված են ինքնարտահայտման կարողության հղկմանը, դրա ճշտմանը և հարստացմանը:

**Ընթերցանություն.** այս փուլում գրավոր կամ բանավոր խոսքի կարողության զարգացման հիմնական աղբյուր է դառնում ընթերցանությունը: Նրա միջոցով աշակերտը հարստացնում է իր բառապաշարը և ավելի ինքնուրույն դառնում ուսման մեջ: Մեծանում է տեքստերի ծավալը և դրանց բարդությունը: Աշակերտներից պահանջվում է ավտենտային, տարբեր ժանրերի կամ գրական տեսակների և գործառական տեքստերի հասկացում և վերլուծում:

**Գրել.** վերջին փուլում աշակերտը պետք է տիրապետի այնպիսի տեքստեր գրելուն, որոնք նրան մեծ մասամբ կօգնեն ինքնուրույն կյանք մտնելու ժամանակ (գործնական կամ անձնական նամակ, ռեֆերատ և այլն): Աշակերտը կրկին օգտվում է մնուշներից, թեև հորինում է մի քիչ ավելի մեծ ծավալի տեքստեր, որտեղ նա ձեռք է բերում պատմելու, նկարագրելու, մտքերի հաջորդական փոխանցման, հիմնավորման հմտություն-կարողություններ:

### Ուսանման ուսուցում

Այս ուղղության առարկան ինքնին ուսումնական գործընթացն է: Աշակերտները պետք է սովորեն ուսումնական գործունեությունն ինքնուրույն վարել: Դրա համար նրանց պետք է միանգամից վարժեցնել ուսումնական նպատակների և խնդիրների իմաստավորմանը, ուսումնական գործընթացի վերլուծմանը՝ ով, ինչ մոտեցում և ռազմավարություն օգտագործեց, ինչ դժվարությունների հանդիպեցին, ինչն օժանդակեց դժվարության հաղթահարմանը, ինչը խոչընդոտեց առաջընթացին, արդյունքների անկախ գնահատմանը, որոշակի հարցերի հետ կապված պատասխանատվության ստանձնմանը, տարբեր ռազմավարությունների օգտագործմանը, ուսումնական գործընթացի վրա դրական ազդող գործոնների ստեղծմանը և այլն: Ուսանման հմտություն-կարողության զարգացման համար աշակերտին հարկավոր է առաջարկել տարբեր տեսակի ակտիվություններ. օրինակ, հարցաթերթիկներ\*, որոնք նրան թույլ կտան գիտակցել կոնկրետ խնդրի լուծման ժամանակ սեփական և այլընտրանքային մոտեցումը, տարբեր բովանդակությամբ\* ինքնագնահատման գծապատկերներ, հոգեբանական բնույթի թեստեր\*, որոնցով

աշակերտը կրմբոնի ուսումնական գործընթացի վրա դրական կամ բացասական ազդող տարբեր տեսակի գործոնները և այլն:

### Մշակույթների երկխոսություն

Օտար լեզվի ուսուցումը նշանակում է օտար աշխարհ մտնել, կյանքի տարբեր կանոններ, ավանդույթներ հայտնաբերել, օտար արժեքները և մտածելակերպը հասկանալ: Այսպիսով, հաջող հաղորդակցությունը կախված է ոչ միայն խոսքային ունակություններից, այլև տարբերվող մշակութային համատեքստեր հասկանալու, դրանք հարգելու կարողությունից: Հենց այդ կարողությունների և վերաբերմունքների ձևավորմանն է ծառայում «մշակույթների երկխոսություն» ուղղությունը:

Սովորողների ուշադրությունը սևեռվում է օտար մշակույթի առանձնահատկությունների վրա: Աշակերտներին հնարավորություն կտրվի արտահայտել իրենց վերաբերմունքը, տալ գնահատականներ, զուգահեռներ անցկացնել սեփական մշակութային փորձի թե միջավայրի հետ: Այսպիսի ակտիվությունները աշակերտների մեջ կխորացնեն մշակութային բազմազանությունը, կսովորեցնեն գնահատել իրենց և օտար մշակույթները:

Հարկավոր է ուշադրություն դարձնել անձերի փոխհարաբերություններին: Դասերի ժամանակ սովորողներին պետք է հնարավորություն տրվի խոսել իրենց մասին, բացահայտել սեփական անձի տարբեր կողմերը՝ լինեն դրանք ապրումներ, հակումներ, ճաշակ, կարծիքներ, երազանքներ, սիրած գործ, սիրած գործող անձինք, կենցաղային պատմություններ, հայացքներ և այլն. աշակերտները կժամոթանան համադասարանցիների կամ օտարալեզու հասակակիցների հոգևոր աշխարհին և այդպիսով կարող են զգալ իրենց և ուրիշների անհատականության անկրկնելիությունը. նրանք կսովորեն գնահատել ուրիշի անձը, լսել իրար, կսովորեն փոխըմբռնում և փոխօգնություն: Դա նպաստում է այն բանին, որ աշակերտներն իրար նկատմամբ և ուրիշ մարդկանց հանդեպ ավելի համբերատար լինեն:

### Օտար լեզվի գործնական կիրառություն

Այս ուղղությունը կապվում է այն սոցիալական նպատակի իրականացման հետ, որն ավելի և ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում օտար լեզվի դասավանդման մեջ՝ այնպիսի գործիչ-անհատ դաստիարակել, որը կկարողանա տարբեր լեզվա-մշակութային նույնականություն ունեցող քաղաքացիների հետ համագործակցել: Գլխավոր ընդհանուր հմտություն-կարողությունը, որի զարգացմանը պետք է ծառայի այս ուղղությունը, համալիր բնույթի խնդիրների լուծումն է խմբային կամ անհատական աշխատանքի ձևաչափում: Մեթոդական տեսակետից այս տիպի հանձնարարություններն օժանդակում են հաղորդակցական-լեզվական կարողությունների ավելի լավ տիրապետմանը, այնքանով, որքանով աշակերտները լեզվական ակտիվություններում ստացած գիտելիքը և փորձը տեղափոխում են տարբերվող իրավիճակ: Այս ուղղության մեջ է մտնում նախազգի իրականացումը, տեքստերի վերամշակում՝ նրանց հետագա օգտագործման նպատակով և **մեդիացիան**:



Մեդիացիան և բանավոր ակտիվություն է, և գրավոր: Այն նկատի ունի ցանկացած տիպի տեքստի բովանդակության հաղորդում թարգմանության, գրախոսության թե մեկնաբանության միջոցով: Մեդիացիայի նշանակումն է կոնկրետ տեքստի բովանդակությունը մատչելի դարձնել նրա համար, ում համար այս տեքստն անմիջականորեն մատչելի չէ:

### Չափորոշում նշված դասիչներ

Չափորոշում բերված յուրաքանչյուր արդյունքին սկզբում կցվում է դասիչը: Օրինակ, **օտ. S. III.1.**՝ առաջին **օտ.** նշանը նշում է առարկան (օտ.= օտար լեզու), երկրորդ նշանը՝ **S**՝ նշում է ասիճանը (**S**=տարրական, **Բ-Մ**- բազային միջնակարգ., երրորդ նշանը **III**, նշում է լեզվի տիրապետման մակարդակը իսկ վերջին նշանը՝ **1**՝ արդյունքի կարգն է (1 = առաջին արդյունք):



Տարրական աստիճանի օտար լեզվի չափորոշիչ

I մակարդակ  
Ձեռքերվելիք արդյունքները

Ուղղություն.		
Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ.ՏԻ. 1. Աշակերտը հասկանում է ուսուցչի ցուցումները:</p> <p>Օտ. ՏԻ. 2. Աշակերտը հասկանում է բանաստեղծությունները, հանրանքախաղերը, երգերը:</p> <p>Օտ. ՏԻ. 3. Աշակերտը հասկանում է պատկերազարդ փոքր տեքստը:</p> <p>Օտ. ՏԻ. 4. Աշակերտը ձեռք է բերում լսելու համար անհրաժեշտ հմտություն-կարողություններ:</p> <p>Օտ. ՏԻ. 5. Աշակերտը բովանդակությունը հասկանալու համար օգտագործում է համապատասխան ռազմավարություններ:</p>	<p>Օտ. ՏԻ. 6. Աշակերտը տիրապետում է կարդալու համար անհրաժեշտ հմտություն-կարողություններին:</p>	<p>Օտ. ՏԻ 7. Աշակերտը ձեռք է բերում գրելու տարրական հմտություն-կարողություններ:</p>

Ուղղություն.		
Խոսել	Ուսանման ուսուցում	Մշակույթների խոսություն
<p>Օտ. ՏԻ. 8. Աշակերտը ձեռք է բերում խոսելու համար անհրաժեշտ հմտություններ (ունի կարողություններ համապատասխան արտասանություն, պահպանում է ռիթմիկ հատվածները, հարստացնում է բառապաշարը):</p> <p>Օտ. ՏԻ. 9. Աշակերտը մասնակցում է պարզ հաղորդակցման:</p>	<p>Օտ. ՏԻ. 10. Աշակերտը կազմակերպում է ուսումնական գործունեությունը:</p> <p>Օտ. ՏԻ. 11. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացին:</p> <p>Օտ. ՏԻ. 12. Աշակերտն օգտագործում է գոյություն ունեցած ռեսուրսները և ստեղծում է նորը:</p> <p>Օտ. ՏԻ. 13. Աշակերտն ունի հիմնափոխ վերաբերմունք խոչընդոտների նկատմամբ:</p> <p>Օտ. ՏԻ. 14. Աշակերտն աշխատում է համագործակցել համադասարանցիների, ուսուցիչների հետ:</p> <p>Օտ. ՏԻ. 15. Աշակերտն աշխատում է համագործակցել թիմի անդամների հետ:</p> <p>Օտ. ՏԻ. 16. Աշակերտը հանդուրժողական է ուրիշների կարծիքների նկատմամբ:</p>	<p>Օտ. ՏԻ. 17. Աշակերտը որոշում է օտարալեզու տեղեկությունը մշակույթի բնագավառից:</p> <p>Օտ. ՏԻ. 18. Աշակերտը համեմատում է օտար և հայրենի սոցիոմշակութային միջավայրը:</p>

## Ուսուցման արդյունքները և ստուգիչները

(Լսելու կարողության զարգացման համար օգտագործվում են ուսուցողական\* լսանիշներ, որտեղ տեքստերը պարզ և դանդաղ են լսվում)

### Ուղղություն՝ ունկնդրում

**Օտ. SI. 1. Աշակերտը հասկանում է ուսուցչի ցուցումները:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Համապատասխանաբար է արձագանքում ուսուցչի ցուցումներին:

**Օտ. SI. .2. Աշակերտը հասկանում է բանաստեղծությունները, համրանքախաղերը, երգերը:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Դիմախաղով, ձեռածությանը, ռիթմիկ շարժումներով մարմնավորում է բովանդակությունը:

**Օտ. SI. 3. Աշակերտը հասկանում է պատկերազարդ փոքր տեքստը:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է նկարագրած հերոսին, կենդանին, առարկան և այն կապում է համապատասխան նկարի հետ, ձեռածությանը մարմնավորում է, նկարում, մատնացույց անում իրական առարկան:
- Որոշում է հերոսին, կենդանին, առարկան՝ նկարագրած հատկանիշների համաձայն (օրինակ՝ *կարմիր, կլոր, մեծ, փոքր*) մատնացույց է անում, գունավորում, շրջագծում այն:
- Որոշում է և մատնանշում նրանց տեղը (օրինակ՝ *սեղանի վրա, տետրի մեջ, պայուսակում, տուփի մեջ*):
- Որոշում է կոնկրետ գործողությունները և մարմնավորում կամ մատնացույց անում դրանք նկարի վրա:

**Օտ. SI. 4. Աշակերտը ձեռք է բերում լսելու համար անհրաժեշտ հմտություն-կարողություններ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է օտար լեզվին բնորոշ հնչյունները:
- Հասկանում է և դիմախաղով-ձեռածությանը, ռիթմիկ շարժումներով մարմնավորում բանաստեղծություններ, երգեր, համրանքախաղեր:

## Լսելու ռազմավարություններ

Օտ. ՏԻ. 5. Աշակերտը բովանդակությունը հասկանալու համար  
օգտագործում է համապատասխան ռազմավարություններ:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Պատկերագրողումների, վերնագրի հիման վրա ենթադրություն է արտահայտում տեքստի բովանդակության մասին:
- Չայնագրության կամ անմիջական խոսողություն լսելու ժամանակ հիմնվում է ոչ բառային տարրերի վրա (ձայնի տեմբր, տարբեր տեսակ աղմուկ, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն):
- Փորձում է ինքնուրույն որոշել անձանոթ բառերը, արտահայտությունները՝ հիմնվելով ծանոթ բառային թե ոչ բառային տարրերի վրա (տարբեր տեսակ աղմուկ, հնչերանգ, պատկերագրում):

## Ուղղություն՝ ընթերցանություն

Օտ. ՏԻ. 6. Աշակերտը տիրապետում է կարդալու համար անհրաժեշտ  
հմտություն-կարողություններին:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ազատ ճանաչում է ծանոթ և հաճախ օգտագործած բառերը, ավտոմատ կերպով կապում է ուղղագրական պատկերը հնչյունաբանական պատկերի հետ:
- Բառերը ճանաչում է՝ հենվելով ծանոթ տառերի, հնչյունների վրա:
- Ծանոթ բառերը բաժանում է տառերի:
- Ծանաչում է տառերը, հնչյունները, երկհնչյունները:
- Տարբերում է գլխագիր և ոչ գլխագիր տառերը:
- Տարբերում է տպագիր և ձեռագիր տառերը:
- Ծանաչում է գլխագիր և ոչ գլխագիր տպագիր տառերը, ճիշտ է արտասանում դրանք:
- Տեքստում գտնում է ծանոթ բառերը:
- Հիմնվելով ծանոթ բառերի և պատկերագրողումների վրա՝ ճանաչում է փոքր տեքստի (երկու-երեք նախադասությամբ) բովանդակությունը:
- Թերթի վրա տարբերում է բառային և ոչ բառային մասերը՝ *տարբերանշան, պատկերագրողում, պայմանական նշան, վարժության պայման, պատկերագրողման մակագրություն, հիմնական տեքստ, վերնագիր, ենթավերնագիր:*
- Առանձնացնում է տեքստի, պարբերության, քառյակի, նախադասության սկիզբը և վերջը:

- Տարբերում է տպագրական մատնանշումները (*խոշոր, շեղ տառատեսակ, ընդգծում և այլն*):
- Գտնում է կետադրական նշանները (*միության գծիկ, կետ, հարցական նշան*):

### Ուղղություն՝ գրավոր խոսք

**Օտ. SI 7.** Աշակերտը ձեռք է բերում գրելու տարրական հմտություն-կարողություններ:

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Ձեռքի ճիշտ շարժումով գրում է այբուբենի մեծատառ և փոքրատառ տառերը:
- Գրածից կամ տպագիր տեքստից արտագրում է բառեր, վանկեր:
- Պահպանում է տառերը միացնելու կանոնները:

### Ուղղություն՝ խոսողություն

**Օտ. SI. 8.** Աշակերտը ձեռք է բերում խոսելու համար անհրաժեշտ հմտություն-կարողություններ (ունի համապատասխան արտասանություն, պահպանում է ռիթմիկ հատվածներ, հարստացնում է բառապաշարը):

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Արտասանում է բանաստեղծություններ, համրանքախաղեր և կատարում է երգեր:
- Բանավոր խաղարկում է պարզ երկխոսություններ և տեսարաններ:
- Աշխատում է ճիշտ և հասկանալի արտասանել հնչյունները, բառերը, արտահայտությունները, բառախաղերը:
- Տեքստերի արտաբերման ժամանակ պահպանում է համապատասխան հնչերանգը, շեշտերը, համապատասխան ռիթմը:
- Համապատասխանաբար է հարմարեցնում ոչ բառային խոսքը բանաստեղծության բովանդակությանը (հնչերանգը, դիմախաղը, ձեռածությունը, ռիթմիկ շարժումները):

**Օտ. SI. 9.** Աշակերտը մասնակցում է պարզ հաղորդակցման:

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Պատասխանում է հարցերի իրեն ծանոթ թեմատիկայով կամ արձագանքում է նրանց ոչ բառային միջոցներով (իր մասին՝ ինչ և ով ունի, քանի տարեկան է, ամենօրյա ակտիվությունների մասին և այլն):
- Պարզ իրեր, դիդակտիկ նյութեր պատրաստելիս օգտագործում է որոշ բառեր

(Ժամանակավորապես տուր, տուր, մատիտ եմ ուզում և այլն):

- Պատասխանում է դասարանական իրավիճակի հետ կապված հարցերի (Ավարտեցի՞ր: Այո: Ոչ:):
- Պատասխանում է սովորած տեքստի բովանդակության շուրջ առաջադրած հարցերի:

**Ուղղություն՝ ուսանման ուսուցում**

**Օտ. SI. 10. Աշակերտը կազմակերպում է ուսումնական գործունեությունը:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Գրի է առնում (մայրենի լեզվով) հանձնարարությունները և կատարում դրանք:
- Խնամում է և կարգավորում ուսումնական պարագաները:
- Բերում է անհրաժեշտ իրեր:
- Կարողանում է կենտրոնացնել ուշադրությունը:
- Ամեն տեսակ ակտիվությունների կատարման ժամանակ աշխատում է պահպանել ժամանակի լիմիտը:

**Օտ. SI. 11. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացին:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Աշխատում է լրացնել ինքնագնահատման պարզ գծապատկերներ:
- Հետքաքրքրվում է ուսուցչի գնահատումներով:
- Հաճույքով մասնակցում է ակտիվություններին:
- Նշում է որոշ թերությունների ուղղման հնարավոր ուղիները (օր.՝ ինչպես վարվի, որ այլևս տանը չմոռանա ուսումնական պարագաները) և աշխատում է ուղղել դրանք:
- Կռահում է և մատնացույց անում ուրիշի և իր սխալները:

**Օտ. SI. 12. Աշակերտն օգտագործում է գոյություն ունեցած ռեսուրսները և ստեղծում է նորը:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ճանաչում է դասագրքում տրված տարբերանշանները, խորհրդանշանները:
- Օգտագործում է դասագրքի պատկերազարդումները, դասասենյակում եղած դիդակտիկ նյութերը:
- Ստեղծում է օպերատիվ ռեսուրսներ և օգտագործում է դրանք (քարտ, լոտո, նկար, տուփ):



**Օտ. SI. 13. Աշակերտն ունի հիմնափոխ վերաբերմունք խոչընդոտների նկատմամբ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Հարցեր է առաջադրում և օգնություն է խնդրում, երբ հանդիպում է դժվարությունների:

**Օտ. SI. 14. Աշակերտն աշխատում է համագործակցել համադասարանցիների, ուսուցիչների հետ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Չի ընդհատում ուրիշներին պատասխանելիս:
- Լսում է համադասարանցիներին, ուսուցչին:
- Համադասարանցուն օգնում է այն հարցերում, որոնցից ինքն է ուժեղ:
- Աշխատում է իր գույգի հետ վճռել առաջադրված խնդիրը:

**Օտ. SI. 15. Աշակերտն աշխատում է համագործակցել թիմի անդամների հետ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Անվանում է առաջնորդի գործառույթները՝ կոնկրետ աշխատանքի համար (օրինակ՝ աշխատանքի և համապատասխան նյութի բաշխում):
- Անվանում է թիմի անդամների պարտականությունը:
- Աշխատում է կատարել իր պարտավորությունները:

**Օտ. SI. 16. Աշակերտը հանդուրժողական է ուրիշների կարծիքների նկատմամբ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Չի ծաղրում, չի նվաստացնում համադասարանցիներին:

### Ուղղություն՝ մշակույթների երկխոսություն

(Այս փուլում աշակերտները չեն տիրապետում օտար լեզվից համապատասխան գիտելիքի՝ մշակույթի մասին խոսելու համար, այդ պատճառով է թույլ է տրվում դատողությունը վարել մայրենի լեզվով)

Օտ. SI. 17. Աշակերտը որոշում է օտարալեզու տեղեկությունը մշակույթի քննազավառից:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Գիտարկում է և ճանաչում նյութում տրված մշակութային ակներևությունները (պատկերագրողումներում արտացոլված հերոսներ, անվանի մարդիկ, շինություններ և այլն):

Օտ. SI. 18. Աշակերտը համեմատում է օտար և հայրենի սոցիոմշակութային միջավայրը:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Փոխում է սոցիոմշակութային համատեքստում ցուցաբերած կոնկրետ նմանությունները և տարբերությունները (տոնակատարություններ, հատուկ անուններ, ձեռածություն, հնչյուններ և այլն):

**II մակարդակ  
Չեռքբերվելիք արդյունքներ**

Ուղղություն			
Լսել	Կարդալ	Գրել	Խոսել
<p>Օտ.ՏԻԻ. 1. Աշակերտը հասկանում է ուսուցչի ցուցումները և վարժությունների հրահանգները:</p> <p>Օտ.ՏԻԻ. 2. Աշակերտը հասկանում է պատկերագրող փոքր երկխոսությունը:</p> <p>Օտ.ՏԻԻ. 3. Աշակերտը հասկանում է փոքր չափսի նկարագրական/նարատիվ բնույթի պատկերագրող տեքստը:</p> <p>Օտ.ՏԻԻ. 4. Աշակերտը ձեռք է բերում ունկնդրման համար անհրաժեշտ հմտություն-կարողություններ:</p> <p>Օտ.ՏԻԻ. 5. Աշակերտն օգտագործում է համապատասխան ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:</p>	<p>Օտ.ՏԻԻ. 6. Աշակերտը ձեռք է բերում կարդալու համար պարտադիր հմտություն-կարողություններ:</p> <p>Օտ.ՏԻԻ. 7. Աշակերտը կարդում է և հասկանում փոքր տեքստը:</p> <p>Օտ.ՏԻԻ. 8. Աշակերտը գտնում է կոնկրետ տեղեկություն պրագմատիկ բնույթի մանկական տեղեկատվական տեքստում (օրինակ՝ դասացուցակ, օրվա աշխատակարգ, մանկական հեռուստահաղորդումների ծրագիր, մանկական կատալոգ և այլն ), պարզ թղթակցության մեջ (բացիկ, տեղեկագիր):</p> <p>Օտ.ՏԻԻ. 9. Աշակերտը ձեռք է բերում բարձրաձայն ընթերցման տարրական կարողություն:</p> <p>Օտ.ՏԻԻ. 10. Աշակերտը կիրառում է կարդալու ռազմավարություն:</p>	<p>Օտ.ՏԻԻ. 11. Աշակերտն արտագրում է բառեր, նախադասություններ:</p> <p>Օտ.ՏԻԻ. 12. Աշակերտն ըստ նմուշների գրում է փոքր տեքստեր:</p>	<p>Օտ.ՏԻԻ. 13. Աշակերտը ձեռք է բերում խոսելու համար պարտադիր հմտություն-կարողություններ:</p> <p>Օտ.ՏԻԻ. 14. Աշակերտը մասնակցում է պարզ հաղորդակցության:</p> <p>Օտ.ՏԻԻ. 15. Աշակերտը նկարագրում է պատկերագրողումները:</p> <p>Օտ.ՏԻԻ. 16. Աշակերտն օգտագործում է փոխհատուցման միջոցներ:</p>

Ուղղություն.		
Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն	Ուսանման ուսուցում
<p>Օտ.ՏԻ. 17. Աշակերտը ճանաչում է տեղեկությունը մշակույթի բնագավառից:</p> <p>Օտ.ՏԻ. 18. Աշակերտն իրար է համեմատում օտար և հայրենի մշակութային, սոցիոմշակութային միջավայրը:</p>	<p>Օտ.ՏԻ. 19. Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ համադասարանցիների նկարների ցուցահանդեսի կազմակերպում, բեմադրություն ներկայացնել, արտասահմանյան խոհանոցը ծանոթացնել ուրիշների և այլն):</p>	<p>Օտ. ՏԻ. 20. Աշակերտը կազմակերպում է ուսումնական գործունեություն:</p> <p>Օտ. ՏԻ. 21. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացին:</p> <p>Օտ. ՏԻ. 22. Աշակերտն օգտագործում է գոյություն ունեցած ռեսուրսները և ստեղծում գործիքներ նոր գործունեության համար:</p> <p>Օտ. ՏԻ. 23. Աշակերտն օգտագործում է ռեսուրսներ ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:</p> <p>Օտ. ՏԻ. 24. Աշակերտն ունի հիմնափոխ վերաբերմունք խոչընդոտների նկատմամբ:</p> <p>Օտ. ՏԻ. 25. Աշակերտն օգտագործում է տարբեր միջոցներ բառապաշարի յուրացման համար:</p> <p>Օտ. ՏԻ. 26. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների և ուսուցչի հետ:</p> <p>Օտ. ՏԻ. 27. Աշակերտը համագործակցում է խմբի անդամների հետ:</p>

## Ուսանման արդյունքները և ստուգիչները

### Ուղղություն՝ ունկնդրում

*(Լսելու կարողության զարգացման համար օգտագործվում են ուսուցողական\* լսանիղճներ, որտեղ տեքստերը պարզ և դանդաղ են լսվում)*

#### Օտ. SII. 1. Աշակերտը հասկանում է ուսուցչի ցուցումները և վարժությունների հրահանգները:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Համապատասխանաբար է արձագանքում ուսուցչի ցուցումներին:
- Կատարում է վարժություն:

#### Օտ.ՄII. 2. Աշակերտը հասկանում է պատկերազարդ փոքր երկխոսությունը:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է գրույցի թեման, համատեքստը (բակում, խանութում, դասարանում):
- Երկխոսությունից դուրս է բերում կոնկրետ մանրամասներ (ով, երբ, որքան, որտեղ, ինչպիսի և այլն):
- Արտահայտած հույզերը տարբերում է հնչերանգով:
- Տարբերում է հարգալից և մտերմական ձևերը:

#### Օտ. SII. 3. Աշակերտը հասկանում է փոքր չափսի նկարագրական/ մարատիվ բնույթի պատկերազարդ տեքստը:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է նկարագրած հերոսին, կենդանին, առարկան՝ տարբեր նշանների համաձայն (գտնվելու վայր, չափս, գույն, ձև, քանակ և այլն):
- Անվանում է հերոսներին:
- Որոշում է նրանց զգացումները, հուզական վերաբերմունքները (օրինակ՝ *վախենում է, ուրախ է, ցավում է, մրսում է*):
- Որոշում է հերոսների գործողությունները (ով ինչ է անում):
- Որոշում է խոսակցին (ում է պատկանում ասածը):
- Որոշում է պատմության զարգացման փուլերը (ինչպես սկսվեց, ինչ տեղի ունեցավ, ինչպես ավարտվեց):
- Ելնելով հերոսների պահվածքից՝ եզրակացություն է անում նրանց բնավորության, հատկությունների մասին (օրինակ՝ *բարի է, չար է, ժլատ է, համարձակ է, վախկոտ է, ծույլ է*):

2009

- Երևույթների հաջորդականության համաձայն է տեղավորում, համարակալում և կարգերը:
- Տեքստը մշակելուց հետո, ուսուցչի պատմածի համաձայն իրականացնում է պատմության բեմականացում:
- Ստեղծում է տեքստի պատկերազարդումներ:

**Օտ. SII. 4. Աշակերտը ձեռք է բերում ունկնդրման համար անհրաժեշտ հմտություն-կարողություններ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ճանաչում է օտար լեզվին բնորոշ հնչյունները:
- Հասկանում է և դիմախաղ-ձեռածությանը, ռիթմիկ շարժումներով մարմնավորում է բանաստեղծություններ, երգեր, համրանքախաղեր:

### Լսելու ռազմավարություններ

**Օտ. SII. 5. Աշակերտն օգտագործում է համապատասխան ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Վերնագրի, պատկերազարդումների հիման վրա ենթադրություն է արտահայտում բովանդակության մասին:
- Անմիջապես խոսք, ձայնագրություն լսելիս օգտվում է ոչ բառային միջոցներից (ձայնի տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ):
- Աշխատում է ինքնուրույն որոշել անձանոթ բառերի, արտահայտությունների, նախադասությունների իմաստները՝ հիմնվելով ծանոթ տարրերի վրա (համատեքստ, հնչերանգ, պատկերազարդում . . .):
- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչ եղանակով կարողացավ լուծել լսած խնդիրը:
- Գիտում է օտար լեզվով մանկական հեռուստահաղորդումներ:

### Ուղղություն՝ ընթերցանություն

**Օտ. SII. 6. Աշակերտը ձեռք է բերում կարգալու համար պարտադիր հմտություն-կարողություններ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ազատ որոշում է ծանոթ և հաճախ օգտագործվող բառերը, ավտոմատ կերպով կապում ուղղագրական պատկերը հնչյունական պատկերի հետ:

- Ծանոթ բառերը բաժանում է տառերի:
- Բառի մեջ ճանաչում է վանկերը:
- Տառերը, վանկերը դարձնում է բառեր:
- Նախադասության, տեքստի մեջ ճանաչում է ծանոթ բառերը:
- Լսելիս մշակած տեքստում որոշում է տարբեր տարրեր (օրինակ՝ հերոսների անուններ, մեկ իմաստային դաշտի բառեր, արտահայտություններ և նրանց հեղինակներ, պատկերազարդմանը համապատասխան հատված և այլն):

**Օտ. SII. 7. Աշակերտը կարդում է և հասկանում փոքր տեքստը:**

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Վճռում է ընթերցանության խնդիրներ (նկար, գծապատկեր, աղյուսակ, անավարտ նկար)՝ հենվելով ոչ բառային միջոցների վրա (օրինակ՝ տեքստի համապատասխանեցում համապատասխան նկարին, աղյուսակում համապատասխան վանդակը նշել, տեքստի համաձայն ավարտել գծապատկերը, նկարը և այլն):

**Օտ. SII. 8. Աշակերտը գտնում է կոնկրետ տեղեկություն պրագմատիկ բնույթի մանկական տեղեկատվական տեքստում (օրինակ՝ դասացուցակ, օրվա աշխատակարգ, մանկական հեռուստահաղորդումների ծրագիր, մանկական կատալոգ և այլն ), պարզ թղթակցության մեջ (բացիկ, տեղեկագիր):**

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Որոշում է աղյուսակի տվյալները (օրինակ՝ *շաբաթվա օրեր, ժամ*):
- Աղյուսակից դուրս է գրում կոնկրետ տեղեկություն (օրինակ՝ *որ օրերին ունի նկարչության դաս*):
- Կատալոգից ճանաչում է այս կամ այն իրի գինը, տվյալները (օրինակ՝ *չափս, գույն, նյութ, ձև, եթե քարտագրացուցակ է՝ սերիան, հրատարակչությունը, հեղինակին, վերնագիրը, տարիքային խումբը և այլն*):
- Կատալոգից, հեռուստահաղորդումից ընտրում է ցանկալի իրը, հաղորդումը՝ որոշակի չափանիշների նախատեսումով:
- Բացիկում որոշում է հեղինակին, հասցեատիրոջը, կոնկրետ տեղեկությունը (ով, ինչ, որքան և այլն):

**Օտ. SII. 9. Աշակերտը ձեռք է բերում բարձրաձայն ընթերցման տարրական կարողություն:**

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Հնչյունավորում է տառերը, վանկերը:

- Հնչյունները կապում է համապատասխան տառերի, վանկերի հետ:
- Բարձրաձայն, վանկատելով կարդում է բառեր, արտահայտություններ:
- Բարձրաձայն և հասկանալի կարդում է սովորած բառեր, արտահայտություններ, նախադասություններ, փոքր տեքստեր:

### Կարդալու ռազմավարություններ

#### Օտ. SII. 10. Աշակերտը կիրառում է կարդալու ռազմավարություն:

*Արդյունքն ակնհայտ է, երբ աշակերտը.*

- Ինքնուրույն որոշում է անծանոթ բառերի, նախադասությունների նշանակությունը՝ ծանոթ տարրերի օգնությամբ (համատեքստ, պատկերազարդում, ծանոթ տառեր):
- Բովանդակության հասկանալի հեշտացնելու համար՝ օգտվում է ոչ բառային տարրերից (տպագրական ցուցումներ՝ խոշոր, թեք տառատեսակ, ընդգծումներ, կետադրական նշաններ, պատկերազարդումներ, տարբերանշան և այլն):
- Պատկերազարդումների, նկարների վրա հիմնվելով՝ տեքստի վերաբերյալ ենթադրություն է արտահայտում մայրենի լեզվով:
- Տարբեր տեսակի տեքստեր համեմատում է միմյանց՝ ըստ տեքստի կառուցվածքային կազմակերպման (օրինակ՝ կատալոգը և հեռուստաձայնագիրը), անվանում է տարբերությունները, նմանությունները (օրինակ՝ կատալոգում նկարներ են և տեղեկություններն էլ հենց այդտեղ են տեղադրված, իսկ հեռուստաձայնագրում՝ ոչ, հեռուստաձայնագրում թվարկումը ժամերի համաձայն է, իսկ կատալոգում ժամ ընդհանրապես չի մատնանշված և այլն):
- Կոնկրետ տեղեկության հայթայթման նպատակով ամբողջությամբ ուսումնասիրում է տեքստը, նրա բառային և ոչ բառային կազմակերպող տարրերը (վերնագիր, խորագիր, պատկերազարդում, մակագրություն, պարբերություն, սյունակ, տարբերանշան, տպագրական բնութագրիչներ, օրինակ՝ խոշոր տառատեսակ և այլն) և դրանք օգտագործում է որպես հենակետ:
- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչ ճանապարհով կարողացավ լուծել ընթերցանության այս կամ այն խնդիրը, համեմատում է ուրիշների ընտրած միջոցը և եզրակացություն է անում նրա վերաբերյալ, թե որ մոտեցումն էր ավելի համապատասխանեցված, արդյունավետ և ինչու:



## Ուղղություն՝ գրավոր խոսք

**Օտ. SII. 11. Աշակերտն արտագրում է բառեր, նախադասություններ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ձեռքի ճիշտ շարժումով գրում է բառերը, պահպանում է գծային համակարգում տառերի տեղադրման սկզբունքը:
- Գրածից կամ տպագիր աղբյուրից արտագրում է բառերը, նախադասությունները, պահպանում է տառերի միացման կանոնները:

**Օտ. SII. 12. Աշակերտն ըստ նմուշների գրում է փոքր տեքստեր:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Տվյալ կաղապարը լրացնում է տարբեր բովանդակությամբ (օրինակ՝ խաղալիքների կատալոգում տրված գնդակից տարբեր նկար է նկարում և մակագրում տարբեր տվյալներով՝ գույն, չափս, նյութ, զին):
- Նմուշի համաձայն գրում է բացիկ:
- Լրացնում է տեքստում պակասող տեղեկությունը:
- Լրացնում է դասացուցակը, օրվա աշխատակարգը, հարցարան անձնական տվյալներով:

## Ուղղություն՝ խոսողություն

**Օտ. SII. 13. Աշակերտը ձեռք է բերում խոսելու համար պարտադիր հմտություն-կարողություններ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Աշխատում է ճիշտ արտասանել օտար լեզվին բնորոշ հնչյունները:
- Աշխատում է ճիշտ և հստակ արտասանել ծանոթ բառեր, արտահայտություններ, բառախաղեր:
- Բանավոր արտասանում է բանաստեղծություններ, համրանքախաղեր, կատարում է երգեր:
- Բանավոր խաղարկում է պարզ երկխոսություններ և տեսարաններ:
- Տեքստերն արտաբերելիս պահպանում է հնչերանգներ, ռիթմեր, նմանակում է հերոսների ձայնի տեմբրին:
- Տեքստերի բովանդակությունն համապատասխանաբար է հարմարեցնում ոչ բառային խոսքին (*դիմախաղին, ձեռածությանը, ռիթմիկ շարժումներին*):

**Օտ. SII. 14. Աշակերտը մասնակցում է պարզ հաղորդակցության:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Տարրական անհրաժեշտությունների համար օտար լեզվով դիմում է ուսուցչին,

համադասարանցիներին (չհասկացա, տուր, ժամանակավորապես տուր, չունեն, մոռացա և այլն):

- Հարցեր է առաջադրում և պատասխանում է կամ խնդրանք է արտահայտում՝ կապված դասարանական իրավիճակի հետ (օրինակ՝ *որտե՞ղ է գիրքը: Պայտասկում է, սեղանի վրա է, տետրի մոտ է դրված և այլն*):
- Իրեն ծանոթ քեմատիկայով հարցեր է առաջադրում և պատասխանում է (օրինակ՝ *որտեղ ինչ է դրված, ով ինչ է հագել, ով երբ է ուտում, ով ինչ է անում, ով ինչ է հավանում, ինչ է ուզում, ում ինչ է հետաքրքիր և այլն*):
- Պատասխանում է տեքստի բովանդակության շուրջ առաջադրած հարցերին (օրինակ՝ *ինչ ունի, ով ինչ նվիրեց, ինչ գույնի, որքան, ինչպիսի, երբ գնաց, ուր գնաց, ով ինչ տվեց և այլն*):

**Օտ. SII. 15. Աշակերտը նկարագրում է պատկերագրողումները:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Անվանում է հերոսին, կենդանին, առարկան:
- Դրանք նկարագրում է տարբեր հատկանիշների համաձայն (գտնվելու վայրը, չափսը, քանակը, գույնը և այլն):
- Անվանում է գործողությունները:

### Խոսելու ռազմավարություններ

**Օտ. SII. 16. Աշակերտն օգտագործում է փոխհատուցման միջոցներ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Լեզվական պակասի դեպքում դիմում է տարբեր ոչ բառային միջոցների (դիմախաղ, ձեռածություն, մատնանշում):
- Օգնություն է խնդրում ուսուցչից կամ համադասարանցուց (մայրենի լեզվով):

### Ուղղություն՝ մշակույթների երկխոսություն

(Այս փուլում աշակերտները չեն տիրապետում օտար լեզվից համապատասխան գիտելիքի՝ մշակույթի մասին խոսելու համար, այդ պատճառով է թույլ է տրվում դատողությունը վարել մայրենի լեզվով)

**Օտ. SII. 17. Աշակերտը որոշում է օտարալեզու տեղեկությունը մշակույթի բնագավառից:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Դիտարկում է և ճանաչում նյութում, պատկերագրողումների վրա տրված մշակութային, խորհրդանշային, կենցաղային իրողություններ:

Օտ. SII. 18. Աշակերտը համեմատում է օտար և հայրենի սոցիոմշակութային միջավայրը:

*Արդյունքն ակնհերև է, երբ աշակերտը.*

- Գտնում է սոցիոմշակութային համատեքստում ցուցաբերած կոնկրետ նմանությունները և տարբերությունները (տոնակատարություններ, հատուկ անուններ, ձեռածություն, հնչյուններ և այլն):

### Ուղղություն՝ օտար լեզվի գործնական կիրառություն

Օտ. SII. 19. Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ համադասարանցիների նկարների ցուցահանդեսի կազմակերպում, բեմադրություն ներկայացնել, արտասահմանյան խոհանոցը ծանոթացնել ուրիշների և այլն):

*Արդյունքն ակնհերև է, երբ աշակերտը.*

- Ուսուցչի հետ միասին ձևակերպում են նախագծի հաջող իրականացման չափանիշներ:
- Թիմի անդամները ուսուցչի հետ պլանավորում են նախագծի իրականացման փուլեր:
- Թիմի անդամները ուսուցչի օգնությամբ սահմանում են և բաշխում գործառույթները:
- Թիմի յուրաքանչյուր անդամ կատարում է իրեն բաժին հասած գործառույթը:
- Ուսուցչի, ծնողի կամ այլ անձի օգնությամբ գտնում են համապատասխան ռեսուրսներ:
- Թիմի անդամները ուսուցչի օգնությամբ ընտրում են և մշակում հայթայթած նյութը:
- Ուսուցչի օգնությամբ կատարելագործում են և ավարտում նախագիծը:

### Ուղղություն՝ ուսանման ուսուցում

Օտ. SII. 20. Աշակերտը կազմակերպում է ուսումնական գործունեությունը:

*Արդյունքն ակնհերև է, երբ աշակերտը.*

- Գրի է առնում հանձնարարությունները:
- Խնամում է և կարգավորում ուսումնական պարագաները:
- Բերում է անհրաժեշտ իրեր:
- Աշխատանքը բաժանում է փուլերի և պլանավորում է ինչպիսի հաջորդականությամբ կատարի այն:
- Պահպանում է ժամանակի լիմիտը ամեն տեսակ ակտիվությունների կատարման ժամանակ:

**Օտ. SII.21. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացին:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Հաճույքով լրացնում է ինքնագնահատման գծապատկերները:
- Հետաքրքրվում է գնահատման արդյունքներով:
- Հաճույքով մասնակցում է ակտիվություններին:
- Մատնանշում է որոշ թերությունների ուղղման հնարավոր ուղիներ (օրինակ՝ ինչպես վարվի, որ նոր բառերը մտապահի) և աշխատում է կարգավորել դրանք:
- Կռահում է և նշում իր և ուրիշների սխալները:

**Օտ. SII. 22. Աշակերտն օգտագործում է գոյություն ունեցած ռեսուրսները և ստեղծում գործիքներ նոր գործունեության համար:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Օգտագործում է դասագրքի ցանկը, բառարանը, նմուշները և այլն:
- Օգտագործում է դասագրքի պատկերազարդումները, դասասենյակի որոշ դիդակտիկ նյութեր:
- Ստեղծում է օպերատիվ ռեսուրսներ և օգտագործում դրանք (քարտ, լոտո, նկար և այլն):

**Օտ. SII.23. Աշակերտն օգտագործում է ռեսուրսներ ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները (բառարան, կառուցվածքային նմուշներ, քերականական տեղեկատու, պատկերազարդումներ և այլն):
- Տեղեկություններ է հայթայթում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսներում (դասագրքի ակներևություններ, բառարան, դպրոցի, գյուղի, քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրագեկ անձ, ինտերնետ և այլն):
- Հայթայթում է տեղեկություններ, ուսումնական նյութ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) միջոցով:
- Կիրառում է ՏՀՏ այս կամ այն նյութը, տեքստը ստեղծելու կամ մշակելու համար:

**Օտ. SII.24. Աշակերտն ունի հիմնափոխ վերաբերմունք խոչընդոտների նկատմամբ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Չի խուսափում սխալներ թույլ տալուց:
- Հարցեր է առաջադրում, երբ որևէ բան չի հասկանում:

- Օգնություն է խնդրում, երբ դժվարության է հանդիպում:
- Համարձակվում է արտահայտել իր կարծիքը, տեսակետը:

**Օտ. SII. 25. Աշակերտն օգտագործում է տարբեր եղանակներ բառապաշարի յուրացման համար:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Կիրառում է մտապահման տարբեր եղանակներ (բարձրաձայն կրկնություն, մի քանի անգամ ընթերցել կամ գրել, զուգորդություն նկարի, շարժման, որևէ իրավիճակի հետ):
- Բառային նյութը դասակարգում է երեք չափանիշի համաձայն՝ լավ գիտեն, վատ գիտեն, չգիտեն:
- Կրկնում է անցած բառապաշարը:

**Օտ. SII. 26. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների և ուսուցչի հետ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Չի միջամտում ուրիշի պատասխանին:
- Հասակակիցներին օգնում է այն հարցերում, որոնցից ինքն ուժեղ է:
- Իր գույգի հետ վճռում է առաջադրված խնդիրը:
- Իր գույգի հետ վարժվում է ինտերակտիվում:
- Կոնկրետ նշում է թույլ տրված սխալները:

**Օտ. SII. 27. Աշակերտը համագործակցում է խմբի անդամների հետ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Կազմում է խմբային ակտիվության պարզ կանոններ և աշխատում է պահպանել դրանք:
- Թիմակիցների հետ կարողանում է բաժանել գործառույթները, աշխատանքը: Ըստ հնարավորինս օգնում է խմբի անդամներին:



Օտար լեզվի չափորոշիչ  
Բազային և միջնակարգ աստիճանների համար  
I մակարդակ  
Ձեռքբերվելիք արդյունքներ

Ուղղություն.		
Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ.Բ-Մ. 1. Աշակերտը լսում է և հասկանում միջազգային բառեր, պարզ արտահայտություններ:</p> <p>Օտ.Բ-Մ. 2. Աշակերտը տիրապետում է օտար լեզվին բնորոշ հնչակարգային համակարգին:</p> <p>Օտ.Բ-Մ. 3. Աշակերտը լսում է և հասկանում պարզ ցուցումները և վարժության հրահանգը:</p> <p>Օտ.Բ-Մ. 4. Աշակերտը լսում է և հասկանում ծանոթ թեմատիկայով կազմած փոքր չափսի տեքստը (երկխոսություն, մենախոսություն):</p> <p>Օտ.Բ-Մ. 5. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ բովանդակության հասկանալը հեշտացնելու համար:</p>	<p>Օտ.Բ-Մ. 6. Աշակերտը կարդում է այբուբենը:</p> <p>Օտ.Բ-Մ. 7. Աշակերտը տիրապետում է բարձրաձայն ընթերցանության տարրական կարողության:</p> <p>Օտ.Բ-Մ. 8. Աշակերտը կարդում է և հասկանում հանրային մակագրությունները (զգուշացնող մակագրություն, կանգառի, փողոցի անվանումը, խանութի, հանրային շենքի անվանումը և այլն ):</p> <p>Օտ.Մ. 9. Աշակերտը կարդում է և հասկանում վարժության պայմանը:</p> <p>Օտ.Բ-Մ. 10. Աշակերտը կարդում է պաշտոնական, վարչական բնույթի փաստաթղթեր, ծառայացուցակներ (շաբաթվա աշխատակարգ, դասացուցակ, հարցաթերթ, այցեքարտ, ինքնության վկայական, տոմս և այլն):</p>	<p>Օտ.Բ-Մ. 16. Աշակերտը գրում է տառեր, բառեր, նախադասություններ:</p> <p>Օտ.Բ-Մ. 17. Աշակերտը լրացնում է դասացուցակը, շաբաթվա, օրվա աշխատակարգը, հարցաթերթ:</p> <p>Օտ.Բ-Մ. 18. Աշակերտը նմուշի համաձայն բացիկ է գրում:</p> <p>Օտ.Բ-Մ. 19. Աշակերտը նմուշի համաձայն գրում է պարզ կենցաղային բնույթի տեղեկատվական տեքստեր (կատալոգ, կերակրացանկ, խոհարարական բաղադրատոմս):</p> <p>Օտ.Բ-Մ. 20. Աշակերտը նմուշօրինակի համաձայն գրում է փոքր չափսի նկարագրական տեքստ:</p>

Ուղղություն.		
Լսել	Կարդալ	Գրել
	<p>Օտ.Բ-ՄԻ. 11. Աշակերտը կարդում և հասկանում է կենցաղային բնույթի տեղեկատվական տեքստը ա) կատալոգ, բ) ուղերթային պլան, գ) ճաշացուցակ, դ) խոհանոցային բաղադրատոմս:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 12. Աշակերտը կարդում և հասկանում է պարզ թղթակցությունը. տարբեր բնույթի բացիկներ (շնորհավորական, հրավիրատոմս, հրավերքի շնորհակալական և այլն), պարզ տեղեկագիր:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 13. Աշակերտը կարդում և հասկանում է փոքր չափսի պատմողական տեքստը:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 14. Աշակերտը ճանաչում է տեքստի կառուցվածքային բնութագրիչները և սովորած լեզվա-քերականական ձևեր:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 15. Աշակերտը բովանդակության հասկանալը հեշտացնելու նպատակով դիմում է տարբեր ռազմավարությունների:</p>	<p>Օտ.Բ-ՄԻ. 21. Աշակերտը պահպանում է գրավոր տեքստի կառուցվածքը, ձեռք է բերում տարրական լեզվա-քերականական հմտություն-կարողություններ և աշխատում է գործառական տեսակետից կիրառել դրանք:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 22. Աշակերտը դիմում է գրելու ռազմավարությունների՝ գրածի բարելավման նպատակով:</p>



Ուղղություն			
Խոսել	Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն	Ուսանման ուսուցում
<p>Օտ.Բ-Մ. 23. Աշակերտը տիրապետում է օտար լեզվի հնչակարգային համակարգին:</p> <p><i>Երկխոսություն</i></p> <p>Օտ.Բ-Մ. 24. Աշակերտը մասնակցում է պարզ ինտերակտիվի:</p> <p><i>Մենախոսություն</i></p> <p>Օտ.Բ-Մ. 25. Աշակերտը նկարագրում է միջավայրը:</p> <p>Օտ.Բ-Մ. 26. Աշակերտը ձեռք է բերում տարրական լեզվա-քերականական հմտություն-կարողություններ և աշխատում է դրանք կիրառել գործնականում:</p> <p>Օտ.Բ-Մ. 27. Աշակերտը դիմում է ռազմավարությունների՝ խոսելու կարողությանն օժանդակելու նպատակով:</p>	<p>Օտ.Բ-Մ. 28 Աշակերտը ճանաչում է տեղեկությունը մշակույթի բնագավառից:</p> <p>Օտ.Բ-Մ. 29 Աշակերտը հանդես է բերում հետաքրքրություն և դրսևորում հանդուրժող վերաբերմունք մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.Բ-Մ. 30 Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ խոհարարական բաղադրատոմսերի ժողովածու, դպրոցի աշակերտների նկարների, ձեռակերտ իրերի կատալոգ՝ կայքում տեղադրելու համար՝ ի ուշադրություն օտարալեզու աշակերտների, տարածաշրջանի տեսարժան վայրերի այցելության ուղերթ՝ օտարալեզու զբոսաշրջիկների համար և այլն ):</p>	<p>Օտ.Բ-Մ. 31 Աշակերտն ուսուցչի օգնությամբ կանխատեսում է կատարվելիք հանձնարարության պահանջները:</p> <p>Օտ.Բ-Մ. 32. Աշակերտը ձեռք է բերում ռազմավարական կարողություններ՝ հաջող ուսուցման ապահովման համար:</p> <p>Օտ.Բ-Մ. 33. Աշակերտն օգտագործում է ռեսուրսները ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:</p> <p>Օտ.Բ-Մ. 34. Աշակերտը դիմում է տարբեր միջոցների բառապաշարի ամրապնդման և հարստացման համար:</p> <p>Օտ.Բ-Մ. 35. Աշակերտը կիրառում է ռազմավարություններ՝ քերականության հեշտ յուրացմանն օժանդակելու նպատակով (հեշտացնելու համար):</p> <p>Օտ.Բ-Մ. 36. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների, իր գույզի հետ՝ արդյունքների բարելավման նպատակով:</p>

**Ուղղություն՝ ունկնդրում**

*(Լսելու կարողության զարգացման համար օգտագործվում են ուսուցողական\* և կիսասավթենտային լսանքիզներ, որտեղ տեքստերը պարզ և դանդաղ են լսվում)*

**Օտ.Բ-ՄԻ.1. Աշակերտը լսում է և հասկանում միջազգային բառեր, պարզ արտահայտություններ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Բառերի հոսքում տարբերում է առանձին բառեր, արտահայտություններ:
- Որոշում է արտահայտությունների նշանակությունը:

**Օտ.Բ-ՄԻ. 2. Աշակերտը տիրապետում է օտար լեզվին բնորոշ հնչակարգային համակարգին:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Տարբերում է միանման հնչողությամբ հնչյունները, բառերը:

**Օտ.Բ-ՄԻ. 3. Աշակերտը լսում է և հասկանում պարզ ցուցումները և վարժության հրահանգը:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Համապատասխանաբար է արձագանքում ուսուցիչների ցուցումներին:
- Կատարում է վարժություններ:

**Օտ.Բ-ՄԻ.4. Աշակերտը լսում է և հասկանում ծանոթ թեմատիկայով կազմած փոքր չափսի տեքստը (երկխոսություն, մենախոսություն):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է թեման (հերոսներ, գրուցակիցներ, իրադարձություններ և այլն):
- Տեքստից հավաքում է փաստական տեղեկությունները (ով, որտեղ, երբ, որքան, որ, ինչպիսի և այլն):
- Երկխոսության մեջ տարբերում է խոսքի մտերմական և հարգալից ձևերը:

## Լսելու ռազմավարություններ

**Օտ.Բ-ՄԻ. 5. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ բովանդակության հասկանալի հեշտացնելու համար:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Նկարների, պատկերազարդումների հիման վրա ենթադրություն է արտահայտում բովանդակության մասին:
- Կենդանի խոսքը, ձայնագրությունը հասկանալու համար օգտվում է ոչ բառային միջոցներից (ձայնի տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտեր):
- Ինքնուրույն որոշում է անձանոթ բառերի, արտահայտությունների, նախադասությունների իմաստները՝ հիմնվելով ծանոթ տարրերի վրա (համատեքստ, հնչերանգ, պատկերազարդում . . . ):
- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչ եղանակով կարողացավ լուծել այս կամ այն ունկնդրվելիք խնդիրը, համեմատում է ուրիշների ընտրած եղանակին և եզրակացություն է անում այն մասին, թե որ մոտեցումն էր ավելի հարմար, արդյունավետ և ինչու:
- Չհասկանալու դեպքում խնդրում է բացատրություններ, դանդաղ և հստակ արտասանել, կրկնել:

## Ուղղություն՝ ընթերցանություն

(Կարդալու կարողության զարգացման համար օգտագործվում են ուսուցողական\* և կիսաավթենտային տեքստեր)

**Օտ.Բ-ՄԻ. 6. Աշակերտը կարողում է այբուբենը:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Տարբերում է մեծատառերը և փոքրատառերը:
- Տարբերում է տպագիր և ձեռագիր տառերը:
- Որոշում է բոլոր մեծատառ և փոքրատառ տպագիր թե ձեռագիր տառերը, ճիշտ է արտասանում դրանք:

**Օտ.Բ-ՄԻ. 7. Աշակերտը տիրապետում է բարձրաձայն ընթերցանության տարրական կարողության:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Հնչյունավորում է տառեր, վանկեր:

- Հնչյունները կապում է համապատասխան տառերի, վանկերի հետ:
- Բարձրաձայն և պարզ կարդում է սովորած բառեր, արտահայտություններ, նախադասություններ, տեքստեր:

**Օտ.Բ-ՄԻ.8.** Աշակերտը կարդում է և հասկանում հանրային մակագրությունները (զգուշացնող մակագրություն, կանգառի, փողոցի անվանումը, ծանուփի, հանրային շենքի անվանումը և այլն ):

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է մատնանշված տեղեկությունը:

**Օտ.Բ-ՄԻ. 9.** Աշակերտը կարդում է և հասկանում վարժության պայմանը:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է և կատարում ցուցումները:

**Օտ.Բ-ՄԻ.10.** Աշակերտը կարդում է պաշտոնական, վարչական բնույթի փաստաթղթեր, ծառայացուցակներ (շաբաթվա աշխատակարգ, դասացուցակ, հարցաթերթ, այցեքարտ, ինքնության վկայական, տոմս և այլն):

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է ցուցանիշները:
- Տեքստից հավաքում է կոնկրետ տեղեկությունը:

**Օտ.Բ-ՄԻ. 11.** Աշակերտը կարդում և հասկանում է կենցաղային բնույթի տեղեկատվական տեքստը:

**ա) Կատալոգ**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է իրի, առարկայի հատկությունները (քաշ, կշիռ, գույն, նյութ):
- Ճանաչում է գինը:

**բ) Ուղերթային պլան**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ճանաչում է պայմանական նշանները:
- Ճանաչում է մակագրությունները:

**գ) Ճաշացուցակ**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ճանաչում է խորագրերը (տաք, սառը կերակրատեսակներ, աղանդեր, խմիչքներ և այլն):
- Ճանաչում է ճաշատեսակները, խմիչքները:
- Ճանաչում է նրանց բաղադրամասերը և գինը:

#### դ) Խոհանոցային բաղադրատոմս

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Ճանաչում է առանձին բաղադրամասերը:
- Ճանաչում է բաղադրամասերի նշված քանակը:
- Ճանաչում է առանձին գործողություններ (կլպել, խառնել, լցնել և այլն):

#### Օտ.Բ-ՄԻ. 12. Աշակերտը կարդում և հասկանում է պարզ թղթակցությունը. տարբեր բնույթի բացիկներ (շնորհավորական, հրավիրատոմս, հրավերքի շնորհակալական և այլն), պարզ տեղեկագիր:

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Որոշում է հեղինակի, հասցեատիրոջ ինքնությունը:
- Որոշում է ուղարկելու ամսաթիվը և հեղինակի, հասցեատիրոջ հասցեն:
- Որոշում է թղթակցության նպատակը (Ծնունդի, ծննդյան օրվա, հրավերք և այլն շնորհավորանք):
- Որոշում է փաստական տեղեկությունը (երբ, որտեղ, ով, ինչու և այլն):

#### Օտ.Բ-ՄԻ. 13. Աշակերտը կարդում և հասկանում է փոքր չափսի պատմողական տեքստը:

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Որոշում է գործող անձանց:
- Որոշում է գործող անձանց հատկանիշները:
- Որոշում է գործողությունները, իրադարձությունները:
- Որոշում է գործողությունների ժամանակը և տեղը:

#### Օտ.Բ-ՄԻ. 14. Աշակերտը ճանաչում է տեքստի կառուցվածքային բնութագրիչները և սովորած լեզվա-քերականական ձևեր:

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Միմյանցից տարբերում է տարբեր տեսակի տեքստերի կառուցվածքային կազմակերպման առանձնահատկությունները: (օրինակ՝ կատալոգներ կերակրացանկից):

- Ճանաչում է տեքստի կառուցվածքային կազմակերպման առանձնահատկությունները (օրինակ՝ ունի արդյոք վերնագիր, ենթավերնագիր, խորագրեր, նշված է արդյոք հեղինակը կամ հասցեատերը, տեքստը սյունակներով է կազմակերպված, թե պարբերություններով և այլն):
- Ճանաչում է հաղորդակցական իրավիճակին համապատասխան արտահայտությունները, կադապարային ձևերը, լեզվական կառույցները (օրինակ՝ դիմելու, հրաժեշտի բանաձևը թղթակցության մեջ):
- Ճանաչում է ներկա, անցյալ ժամանակ արտահայտող բայաձևերը, մակբայները:
- Տարբերում է սահմանական և հրամայական եղանակներ արտահայտող բայաձևերը:
- Ճանաչում է տեղ և ժամանակ արտահայտող պարզ լեզվական միջոցները (մակբայ, բառակապակցություն, նախդիր):
- Ճանաչում է շարահյուսական հարաբերությունները պարզ նախադասությունների անդամների միջև (օրինակ՝ գոյական և թվական անունների համաձայնությունը թվով):

### Կարդալու ռազմավարություններ

#### Օտ.Բ-Մ. 15. Աշակերտը բովանդակության հասկանալը հեշտացնելու նպատակով դիմում է տարբեր ռազմավարությունների:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Կոնկրետ տեղեկության հայթայթման նպատակով ամբողջությամբ ուսումնասիրում է տեքստը, նրա բառային և ոչ բառային կազմակերպող տարրերը (վերնագիր, խորագիր, պատկերազարդում, մակագրություն, պարբերություն, սյունակ, տարբերանշան, տպագրական բնութագրիչներ, օրինակ՝ խոշոր տառատեսակ և այլն) և դրանք օգտագործում է որպես հենակետ:
- Ինքնուրույն որոշում է անձանոթ բառերի, նախադասությունների, արտահայտությունների նշանակությունը՝ ծանոթ տարրերի օգնությամբ (համատեքստ, պատկերազարդում, ծանոթ հիմք, մայրենի լեզվում հաստատված օտար բառեր, օրինակ՝ բանան, տրանսպորտ և այլն):
- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչ ճանապարհով կարողացավ լուծել ընթերցանության այս կամ այն խնդիրը, համեմատում է ուրիշների ընտրած միջոցը և եզրակացություն է անում նրա վերաբերյալ, թե որ մոտեցումն էր ավելի համապատասխանեցված, արդյունավետ և ինչու:
- Հիշում է, թե սովորել է արդյոք նման տեքստեր այլ լեզուների ուսումնասիրման ժամանակ և այլ առարկաներից և կիրառել է արդյոք այսպիսի ռազմավարություններ:

- Սահմանում է, թե ինչ տիպի տեքստեր յուրացնելիս կարելի է օգտագործել նման ռազմավարություններ:

### Ուղղություն՝ գրավոր խոսք

**Օտ.Բ-ՄԻ. 16. Աշակերտը գրում է տառեր, բառեր, նախադասություններ:**

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Ձեռքի ճիշտ շարժումով գրում է այբուբենի բոլոր մեծատառերը և փոքրատառերը:
- Գրածից կամ տպագիր աղբյուրից արտագրում է բառերը և նախադասությունները, պահպանում է տառերի միացման կանոնները:

**Օտ.Բ-ՄԻ. 17. Աշակերտը լրացնում է դասացուցակը, շաբաթվա, օրվա աշխատակարգը, հարցաթերթ:**

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Տվյալները, գործունեությունները գրում է համապատասխան տեղում:

**Օտ.Բ-ՄԻ. 18. Աշակերտը նմուշի համաձայն բացիկ է գրում:**

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Պահպանում է թղթակցության պաշտոնական կողմը (ղիմում, ստորագրություն, հասցե, ամսաթիվ):
- Ձևակերպում է թղթակցության նպատակը (ծննդյան օրվա, Ծնունդի, Նոր տարվա շնորհավորանք և այլն):

**Օտ.Բ-ՄԻ. 19. Աշակերտը նմուշի համաձայն գրում է պարզ կենցաղային բնույթի տեղեկատվական տեքստեր (կատալոգ, կերակրացանկ, խոհարարական բաղադրատոմս):**

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Տվյալ կաղապարը լրացնում է տարբեր բովանդակությամբ (օրինակ՝ չափահասների համար հատկացված քարտագրացուցակի համաձայն գրում է մանկական քարտագրացուցակ, ձմեռվա հագուստի կատալոգի համաձայն՝ ամառայինի):

**Օտ.Բ-ՄԻ. 20. Աշակերտը նմուշօրինակի համաձայն գրում է փոքր չափսի նկարագրական տեքստ:**

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Նկարագրում է մարդուն (աչքի գույն, մազի գույն, հասակ, քաշ):

- Նկարագրում է առարկան, իրը տարբեր պարամետրերի համաձայն (գույն, չափս, բաղադրություն, ձև, դիրք և այլն):
- Նկարագրում է բնական տեղը (դիրքը, սենյակների, իրերի դասավորությունը և այլն):
- Նկարագրում է ամենօրյա գործունեություններ:
- Նկարագրում է արվեստի հուշարձան (անվանում, դարաշրջան, գտնվելու վայրը, տարբեր բնութագրիչներ):
- Անում է դրական և բացասական գնահատումներ:

**Օտ.Բ-Մ. 21. Աշակերտը պահպանում է գրավոր տեքստի կառուցվածքը, ձեռք է բերում տարրական լեզվա-քերականական հմտություն-կարողություններ և աշխատում է գործառական տեսակետից կիրառել դրանք:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Օգտագործում է տեղ արտահայտող պարզ լեզվական միջոցներ (օրինակ՝ նախդիր, մակբայ):
- Պահպանում է տարրական շարահյուսական հարաբերություններ նախադասության անդամների միջև ( օրինակ՝ համաձայնեցնում է գոյական և ածական անունները թվով, սեռով, բայը համաձայնեցնում է դեմքով և թվով):
- Ցուցումներ անելիս՝ ընտրում է բայի համապատասխան ձևեր:
- Պահպանում է բառերի կարգը հաստատական, ժխտական և հարցական բովանդակություն պարունակող պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասություններում:
- Պահպանում է ուղղագրական կանոնները, ճիշտ է օգտագործում կետադրական նշանները:

### Գրելու ռազմավարություններ

**Օտ.Բ-Մ. 22. Աշակերտը դիմում է գրելու ռազմավարությունների՝ գրածի բարելավման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Հայթայթում է և պատրաստում անհրաժեշտ ուսումնական ռեսուրսներ (բառարան, նմուշ, անհրաժեշտ լեզվական նյութ, քերականական տեղեկատու և այլն):
- Գրում է սևագիր:
- Վերընթերցում է սևագիրը, ուսումնական նյութի վրա հիմնվելով, ստուգում է գրածը և ուղղում սխալները:
- Մաքրագրում է գրածը:



## Ուղղություն՝ խոսողություն

**Օտ.Բ-ՄԻ. 23. Աշակերտը տիրապետում է օտար լեզվի հնչակարգային համակարգին:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Հստակ կրկնում է հնչյունները, բառերը, արտահայտությունները:
- Երկխոսությունների, սկետչերի խաղարկման կամ փոքր տեքստերի ընթերցման ժամանակ աշխատում է պահպանել օտար լեզվին բնորոշ հնչերանգը, հնչողությունը:

## Երկխոսություն

**Օտ.Բ-ՄԻ. 24. Աշակերտը մասնակցում է պարզ ինտերակտիվի:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ծանոթ քեմատիկայով հարցեր է առաջադրում և պատասխանում է այդպիսի հարցերի (ընտանիք բնակատեղ, արձակուրդներ, ակտիվություններ, եղանակ, սիրելի իր, կենդանի և այլն):
- Մասնակցում է կեղծակերպած խաղերի (հանդիպում, ծանոթացում, սրճարանում պատվիրել ցանկացածը):
- Հեռախոսով խոսում է ամենօրյա իրավիճակների հետ կապված հարցերով (օրինակ՝ դասացուցակ, հանդիպման նշանակում և այլն):
- Համապատասխանաբար է արձագանքում խոսակցի ռեպլիկներին:
- Աշխատում է օտար լեզվով հաղորդել ասելիքը՝ ուսումնական գործընթացի հետ կապված հիմնախնդիրների վերաբերյալ («Չհասկացա», «Ինչ է նշանակում սա», «Տեսրը տանը մոռացա», «Մատիտը տուր» և այլն):

## Մենախոսություն

**Օտ.Բ-ՄԻ. 25. Աշակերտը նկարագրում է միջավայրը:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Պարզ արտահայտություններով նկարագրում է իր բնակարանը, սենյակը:
- Խոսում է իր մասին, իր մերձավորների մասին (անձնական տվյալներ, ամենօրյա գործունեություն, նախասիրություններ և այլն):
- Նկարագրում է նկարը:

**Օտ.Բ-ՄԻ. 26. Աշակերտը ձեռք է բերում տարրական լեզվա-քերականական հմտություն-կարողություններ և աշխատում է դրանք կիրառել գործնականում:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ինտերակտիվում ընտրում է հաղորդակցական իրավիճակին համապատասխան ձևեր, կադապարներ, լեզվական կառույցներ:
- Ճիշտ է օգտագործում խոսքի հարգալից և մտերմական ձևերը:
- Համապատասխանաբար է օգտագործում տարբեր հնչերանգ ունեցող նախադասությունները (պատմողական, հարցական, բացականչական):
- Պահպանում է հնչերանգը տարբեր եղանակների նախադասությունների արտասանության ժամանակ:
- Օգտագործում է տեղ արտահայտող պարզ լեզվական միջոցներ:
- Պահպանում է տարրական շարահյուսական կապերը նախադասության անդամների միջև (բայի համապատասխան դեմք և թիվ):
- Տեղին է օգտագործում սովորած բառապաշարային միավորները:

### Բանավոր խոսքի ռազմավարություններ

**Օտ.Բ-ՄԻ. 27. Աշակերտը դիմում է ռազմավարությունների խոսողության կարողությանն օժանդակելու նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Հաղորդակցությունը վարելու համար օգտագործում է անհրաժեշտ ռեսուրսները (նմուշօրինակներ, նախադասություններ, արտահայտություններ, կադապարներ):
- Բառը մոռանալու կամ չգիտենալու դեպքում օգտագործում է փոխհատուցման միջոցներ (օրինակ՝ դիմախաղ, ձեռածություն, շրջասություն, նկարագրում է նկատի ունեցած առարկան կամ մատնանշում է, թե ինչում է օգտագործվում և այլն):
- Կռահում է և ուղղում իր կամ ուրիշի սխալները:

### Ուղղություն՝ մշակույթների երկխոսություն

**Օտ.Բ-ՄԻ.28 Աշակերտը ճանաչում է տեղեկությունը մշակույթի բնագավառից:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ուշադիր դիտում է և որոշում պատկերագարումներում, տեքստերում արտացոլած պետական խորհրդանշանները, մշակութային, կենցաղային իրողություններ (օրինակ՝ դրոշ, հուշարձան և այլն):

**Օտ.Բ-ՄԻ. 29 Աշակերտը հանդես է բերում հետաքրքրություն և դրսևորում հանդուրժողական վերաբերմունք մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է օտար մշակույթին բնորոշ վարվելաձևի կարգը և կեղծակերպական իրավիճակների խաղարկման ժամանակ պահպանում է օտար սոցիո-մշակույթին բնորոշ նորմերը:
- Մայրենի լեզվով հարցեր է առաջադրում, խնդրում է բացատրություն կոնկրետ սոցիո-մշակութային հարցերի շուրջ:
- Կոռեկտ արտահայտում է սեփական կարծիքը, տեսակետը, վերաբերմունքը՝ մշակութային առանձնահատկությունների մասին դատողություն անելիս:

**Ուղղություն՝ օտար լեզվի գործնական կիրառում**

**Օտ.Բ-ՄԻ. 30 Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ խոհարարական բաղադրատոմսերի ժողովածու, դպրոցի աշակերտների նկարների, ձեռակերտ իրերի կատալոգ՝ կայքում տեղադրելու համար՝ ի ուշադրություն օտարալեզու աշակերտների, տարածաշրջանի տեսարժան վայրերի այցելության ուղերթ՝ օտարալեզու գրոսաշրջիկների համար և այլն ):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ուսուցչի հետ միասին ձևակերպում են նախագծի հաջող իրականացման չափանիշներ:
- Թիմի անդամներն ինքնուրույն պլանավորում են նախագծի իրականացման փուլեր, այնուհետև թիմերը միմյանց հետ փոխանակում են իրենց կազմած պլանները, համեմատում, կատարելագործում:
- Ուսուցչի հետ որոշում են կատարման ժամկետները:
- Ուսուցչի օգնությամբ մոբիլիզացնում են գիտելիքը և կարողությունները, սահմանում են, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերեն նախանշած խնդիրների վճռման համար:
- Թիմի անդամները ուսուցչի օգնությամբ սահմանում են և բաշխում գործառույթները:
- Թիմի անդամները գտնում են, ընտրում և մշակում տեղեկություններ, իրականացնում են նախագիծը:
- Նախագծի պլանը, սևագիրը ներկայացնում են մեկ այլ խմբի:
- Դիտողությունները, մեկնաբանությունները նկատի առնելով՝ վերջնականապես բարելավում են և կատարում նախագիծը:

## Ուղղություն՝ ուսանման ուսուցում

**Օտ.Բ-Մ. 31 Աշակերտն ուսուցչի օգնությամբ կանխատեսում է կատարվելիք հանձնարարության պահանջները:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Մասնակցում է հանձնարարությունը հաջող իրականացնելու չափանիշների ձևակերպմանը:
- Առանձնացնում է հանձնարարության կատարման փուլեր:
- Մահմանում է այն գիտելիքը և կարողությունները, որոնց տիրապետում է և կօգտագործի հանձնարարության կատարման ժամանակ:
- Մահմանում է, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերի հանձնարարության կատարման համար:
- Որոշում է, թե ինչը հեշտ կանի, ինչից կդժվարանա, ինչում անհրաժեշտ կլինի օգնություն, խորհրդատվություն:

**Օտ.Բ-Մ. 32. Աշակերտը ձեռք է բերում ռազմավարական կարողություններ՝ հաջող ուսուցման ապահովման համար:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Անհրաժեշտության դեպքում խնդրում է օգնություն, խորհրդատվություն:
- Աշխատանքն ավարտելուց հետո ներկայացնում է կիրառած ռազմավարությունները, համեմատում է ուրիշների կիրառած ռազմավարություններին:
- Մասնակցում է կիրառած ռազմավարությունների արդյունավետության գնահատմանը:
- Համաձայնում է տարբերվող ռազմավարությունների փորձարկում-կիրառման:
- Համեմատում է տարբեր, այդ թվում նաև մայրենի լեզվի ուսանման ժամանակ ստացած փորձը միմյանց, որոշում է, թե որքանով պիտանի կլինի այս կամ այն ռազմավարությունը այլ լեզվի կամ առարկայի ուսանման գործընթացում:
- Վերլուծում է սխալների, թերությունների պատճառները:
- Մասնակցում է ինքնագնահատման և համագնահատման (աշակերտ-ուսուցիչը կամ աշակերտ-աշակերտը միմյանցից անկախ ստուգում են միևնույն աշխատանքը):
- Դիտարկելով արդյունքները՝ նշում է, թե որտեղ ունի առաջընթաց:
- Վերլուծում է հաջողության, թե անհաջողության պատճառները՝ դրանք հետագայում նկատի առնելու նպատակով:
- Անվանում է գործոնները և պատճառները, որոնք խանգարում են առաջընթացին (օրինակ՝ անուշադիր է, չի կրկնում նյութը, չի համարձակվում հարց առաջադրել,

վախենում է սխալ թույլ տալ և այլն):

- Անվանում է, թե ինչ կենսական իրավիճակում կարող է օգտագործել օտար լեզվից ստացած գիտելիքը և փորձը:

**Օտ.Բ-ՄԻ. 33. Աշակերտն օգտագործում է ռեսուրսները ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները (բառարան, կառուցվածքային նմուշներ, քերականական տեղեկատու, պատկերազարդումներ և այլն):
- Տեղեկություններ է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսներից (դասագրքի ակներև նյութ, բառարան, դպրոցի, գյուղի, քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրազեկ անձ, համացանց և այլն):
- Տեղեկություններ, ուսումնական նյութ է գտնում հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով:
- Օգտագործում է ՏՀՏ այս կամ այն նյութը, տեքստը ստեղծելու, մշակելու համար:

**Օտ.Բ-ՄԻ. 34. Աշակերտը դիմում է տարբեր միջոցների բառապաշարի ամրապնդման և հարստացման համար:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Միստեմատիկորեն կրկնում է անցած բառապաշարային նյութը:
- Որոշում է վատ յուրացրած բառապաշարային միավորները:
- Կիրառում է մտապահման տարբեր եղանակներ (մի քանի անգամ արտագրել, բարձրաձայն կրկնել, նույն հիմքով բառերի, հականշային, հոմանշային զույգերի խմբավորում, զուգորդություն, համատեքստի օգտագործում, խմբավորում թեմատիկայի համաձայն և այլն):

**Օտ.Բ-ՄԻ. 35. Աշակերտը կիրառում է ռազմավարություններ՝ քերականության հեշտ յուրացմանն օժանդակելու նպատակով (հեշտացնելու համար):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Կոնկրետ օրինակի դիտարկումով որոշում է քերականական կառույցները, կանոնները:
- Կիրառում է որոշած կառույցները, կանոնները տարբեր համատեքստերում:
- Միմյանց հետ համեմատում է մայրենի և օտար լեզվի քերականական կառույցները, օրինաչափությունները:
- Կիրառում է և ինքն էլ է ստեղծում գծապատկերներ, աղյուսակներ, կառուցվածքային նմուշօրինակներ:

Օտ.Բ-ՄԻ.36. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների, իր զույգի հետ՝ արդյունքների բարելավման նպատակով:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ոգևորում է զույգին, քիմակցին:
- Խնդրում է կամ առաջարկում է օգնություն:
- Կոնկրետ մատնանշում է ուրիշի թույլ տված սխալները:
- Մասնակցում է համագնահատման՝ արդյունքների բարելավման նպատակով:

**II մակարդակ  
Չեռքբերվելիք արդյունքներ**

Ուղղություն.		
Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ.Բ-ՄԻ. 1. Աշակերտը լսում և հասկանում է ուսուցչի ցուցումները և վարժությունների հրահանգները:</p> <p>Օտ. Բ-ՄԻ 2. Աշակերտը լսում է և հասկանում է փոքր չափսի նկարագրական/նարատիվ բնույթի պատկերագրող տեքստը:</p> <p>Օտ. Բ-ՄԻ 3. Աշակերտը լսում է և հասկանում տեղեկատվական լսածայնագրություններ. ա. եղանակի տեսություն, բ. մարզական լուրեր:</p> <p>Օտ. Բ-ՄԻ 4. Աշակերտը լսում է և հասկանում հասարակական հավաքի վայրերում արված հայտարարությունները:</p> <p>Օտ. Բ-ՄԻ 5. Աշակերտը լսում է և հասկանում ուղերթը:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 6. Աշակերտը օգտագործում է համապատասխան ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:</p>	<p>Օտ.Բ-ՄԻ. 7. Աշակերտը ձեռք է բերում բարձրաձայն ընթերցելու կարողություն:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 8. Աշակերտը կարդում է և հասկանում հանրային մակագրությունները (զգուշացնող մակագրություն, տեղեկություն վաճառքի-վարձակալության մասին, հուշատախտակ, տարբեր տեսակի ցուցանակներ և այլն):</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 9. Աշակերտը կարդում է և հասկանում վարժության պայմանը:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 10. Աշակերտը կարդում է և հասկանում պարզ թղթակցությունը (տարբեր բնույթի բացիկներ, անձնական նամակ):</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 11. Աշակերտը մամուլում ծանոթանում է առօրյա կյանքի հետ կապված տեղեկատվական բնույթի տեքստերի (օրինակ՝ գործնական հայտարարություն, հարցազրույց, հեռուստածրագիր, դայջեսթ) և հասկանում է բացատրության ձևով տրված տեղեկությունը: ա. Կարդում է և հասկանում գործնական առաջարկություններ: բ. Կարդում է և հասկանում հարցազրույցը, ռեպորտաժը: գ. Կարդում է և հասկանում հեռուստածրագիրը: դ. Կարդում է և հասկանում դայջեսթը:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 12. Աշակերտը կարդում է և հասկանում գովազդային բնույթի տեքստը (զբոսաշրջական բուկլետ, ազդագիր, ծանուցում):</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 13. Աշակերտը կարդում է և հասկանում տարբեր թեմաներով ճանաչողական տեքստը (մշակույթի և բնագիտության ոլորտներից):</p>	<p>Օտ.Բ-ՄԻ. 17. Աշակերտը նմուշի համաձայն գրում է տարբեր բովանդակության բացիկներ:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 18. Աշակերտը նամակ է գրում հասակակցին, հարազատին (ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ):</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 19. Աշակերտը ստեղծում է գովազդային բնույթի տեղեկատվական տեքստ (բուկլետ, ազդագիր):</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 20. Աշակերտը նմուշի համաձայն գրում է առօրյա կյանքի հետ կապված տեղեկատվական բնույթի տեքստեր (օրինակ՝ գործնական հայտարարություն, հարցազրույց, հեռուստածրագիր):</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 21. Աշակերտը պահպանում է գրավոր տեքստի կառուցվածքը, տիրապետում է տարրական լեզվա-քերականական ձևերին և գործնականում կիրառում դրանք:</p>

Ուղղություն.		
Լսել	Կարդալ	Գրել
	<p>Օտ.Բ-ՄԻ. 14. Աշակերտը կարդում է և հասկանում պատմողական տեքստը (կենսական պատմություն, հիշողություն, օրագիր):</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 15. Աշակերտը որոշում է տեքստի կառուցվածքային բնորոշիչները և սովորած լեզվական ձևերը:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 16. Աշակերտը սահմանում է կարդալու նպատակը և համապատասխանաբար կիրառում կարդալու տարբեր տեխնիկան (ճանաչողական, ուսուցողական, որոնողական):</p> <p>ա. Դիմում է ճանաչողական ընթերցման տեխնիկային՝ ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար:</p> <p>բ. Դիմում է ուսուցողական ընթերցման տեխնիկային՝ տեքստը մշակելու նպատակով:</p> <p>գ. Դիմում է որոնողական ընթերցման տեխնիկային՝ տեքստում կոնկրետ տեղեկություն գտնելու համար:</p>	<p>Օտ.Բ-ՄԻ. 22. Աշակերտը դիմում է գրելու համապատասխան ռազմավարության:</p>



Ուղղություն.

Խոսել	Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն	Ուսանման ուսուցում
<p>Օտ.Բ-ՄԻ. 23. Աշակերտը տիրապետում է օտար լեզվի հնչակարգային համակարգին:</p> <p><i>Երկխոսություն</i></p> <p>Օտ.Բ-ՄԻ. 24. Աշակերտը մասնակցում է ինտերակտիվին:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 25. Աշակերտը կարողանում է խոսել հեռախոսով:</p> <p><i>Մենախոսություն</i></p> <p>Օտ.Բ-ՄԻ. 26. Աշակերտը խոսում է կապակցված:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 27. Աշակերտը խոսելիս ըստ գործառույթի է օգտագործում սովորած լեզվաքերականական ձևերը:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 28. Աշակերտն օգտագործում է բանավոր խոսքի համապատասխան ռազմավարություններ:</p>	<p>Օտ.Բ-ՄԻ. 29. Աշակերտը ճանաչում է տեղեկությունը մշակույթի բնագավառից:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 30. Աշակերտը դրսևորում է հետաքրքրություն և հանդես է բերում հանդուրժողական վերաբերմունք օտարալեզու երկրի մշակութային և սոցիո-մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.Բ-ՄԻ. 31. Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ ցուցահանդես, տոնական սեղան, զբոսաշրջական բրոշյուրի ստեղծում օտարերկրացիների համար և քաղաքապետարանի կայք-էջում տեղադրում, բարեկամանալ աշխարհի որևէ անկյունի այնպիսի դասարանի հետ, որը նույն լեզուն է սովորում և այլն):</p>	<p>Օտ.Բ-ՄԻ. 32. Աշակերտն ուսուցչի օգնությամբ որոշում է կատարվելիք հանձնարարության պահանջները:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 33. Աշակերտը ձեռք է բերում ռազմավարական կարողություններ՝ հաջող ուսուցման ապահովման համար:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 34. Աշակերտն օգտագործում է ռեսուրսներ ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 35. Աշակերտը դիմում է տարբեր միջոցների՝ բառապաշարի հաստատման և հարստացման համար:</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 36. Աշակերտը կիրառում է ռազմավարություններ՝ քերականության յուրացման օժանդակելու նպատակով (հեշտացնելու համար):</p> <p>Օտ.Բ-ՄԻ. 37. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների, ուսուցչի, զույգի հետ՝ արդյունքների բարելավման նպատակով:</p>

## Ուղղություն՝ լսել

(Լսելու կարողության զարգացման համար օգտագործվում են ուսուցողական\* և ավթենտային լսաերիզներ, որտեղ տեքստերը պարզ և դանդաղ են լսվում)

**Օտ.Բ-ՄII. 1. Աշակերտը լսում և հասկանում է ուսուցչի ցուցումները և վարժությունների հրահանգները:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Համապատասխանաբար է արձագանքում ուսուցչի ցուցումներին:
- Կատարում է վարժություններ:

**Օտ. Բ-ՄII 2. Աշակերտը լսում է և հասկանում է ծանոթ թեմատիկայով կառուցած տեքստը (երկխոսություն, մենախոսություն):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է հաղորդակցական իրավիճակը (զրուցակիցներ, զրույցի թեմա):
- Տեքստից հավաքում է փաստական տեղեկությունները (ով, ուր, երբ, որքան, ինչու, ինչպիսի և այլն):
- Ճանաչում է դրական և բացասական գնահատումները:

**Օտ. Բ-ՄII 3. Աշակերտը լսում է և հասկանում տեղեկատվական լսաձայնագրություններ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

**ա. Եղանակի տեսություն**

- Որոշում է աշխարհագրական վայրերը:
- Որոշում է մթնոլորտային երևույթները և ջերմաստիճանը:

**բ. Մարզական լուրեր**

- Որոշում է մարզատեսակները:
- Որոշում է հաղթող և պարտված թիմերը, խաղացողներին:
- Որոշում է հաշիվը:

**Օտ. Բ-ՄII 4. Աշակերտը լսում է և հասկանում հասարակական հավաքի վայրերում արված հայտարարությունները:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է, թե որտեղ է արված հայտարարությունը (սուպերմարկետում, կայարանում և այլն):
- Որոշում է հայտարարության նպատակը:

- Տեքստից հավաքում է փաստական տեղեկությունները (ուղևորման ժամանակը, կառավարությունը, գինը, սեկցիան և այլն):

**Օտ. Բ-ՄII 5. Աշակերտը լսում է և հասկանում ուղերթը:**

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Համապատասխան ցուցումների համաձայն գտնում է ճանապարհը (թեքվի՛ր աջ, քայլի՛ր ուղիղ և այլն):
- Գտնում է նշանակման վայրը:

### Լսելու ռազմավարություններ

**Օտ.Բ-ՄII. 6. Աշակերտը օգտագործում է համապատասխան ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:**

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Վերնագրի, պատկերագրողությունների հիման վրա ենթադրություն է արտահայտում բովանդակության մասին:
- Անմիջապես խոսք, ձայնագրություն լսելիս օգտվում է ոչ բառային միջոցներից (ձայնի տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտ և այլն):
- Նպատակին համապատասխան փոխում է լսելու ռազմավարությունը. ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար հիմնվում է ծանոթ բառերի, ոչ բառային տարրերի վրա և որոշում է հաղորդակցական իրավիճակը, համատեքստը, զրույցի թեման: Կոնկրետ տեղեկությունը որոշելու համար ընտրում է կոնկրետ հենարաններ, ուշադրությունը դրանց վրա կենտրոնացնելով, հավաքում է անհրաժեշտ տեղեկությունը:

### Ուղղություն՝ ընթերցանություն

(Կարդալու կարողության զարգացման համար օգտագործվում են կիսաավթենտային կամ ավթենտային տեքստեր)

**Օտ.Բ-ՄII.7. Աշակերտը ձեռք է բերում բարձրաձայն ընթերցելու կարողություն:**

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Պարզ և ազատ կարդում է ծանոթ տեքստը:
- Համադասարանցիների հետ բարձրաձայն և արտահայտիչ կարդում է ծանոթ երկխոսությունը, սկետչը, պահպանում է համապատասխան հնչերանգը տարբեր եղանակների նախադասությունների արտասանության ժամանակ:

**Օտ.Բ-ՄII. 8. Աշակերտը կարողում է և հասկանում հանրային մակագրությունները (զգուշացնող մակագրություն, տեղեկություն վաճառքի-վարձակալության մասին, հուշատախտակ, տարբեր տեսակի ցուցանակներ և այլն):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է մատնանշված տեղեկությունը:

**Օտ.Բ-ՄII. 9. Աշակերտը կարողում է և հասկանում վարժության պայմանը:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է և կատարում ցուցումները:

**Օտ.Բ-ՄII.10. Աշակերտը կարողում է և հասկանում պարզ թղթակցությունը (տարբեր բնույթի բացիկներ, անձնական նամակ):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է հաղորդակցական իրավիճակը (հեղինակ, հասցեատեր, թղթակցության նպատակը):
- Որոշում է ուղարկելու ամսաթիվը և հեղինակի, հասցեատիրոջ հասցեն:
- Որոշում է թղթակցության նպատակը (շնորհավորանք, հրավերք, որևէ բանի առաջարկ և այլն):
- Որոշում է փաստական տեղեկությունները (ով, ուր, երբ, որքան, ինչպես, ինչու և այլն):
- Որոշում է հույզերը, վերաբերմունքները:

**Օտ.Բ-ՄII.11. Աշակերտը մամուլում ծանոթանում է առօրյա կյանքի հետ կապված տեղեկատվական բնույթի տեքստերի (օրինակ՝ գործնական հայտարարություն, հարցազրույց, հեռուստածրագիր, դաջեսթ) և հասկանում է բացատրության ձևով տրված տեղեկությունը:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

**ա. Կարողում է և հասկանում գործնական առաջարկություններ:**

- Որոշում է հայտարարության նպատակը (օրինակ՝ ամառային առաջարկություններ):
- Տեքստից հավաքում է կոնկրետ տեղեկություններ:

**բ. Կարողում է և հասկանում հարցազրույցը, ռեպորտաժը:**

- Որոշում է թղթակցին, հարցվողին:
- Որոշում է թեման, հարցերը:

- Որոշում է փաստական տեղեկությունները:
- Որոշում է հարցվողի դրական և բացասական վերաբերմունքները:

**գ. Կարդում է և հասկանում հեռուստածրագիրը:**

- Որոշում է ծրագրի ձևաչափը (շաբաթվա աշխատակարգ, հաղորդումների անվանումներ, ալիքների լոգոներ):
- Որոշում է հաղորդման տեսակը:
- Որոշում է համառոտագրի ընդհանուր բովանդակությունը:
- Որոշում է կոնկրետ տեղեկությունները (մասնակից, կատարող, օր, ժամանակ և այլն):

**դ. Կարդում է և հասկանում դայջեսթը:**

- Որոշում է յուրաքանչյուր տեղեկատվության ընդհանուր բովանդակությունը:
- Վերնագիրը կապում է բովանդակության հետ:

**Օտ.Բ-ՄII.12 Աշակերտը կարդում է և հասկանում գովազդային բնույթի տեքստը (զբոսաշրջական բուկլետ, ազդագիր, ծանուցում):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է հաղորդակցական իրավիճակը (հեղինակ, տեքստի նպատակ, հասցեատեր):
- Որոշում է վերնագիրը, ենթավերնագրերը, խորագրերը, պատկերազարդումների մակագրությունները:
- Որոշում է փաստական տեղեկությունները (ամսաթիվ, գին, տեղ, պայմաններ, մասնակից և այլն):
- Որոշում է գնահատումները, խորհուրդները :

**Օտ.Բ-ՄII.13. Աշակերտը կարդում է և հասկանում տարբեր թեմաներով ճանաչողական տեքստը (մշակույթի և բնագիտության ոլորտներից):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է գլխավոր թեման, հարցերը:
- Որոշում է փաստական տեղեկությունները:

**Օտ.Բ-ՄII.14. Աշակերտը կարդում է և հասկանում պատմողական տեքստը (կենսական պատմություն, հիշողություն, օրագիր ):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է գործող անձանց:
- Որոշում է գործող անձանց տրամադրվածությունը, զգացմունքները,

հատկանիշները:

- Որոշում է գործողությունները, նրանց հաջորդականությունը:
- Որոշում է գործողությունների ժամանակը և տեղը:

**Օտ.Բ-ՄII.15. Աշակերտը որոշում է տեքստի կառուցվածքային բնորոշիչները և սովորած լեզվական ձևերը:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է տեքստի կառուցվածքային կազմակերպման առանձնահատկությունները (օրինակ՝ ունի արդյոք վերնագիր, ենթավերնագիր, խորագրեր, նշված է արդյոք հեղինակը կամ հասցեատերը, տեքստը սյունակներով է կազմակերպված, թե պարբերություններով և այլն):
- Որոշում է հաղորդակցական իրավիճակին, նպատակին համապատասխան արտահայտություններ, կաղապարային ձևեր, լեզվական կառուցվածքներ (օրինակ՝ դիմելու, հրաժեշտ տալու բանաձևը թղթակցության մեջ, խորհուրդ արտահայտող բանաձև գովազդային բրոշյուրում):
- Որոշում է գնահատում-վերաբերմունք արտահայտող լեզվական բանաձևեր:
- Որոշում է ուղղություն և կողմնորոշում արտահայտող լեզվական միջոցներ (գոյական անուն, մակբայ, նախամասնիկ, բայական նախածանց):
- Որոշում է ներկա, անցյալ և ապառնի ժամանակ արտահայտող պարզ լեզվական միջոցները (բայի սովորած ձև, մակբայ):
- Որոշում է համեմատություն (նմանություն) արտահայտող պարզ լեզվական միջոցներ:

**Կարդալու ռազմավարություններ**

**Օտ.Բ-ՄII.16. Աշակերտը սահմանում է կարդալու նպատակը և համապատասխանաբար կիրառում կարդալու տարբեր տեխնիկան (ճանաչողական, ուսուցողական, որոնողական ):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

**ա. Դիմում է ճանաչողական ընթերցման տեխնիկային՝ ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար.**

- Տեքստը դիտարկում է ամբողջականության մեջ, նրա կառուցվածքը, կազմակերպող տարրերը, որոշում է, թե տեքստի այս կամ այն մասը ինչ բովանդակության տեղեկություն է պարունակում, ենթադրություն է արտահայտում տեքստի բովանդակության մասին՝ հիմնվելով տարբեր տարրերի վրա (վերնագիր, ենթավերնագիր, պատկերազարդում, հանգուցային բառ, պարբերությունների սկիզբ, պարբերություններից մեկը, ընդգծված բառեր և այլն):

- Վերընթերցում է տեքստը, ուշադրությունը չի կենտրոնացնում անձանոթ բառերի վրա, ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար՝ հիմնվում է ծանոթ բառերի վրա:

**բ. Դիմում է ուսուցողական ընթերցման տեխնիկային՝ տեքստը մշակելու նպատակով.**

- Տեքստին դեռ ընդհանուր է ծանոթանում (տես՝ ճանաչողական ընթերցանություն):
- Այնուիեռևս մանրամասնորեն կարդում է տեքստը, աշխատում է անձանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը որոշել՝ հիմնվելով ծանոթ տարրերի վրա (համատեքստ, վրացերենում հաստատված օտար բառեր, բառի ծանոթ հիմք, ածանցներ և այլն):
- Անձանոթ բառերը, արտահայտությունները որոնում է իրեն մատչելի ռեսուրսներում (դասագիրք, բառարան, իրազեկ անձ):
- Անհրաժեշտության դեպքում կրկին կարդում է տեքստը կամ նրա առանձին մասեր:

**գ. Դիմում է որոնողական ընթերցման տեխնիկային՝ տեքստում կոնկրետ տեղեկություն գտնելու համար.**

- Աչք է անցկացնում տեքստի կառուցվածքը, բառային և ոչ բառային կազմակերպող տարրերը և, դրանց վրա հիմնվելով, գտնում է և հավաքում իրեն անհրաժեշտ տեղեկությունները:

**Ուղղություն՝ գրավոր խոսք**

**Օտ.Բ-ՄԻ.17. Աշակերտը նմուշի համաձայն գրում է տարբեր բովանդակության բացիկներ:**

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Պահպանում է թղթակցության ձևական կողմը (դիմելու ձև, հրաժեշտի բանաձև, ստորագրություն, հասցե, ամսաթիվ):
- Թղթակցության նպատակը համապատասխանեցնում է բովանդակությանը (հրավերք, որևէ առաջարկ, համաձայնություն հրավերքի, առաջարկի, տեղեկություն իմանալ, տեղեկություն հայտնել):
- Նկարագրում է ամենօրյա լուրեր:
- Հարցեր է առաջադրում կոնկրետ տեղեկության ճշգրտման համար:

**Օտ.Բ-ՄII.18. Աշակերտը նամակ է գրում հասակակցին, հարազատին (ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Հասցեատիրոջ ինքնության նախատեսումով՝ ընտրում է դիմելու և հրաժեշտի համապատասխան բանաձևեր:
- Պատմում է, հաջորդաբար հաղորդում իրադարձությունները, փաստերը:
- Արտահայտում է զգացմունքներ, տրամադրվածություններ, ցանկություններ:

**Օտ.Բ-ՄII.19. Աշակերտը ստեղծում է գովազդային բնույթի տեղեկատվական տեքստ (բուկլետ, ազդագիր):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է հաղորդակցական իրավիճակը (հեղինակ, գովազդի նպատակ, տեքստի ձևաչափ, հասցեատեր):
- Վերնագիր է հորինում:
- Գրում է պատկերազարդումների մեկնաբանություններ:
- Տեղում կազմում է հիմնական տեքստը (համառոտագիր):
- Մատնացույց է անում փաստական տեղեկությունը (ամսաթիվ, զին, տեղ, պայմաններ և այլն):
- Փաստական տեղեկություններին գնահատումներ է կցում:

**Օտ.Բ-ՄII.20. Աշակերտը նմուշի համաձայն գրում է առօրյա կյանքի հետ կապված տեղեկատվական բնույթի տեքստեր (օրինակ՝ զործնական հայտարարություն, հարցազրույց, հեռուստաժրագիր):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Տվյալ կադապարը լրացնում է տարբեր բովանդակությամբ (նմուշի օգտագործումով գրում է ցանկալի հեռուստաժրագիր):

**Օտ.Բ-ՄII.21. Աշակերտը պահպանում է գրավոր տեքստի կառուցվածքը, տիրապետում է տարրական լեզվա-քերականական ձևերին և զործնականում կիրառում է դրանք:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Պահպանում է տեքստի այս կամ այն տեսակի կառուցվածքային բնութագրիչները:
- Պահպանում է շարահյուսական հարաբերությունները պարզ լեզվական կառուցվածքներում:
- Կիրառում է մակբայներ և բայի համապատասխան ձևեր ներկա, անցյալ և ապառնի ժամանակների արտահայտման համար:



- Պատմություններ հաղորդելիս օգտագործում է տեղ արտահայտող լեզվական միջոցներ (օրինակ՝ մակբայներ, նախդիրներ):
- Տեղին է օգտագործում սովորած բառապաշարային միավորները:
- Նկարագրման ժամանակ օգտագործում է նմանություն արտահայտող պարզ լեզվական միջոցներ:
- Պահպանում է բառերի հաջորդականությունը հաստատական, ժխտական և հարցական բովանդակություն պարունակող պարզ և համադասական նախադասություններում:
- Ընտրում է հաղորդակցական իրավիճակին, նպատակին համապատասխան արտահայտություններ, կաղապարներ, լեզվական կառույցներ:
- Հուզական վերաբերմունքի (օրինակ՝ ուրախություն, հիացմունք, հավանություն, երախտագիտություն) արտահայտման համար կիրառում է համապատասխան բառապաշարային միավորներ, լեզվական բանաձևեր:
- Ճիշտ է օգտագործում հարգալից և առօրյա խոսակցական ձևերը:
- Պահպանում է ուղղագրության կանոնները, ճիշտ է օգտագործում կետադրական նշանները:

### Գրելու ռազմավարություններ

#### Օտ.Բ-ՄԻ.22. Աշակերտը դիմում է գրելու համապատասխան ռազմավարության:

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Գտնում է և իրար հետ հավաքում անհրաժեշտ ուսումնական ռեսուրսներ (բառարան, նմուշ, քերականական տեղեկատու և այլն):
- Կազմում է կատարվելիք աշխատանքի պլան, ելնելով հաղորդակցական նպատակից, ընտրում է համապատասխան լեզվական նյութ (բառապաշարային միավորներ, կաղապարներ, քերականական ձևեր և այլն):
- Գրում է սևագիր տարբերակ:
- Վերընթերցում է սևագիրը, հիմնվելով ուսումնական ռեսուրսների վրա, ստուգում է գրածը և ուղղում լեզվական սխալները:
- Մաքրագրում է գրածը:

#### Ուղղություն՝ խոսողություն

#### Օտ.Բ-ՄԻ.23. Աշակերտը տիրապետում է օտար լեզվի հնչակարգային համակարգին:

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Հստակ կրկնում է հնչյունները, բառերը, արտահայտությունները:

- Երկխոսությունների, սկետչերի խաղարկման կամ փոքր տեքստերի ընթերցման ժամանակ պահպանում է օտար լեզվին բնորոշ հնչերանգը, հնչողությունը:

### Երկխոսություն

#### Օտ.Բ-ՄII.24. Աշակերտը մասնակցում է ինտերակտիվին:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ծանոթ թեմատիկայով հարցեր է առաջադրում և պատասխանում է այդպիսի հարցերի (հագուստ, սիրելի հերոս, նախասիրություն, ազատ ժամանակ, դպրոց, ընկերներ և այլն):
- Մասնակցում է կեղծակերպած իրավիճակների (խանութում, բժշկի մոտ, հրավերք, հանդիպման նշանակում և այլն):
- Կարողանում է խոսել հեռախոսով:
- Համապատասխանաբար է արձագանքում խոսակցի ռեպլիկներին:
- Օգտագործում է կոնկրետ հաղորդակցային իրավիճակին համապատասխան կաղապարային ձևեր, լեզվական բանաձևեր:
- Պատասխանում է սովորած տեքստի շուրջ առաջադրած պարզ հարցերի:
- Արտահայտում է հույզեր, հայացքներ, տրամադրվածություն:
- Ուսումնական գործընթացի հետ կապված հիմնախնդիրների վերաբերյալ իր ասելիքը հաղորդում է օտար լեզվով:

#### Օտ.Բ-ՄII.25. Աշակերտը կարողանում է խոսել հեռախոսով:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Օգտագործում է համապատասխան լեզվական կաղապարներ:
- Արձագանքում է խոսակցի ռեպլիկներին:

### Մենախոսություն

#### Օտ.Բ-ՄII.26. Աշակերտը խոսում է կապակցված:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Խոսում է իրեն ծանոթ թեմատիկայով (ընտանիք, բնակատեղ, դպրոց, սիրելի առարկաներ, ամենօրյա գործունեություն, նախասիրություն և այլն):
- Պարզ պլանի համաձայն կամ նկարների վրա հիմնվելով՝ պատմում է պարզ պատմություն:
- Պարզ արտահայտություններով նկարագրում է իր միջավայրը:

- Նկարագրում է նկարը:
- Նկարագրում է և բնութագրում մարդկանց (հասակ, քաշ, մազերի գույն, հագուստ, բնավորություն, հույզեր, հետաքրքրություններ):

**Օտ.Բ-ՄII.27. Աշակերտը խոսելիս ըստ գործառույթի է օգտագործում սովորած լեզվա-քերականական ձևերը:**

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Ինտերակտիվում ընտրում է հաղորդակցական իրավիճակին համապատասխան դիմելաձևեր, արտահայտություններ, կադապարներ, լեզվական կառույցներ:
- Ճիշտ է օգտագործում խոսքի հարգալից և առօրյա խոսակցական ձևերը:
- Տեղին է օգտագործում մակրայները և բայի սովորած ձևերը՝ ներկա, անցյալ և ապառնի ժամանակ արտահայտելու համար:
- Օգտագործում է տեղ արտահայտող լեզվական միջոցներ:
- Պահպանում է շարահյուսական հարաբերությունները լեզվական կառուցվածքներում
- Պահպանում է հնչերանգը տարբեր եղանակների նախադասությունների արտասանության ժամանակ:
- Տեղին է օգտագործում սովորած բառապաշարը:

**Բանավոր խոսքի ռազմավարություններ**

**Օտ.Բ-ՄII. 28. Աշակերտն օգտագործում է բանավոր խոսքի համապատասխան ռազմավարություններ:**

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Հաղորդակցությունը վարելու համար օգտագործում է անհրաժեշտ ռեսուրսները (մնուշօրինակներ, հանգուցային բառեր, արտահայտություններ, լեզվական կադապարներ):
- Օգտագործում է փոխհատուցման միջոցներ (օրինակ՝ դիմախաղ, ձեռածություն, շրջասություն, նկարագրում է նկատի ունեցած առարկան կամ մատնանշում է, թե ինչում է օգտագործվում և այլն):
- Նախօրոք վարժվում է, իր գույզի, խմբի անդամների հետ փորձեր է անում:
- Կռահում է և ուղղում իր կամ ուրիշի սխալները:
- Չհասկանալու դեպքում խնդրում է կրկնել, բացատրել, դանդաղ և հստակ արտասանել:

**Օտ.Բ-ՄII. 29** Աշակերտը ճանաչում է տեղեկությունը մշակույթի քննազավառից:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ճանաչում է պետական խորհրդանշանները (դրոշ, զինանշան, օրհներգ):
- Ուշադիր դիտում է և որոշում պատկերազարդումներում, տեքստերում արտացոլած պետական խորհրդանշանները, մշակութային, կենցաղային իրողություններ (օրինակ՝ դրոշ, հուշարձան և այլն):

**Օտ.Բ-ՄII.30.** Աշակերտը դրսևորում է հետաքրքրություն և հանդես է բերում հանդուրժողական վերաբերմունք օտարալեզու երկրի մշակութային և սոցիո-մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է հասարակության մեջ վարվելաձևի կարգը և կեղծակերպական իրավիճակների խաղարկման ժամանակ պահպանում է դրանք:
- Մայրենի լեզվով հարցեր է առաջադրում, խնդրում է բացատրություն կոնկրետ սոցիո-մշակութային հարցերի շուրջ:
- Կոնկրետ արտահայտում է սեփական կարծիքը, տեսակետը, վերաբերմունքը՝ մշակութային առանձնահատկությունների մասին դատողություն անելիս:

### Ուղղություն՝ օտար լեզվի գործնական կիրառում

**Օտ.Բ-ՄII. 31.** Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ ցուցահանդես, տոնական սեղան, զբոսաշրջական բրոշյուրի ստեղծում օտարերկրացիների համար և քաղաքապետարանի կայք-էջում տեղադրում, բարեկամանալ աշխարհի որևէ անկյունի այնպիսի դասարանի հետ, որը նույն լեզուն է սովորում և այլն):

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ուսուցչի հետ միասին ձևակերպում է նախագծի հաջող իրականացման չափանիշներ:
- Թիմի անդամներն ինքնուրույն պլանավորում են նախագծի իրականացման փուլեր, այնուհետև թիմերը միմյանց հետ փոխանակում են իրենց կազմած պլանները, համեմատում, կատարելագործում:
- Ուսուցչի հետ որոշում են կատարման ժամկետները:

- Մոբիլիզացում են գիտելիքը և կարողությունները, սահմանում են, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերեն նախանշած խնդիրների վճռման համար:
- Թիմի անդամները սահմանում են և բաշխում գործառույթները:
- Թիմի անդամները գտնում են, ընտրում և մշակում տեղեկություններ:
- Ընտրում են նախագծի ներկայացման ձև:
- Իրականացնում են նախագիծը:
- Փորձեր են անում, մեկ այլ խմբի ներկայությամբ շնորհանդեսի կեղծակերպում են անում, մեկնաբանությունների, դիտողությունների նախատեսումով բարելավում են նախագիծը, նրա մեջ ուղղումներ ընդգրկում:
- Կազմում են նախագծի վերջնական տարբերակը և այն ներկայացնում լսարանի առջև:

### Ուղղություն՝ ուսանման ուսուցում

#### Օտ.Բ-ՄII. 32. Աշակերտն ուսուցչի օգնությամբ որոշում է կատարվելիք հանձնարարության պահանջները:

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Մասնակցում է հանձնարարությունը հաջող իրականացնելու չափանիշների ձևակերպմանը:
- Առանձնացնում է հանձնարարության կատարման փուլեր:
- Սահմանում է այն գիտելիքը և կարողությունները, որոնց տիրապետում է և կօգտագործի հանձնարարության կատարման ժամանակ:
- Սահմանում է, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերի հանձնարարության կատարման համար:
- Որոշում է, թե ինչը հեշտ կանի, ինչից կդժվարանա, ինչում անհրաժեշտ կլինի օգնություն, խորհրդատվություն:
- Սահմանում է անհրաժեշտ ռազմավարություններ հանձնարարության յուրաքանչյուր փուլի համար:

#### Օտ.Բ-ՄII. 33. Աշակերտը ձեռք է բերում ռազմավարական կարողություններ՝ հաջող ուսուցման ապահովման համար:

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Մինչև աշխատանքի սկսելը կատարում է գիտելիքի համախմբում:
- Մասնակցում է մտքերի փոխանակման, թե ինչպիսի մոտեցում կօգտագործեն այս կամ այն փուլում՝ կոնկրետ խնդրի լուծման ժամանակ:
- Անհրաժեշտության դեպքում խնդրում է օգնություն, խորհրդատվություն:

- Աշխատանքն ավարտելուց հետո ներկայացնում է կիրառած ռազմավարությունները, համեմատում է ուրիշների կիրառած ռազմավարություններին:
- Համաձայնում է տարբերվող ռազմավարությունների փորձարկում-կիրառման:
- Համեմատում է տարբեր, այդ թվում նաև մայրենի լեզվի ուսանման ժամանակ ստացած փորձը միմյանց, որոշում է, թե որքանով պիտանի կլինի այս կամ այն ռազմավարությունը այլ լեզվի կամ առարկայի ուսանման գործընթացում:
- Վերլուծում է սխալների, թերությունների պատճառները:
- Մասնակցում է կիրառած ռազմավարությունների արդյունավետության գնահատմանը:
- Անվանում է, թե ինչ կենսական իրավիճակում կարող է օգտագործել օտար լեզվից ստացած գիտելիքը և փորձը:
- Մասնակցում է ինքնագնահատման և համագնահատման (աշակերտ-ուսուցիչը կամ աշակերտ-աշակերտը միմյանցից անկախ ստուգում են միևնույն աշխատանքը):
- Դիտարկելով արդյունքները՝ նշում է, թե որտեղ ունի առաջընթաց:
- Վերլուծում է հաջողության թե անհաջողության պատճառները՝ դրանք հետագայում նկատի առնելու նպատակով:
- Անվանում է գործոնները և պատճառները, որոնք խանգարում են առաջընթացին (օրինակ համապատասխանաբար չկիրառեց ռեսուրսը, չկարողացավ ընդգծել ակտիվության գլխավոր խնդիրը, բաց թողեց մի փուլ, խնդիրն անհաղթահարելի թվաց, անտրամադիր էր և այլն):
- Նկատում է և անվանում իր թերությունները:
- Որոշում է, թե ինչ միջոցների պետք է դիմի թերություններն ուղղելու համար:
- Սեփական նախաձեռնությամբ դիմում է սխալներն ուղղելու միջոցների:

**Օտ.Բ-ՄԻ.34. Աշակերտն օգտագործում է ռեսուրսներ ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները (բառարան, կառուցվածքային նմուշներ, քերականական տեղեկատու, պատկերագրություններ և այլն):
- Տեղեկություններ է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսներից (դասագրքի ակներև նյութ, բառարան, դպրոցի, գյուղի, քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրազեկ անձ, համացանց և այլն):
- Տեղեկություններ, ուսումնական նյութ է գտնում հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով:
- Օգտագործում է ՏՀՏ այս կամ այն նյութը, տեքստը ստեղծելու, մշակելու համար:
- Օգտագործում է ՏՀՏ նախագծեր իրականացնելու համար:

**Օտ.Բ-ՄԻ.35. Աշակերտը դիմում է տարբեր միջոցների՝ բառապաշարի հաստատման և հարստացման համար:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Միստեմատիկորեն կրկնում է անցած բառապաշարային նյութը:
- Որոշում է վատ յուրացրած բառապաշարային միավորները:
- Կիրառում է մտապահման տարբեր եղանակներ (մի քանի անգամ արտագրել, բարձրաձայն կրկնել, նույն հիմքով բառերի, հականշային, հոմանշային զույգերի խմբավորում, զուգորդություն, համատեքստի օգտագործում, խմբավորում թեմատիկայի համաձայն և այլն):

**Օտ.Բ-ՄԻ.36. Աշակերտը կիրառում է ռազմավարություններ՝ քերականության յուրացմանն օժանդակելու նպատակով (հեշտացնելու համար):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Կոնկրետ օրինակի դիտարկումով որոշում է քերականական կառույցները, կանոնները:
- Կիրառում է որոշած կառույցները, կանոնները տարբեր համատեքստերում:
- Միմյանց հետ համեմատում է մայրենի և օտար լեզվի քերականական կառույցները, օրինաչափությունները:
- Կիրառում է և ինքն էլ է ստեղծում գծապատկերներ, աղյուսակներ, կառուցվածքային նմուշօրինակներ:

**Օտ.Բ-ՄԻ.37. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների, ուսուցչի, զույգի հետ՝ արդյունքների բարելավման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ոգևորում է զույգին, թիմակցին:
- Խնդրում է կամ ինքն է առաջարկում օգնություն:
- Գործում է թիմի անդամների հետ համաձայնեցված, թիմակիցների հետ:
- Դատողություններ է անում՝ հիմնախնդիրը վճռելու, գործառույթները բաշխելու համար:
- Լսում է ուրիշների կարծիքները, արտահայտում է իրենը:
- Անհամաձայնության դեպքում աշխատում է հասնել համաձայնության:
- Աշխատում է իր ներդրումն անել ընդհանուր գործի մեջ:

2009

---

- Ըստ անհրաժեշտության, մասնակցում է գույգի, թիմի անդամների համագնահատմանը:
- Զննադատում է գաղափարները և ոչ թե գաղափարների հեղինակներին, գնահատելիս հանդես է բերում կոռեկտորությամբ:
- Քաղաքավարի ձևով է մատնացույց անում ուրիշների թույլ տված սխալները:
- Մասնակցում է համագնահատման՝ արդյունքների բարելավման նպատակով:



III մակարդակ  
Չեռքերվելիք արդյունքներ

Ուղղություն.		
ԼՍԵԼ	ԿԱՐԴԱԼ	ԳՐԵԼ
<p>Օտ. Բ-Մ.III. 1. Աշակերտը լսում է և հասկանում օտարալեզու խոսակիցների միջև ընթացող ինտերակտիվը (երկխոսություն, մենախոսություն, հարցազրույց), առօրյա կյանքի հետ կապված թեմաների մասին:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 2. Աշակերտը լսում է և հասկանում կարճ հրահանգները, տեղեկագրերը, հասարակական հավաքի վայրերում արված հայտարարությունները:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 3. Աշակերտը լսում է և հասկանում տեղեկատվական աուդիոհաղորումները:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 4. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրվելիք խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և լսելու կարողության բարելավման նպատակով:</p>	<p>Օտ. Բ-Մ.III. 5. Աշակերտը հասկանում է թղթակցությունը (պաշտոնական բնույթի բացիկ, անձնական նամակ կամ նրա էլեկտրոնային տարբերակ):</p> <p>Օտ. Բ-Մ.III. 6. Աշակերտը կարդում է և հասկանում տարբեր թեմաներով ստեղծված ճանաչողական տեքստեր (պատմական, մշակութային, հնագիտական, աշխարհագրական և այլն):</p> <p>Օտ. Բ-Մ.III. 7. Աշակերտը հասկանում է կենսագրական բնույթի տեքստերը (կենսագրություն, կենսագրական տեղեկատու):</p> <p>Օտ. Բ-Մ.III. 8. Աշակերտը կարդում է և հասկանում փոքր չափսի պատմական բնույթի տեքստը (հարմարեցված պատմվածք, հուշ, պատմություն, օրագիր):</p> <p>Օտ. Բ-Մ.III. 9. Աշակերտը որոշում է տեքստի կառուցվածքային բնութագրիչները, սովորած լեզվա-քերականական ձևերը և նրանց գործառույթը իմաստ ունեցող համատեքստում:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 10. Աշակերտը բարձրաձայն կարդում է տեքստ, հատվածներ:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 11. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և կարդալու կարողության բարելավման համար:</p>	<p>Օտ. Բ-Մ.III. 12. Աշակերտը գրում է տարբեր տեսակի տեքստեր, որտեղ մանրամասնորեն նկարագրում է սեփական փորձը: ա) Նամակ է գրում իր օտարերկրացի հասակակցին (ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ): բ) Անձնական նամակներ է գրում իր մերձավորներից (ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ): գ) Օրագիր է գրում:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 13. Աշակերտը տարբեր թեմաներով (պատմական, մշակութային, բնապահպանական և այլն) ճանաչողական բնույթի փոքր տեքստեր է գրում:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 14. Աշակերտը գրելիս պահպանում է տեքստի կառուցվածքը, ձեռք է բերում և աշխատում գործնականում օգտագործել լեզվա-քերականական բազիսային հմտություն-կարողություններ:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 15. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ գրավոր խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և գրավոր խոսքի կարողության բարելավման նպատակով:</p>

Ուղղություն.			
ԽՈՍԵԼ	ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅՈՒՆ	ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ	ՈՒՍԱՆՄԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ
<p><i>Երկխոսություն</i></p> <p>Օտ. Բ-Մ.III. 16. Աշակերտը մասնակցում է ինտերակտիվին:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 17. Աշակերտը կարողանում է իրեն դրսևորել կենցաղային հարողակցական իրավիճակներում:</p> <p><i>Մենախոսություն</i></p> <p>Օտ. Բ-Մ.III. 18. Աշակերտը խոսում է կապակցված:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 19. Աշակերտը ձեռք է բերում և փորձում է գործնականում կիրառել լեզվաքերականական բազիսային հմտություն-կարողությունները:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 20. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և բանավոր խոսքի կարողության բարելավման նպատակով:</p>	<p>Օտ. Բ-Մ.III. 21. Աշակերտը ծանոթ է նպատակային երկրի կամ երկրների մշակութային իրողություններին:</p> <p>Օտ. Բ-Մ.III. 22. Աշակերտը հետաքրքրություն է դրսևորում և հանդես է բերում հանդուրժողական վերաբերմունք օտարալեզու երկրի մշակութային և սոցիո-մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.Բ-Մ.III. 23. Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ ցուցահանդես, տոնական սեղան, զբոսաշրջական բրոշյուրի ստեղծում օտարերկրացիների համար և քաղաքապետարանի կայք-էջում տեղադրում, բարեկամանալ աշխարհի որևէ անկյունի այնպիսի դասարանի հետ, որը նույն լեզուն է սովորում և այլն):</p>	<p>Օտ.Բ-Մ.III. 24. Աշակերտն ուսուցչի օգնությամբ որոշում է կատարվելիք հանձնարարության պահանջները:</p> <p>Օտ.Բ-Մ.III. 25. Աշակերտը ձեռք է բերում ռազմավարական կարողություններ՝ հաջող ուսուցման ապահովման համար:</p> <p>Օտ.Բ-Մ.III. 26. Աշակերտն օգտագործում է ռեսուրսներ ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:</p> <p>Օտ.Բ-Մ.III. 27. Աշակերտը դիմում է տարբեր միջոցների՝ բառապաշարի հաստատման և հարստացման համար:</p> <p>Օտ.Բ-Մ.III. 28. Աշակերտը կիրառում է ռազմավարություններ՝ քերականության յուրացմանն օժանդակելու նպատակով (հեշտացնելու համար):</p> <p>Օտ.Բ-Մ.III. 29. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների, ուսուցչի, գույզի հետ՝ արդյունքների բարելավման նպատակով:</p>

## Ուսուցման արդյունքներ և ստուգիչներ

### Ուղղություն՝ ունկնդրում

(Լսելու կարողության զարգացման համար օգտագործվում են ուսումնական նպատակով ստեղծված լսաերիզներ, որտեղ խոսքը պարզ է և անշտապ):

**Օտ. Բ-Մ.III. 1. Աշակերտը լսում է և հասկանում օտարալեզու խոսակիցների միջև ընթացող ինտերակտիվը (երկխոսություն, մենախոսություն, հարցազրույց), առօրյա կյանքի հետ կապված թեմաների մասին:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է, թե որտեղ և երբ է ընթանում զրույցը:
- Որոշում է խոսակիցներին, հարցվողին, թղթակցին:
- Որոշում է զրույցի հիմնական թեման, հարցերը:
- Տեքստից հավաքում է կոնկրետ տեղեկությունները (ով, ուր, երբ, որքան, ինչու, ինչպիսի և այլն):
- Ջրույցի բովանդակությունից ելնելով՝ եզրակացություն է անում զրուցակիցների բնավորության, գործունեության, ապագա պլանների, հետաքրքրությունների և նրանց միջև գոյություն ունեցած հարաբերությունների մասին (բարեկամական, կոնֆլիկտային, վաղուցվա ծանոթներ, նոր ծանոթացած և այլն):
- Հնչերանգով տարբերում է ասելիքի երանգը (հարց, խնդրանք, պահանջ):

**Օտ. Բ-Մ.III. 2. Աշակերտը լսում է և հասկանում կարճ հրահանգները, տեղեկագրերը, հասարակական հավաքի վայրերում արված հայտարարությունները:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է հայտարարության թեման (կորած իր, միջոցառում, ճանապարհորդություն և այլն):
- Որոշում է հայտարարության նպատակը (գովազդել, զգուշացնել, տեղեկացնել և այլն):
- Որոշում է հասցեատիրոջը (ու՞մ համար է հատկացված տեղեկագիրը, հայտարարությունը):
- Տեքստից հավաքում է կոնկրետ տեղեկությունները (օրինակ՝ կորած իրի բնութագրիչները, մթերքի գինը, ուղևորվելու ժամանակը, անվտանգության կանոնները և այլն):

**Օտ. Բ-Մ.III. 3. Աշակերտը լսում է և հասկանում տեղեկատվական աուդիոհաղորդումները:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է հաղորդման տեսակը (օդերևութաբանական տեսություն, դաշտաթ, սպորտի, մշակույթի նորություններ և այլն):
- Որոշում է հիմնական թեման, հարցերը (պարզևատրում, նախասիրություն, կինոփառատոն և այլն):
- Տեքստից հավաքում է կոնկրետ տեղեկությունները (ով, ուր, երբ, որքան, ինչպիսի և այլն):

**Լսելու ռազմավարություններ**

**Օտ. Բ-Մ.III. 4. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրվելիք խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և լսելու կարողության բարելավման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Կենդանի խոսք, ձայնագրություն լսելիս՝ օգտվում է ոչ բառային միջոցներից (ձայնի տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտ, պատկերազարդում, գծապատկեր և այլն):
- Հիմնվելով ծանոթ տարրերի վրա (հաղորդակցական իրավիճակ, համատեքստ, ծանոթ լեզվական կառույցներ)՝ որոշում է անծանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Նշում է անծանոթ բառերը՝ դրանց նշանակությունը պարզելու համար:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով, ճանապարհով է կարողացել վճռել լսելու խնդիրը:
- Համեմատում է ուրիշների ընտրած եղանակին և անում եզրակացություն, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Նպատակին համապատասխան փոխում է լսելու ռազմավարությունը. ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար հիմնվում է ծանոթ բառերի, ոչ բառային տարրերի վրա և որոշում է հաղորդակցական իրավիճակը, համատեքստը, զրույցի թեման: Կոնկրետ տեղեկությունը որոշելու համար ընտրում է կոնկրետ հենարաններ, ուշադրությունը դրանց վրա կենտրոնացնելով, հավաքում է անհրաժեշտ տեղեկությունը:
- Օտար լեզվով դիտում է և լսում իրեն հետաքրքիր հեռուստա-, ռադիոհաղորդումներ, ֆիլմեր:

## Ուղղություն` ընթերցանություն

**Օտ. Բ-Մ.III. 5. Աշակերտը հասկանում է թղթակցությունը (պաշտոնական բնույթի բացիկ, անձնական նամակ կամ նրա էլեկտրոնային տարբերակ):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Անվանում է հեղինակին, հասցեատիրոջը, նրանց հասցեները, ուղարկելու ամսաթիվը:
- Անվանում է թղթակցության նպատակը (շնորհավորանք, հրավերք, շնորհակալության արտահայտում, առաջարկ, տպավորությունների փոխանակում, բացատրագիր և այլն):
- Որոշում է իրավիճակը, համատեքստը, որում գրվել է նամակը:
- Որոշում է փաստական տեղեկությունը ( ուր, ինչ, երբ, որքան, ինչպիսի, ինչու, ում համար և այլն):
- Որոշում է հարցվողի վերաբերմունքը, տրամադրվածությունը:
- Հիմնվելով տեղեկության վրա` անում է կոնկրետ եզրակացություններ հեղինակի թե հասցեատիրոջ մասին:

**Օտ. Բ-Մ.III. 6. Աշակերտը կարդում է և հասկանում տարբեր թեմաներով ստեղծված ճանաչողական տեքստեր (պատմական, մշակութային, հնագիտական, աշխարհագրական և այլն):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է գլխավոր թեման, հարցերը:
- Որոշում է տեքստում տրված մակերեսային փաստական տեղեկությունը:
- Հավաքում է տեղեկություններ կոնկրետ բնութագրիչների համաձայն (նմանություն-տարբերություն, աճող-նվազող աստիճան և այլն):
- Սահմանազատում է փաստը ենթադրությունից, գնահատումից:
- Որոշում է փաստերի և իրադարձությունների միջև գոյություն ունեցած տրամաբանական կապերը:
- Տեքստում տրված տեղեկությունը կապում է անձնական փորձի հետ:

**Օտ. Բ-Մ.III. 7. Աշակերտը հասկանում է կենսագրական բնույթի տեքստերը (կենսագրություն, կենսագրական տեղեկատու):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ճանաչում է անձին:
- Սահմանում է իրադարձությունների ժամանակը և տեղը (ժամանակաշրջան,

ծննդյան ժամանակը և տեղը և այլն):

- Անվանում է անձնավորության գործունեության բնագավառը, որում հոշակել է իրեն:
- Որոշում է կարիերայի փուլերը:
- Կենսագրության մեջ տրված տեղեկությունների համաձայն՝ բնութագրում է անձնավորությանը:

**Օտ. Բ-Մ.III. 8. Աշակերտը կարդում է և հասկանում փոքր չափսի պատմական բնույթի տեքստը (հարմարեցված պատմվածք, հուշ, պատմություն, օրագիր):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է ընդհանուր բովանդակությունը:
- Նկարը գիտակցված կապում է տեքստի հետ:
- Որոշում է պատմողին, գործող անձանց, հեղինակին:
- Որոշում է գործողությունների հաջորդականությունը:
- Անվանում է կոնկրետ տեղեկությունը (ով, ուր, ինչպիսի, ինչպես, ինչու և այլն):
- Որոշում է գործող անձանց միջև գոյություն ունեցած հարաբերությունները:
- Բնութագրում է գործող անձանց՝ հիմնվելով բացատրական բնույթի տեղեկության վրա:
- Որոշում է պատմողի, գործող անձի տրամադրվածությունները, հույզերը, վերաբերմունքը :

**Օտ. Բ-Մ.III. 9. Աշակերտը որոշում է տեքստի կառուցվածքային բնութագրիչները, սովորած լեզվա-քերականական ձևերը և նրանց գործառույթը իմաստ ունեցող համատեքստում:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Կառուցվածքային կազմակերպման համաձայն՝ համեմատում է միևնույն տեսակի տեքստերը (օրինակ՝ ճանաչողական բնույթի երկու տեքստ) և մայրենի լեզվով դատողություն է անում, թե որի կառուցվածքն է ավելի օգնում տեքստի ընկալմանը և ինչու:
- Ճանաչում է գործողության հաճախականություն և տևողություն արտահայտող լեզվական միջոցները (մակբայ, բայի համապատասխան ձև ):
- Ճանաչում է տեղ, ուղղություն, հեռավորություն, տարածություն արտահայտող լեզվական միջոցները:
- Ճանաչում է գործողությունների հաջորդականություն արտահայտող պարզ լեզվական կառուցվածքները (նախորդող և հաջորդող գործողության):

- Որոշում է տրամաբանական կապեր արտահայտող լեզվական կառույցները (օրինակ՝ պատճառ, հետևանք, հանդիպադրում):

**Օտ. Բ-Մ.III. 10. Աշակերտը բարձրաձայն կարդում է տեքստ, հատվածներ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ընտրում է տեքստ, հատված, որը ցանկանում է կարդալ լսարանի առջև:
- Մինչև ընթերցելը գիտակցում է տեքստի բովանդակությունը:
- Բովանդակությանը համապատասխան փոխում է խոսքի տեմպը, ձայնի երանգը, բարձրությունը):
- Հնչերանգով արտահայտում է տեքստում արտացոլված հույզերը:
- Կետադրական նշանների գործառույթով կիրառում է հնչերանգը:
- Կարդալու ընթացքում աշխատում է տեսողական կապ հաստատել լսարանի հետ:
- Խոսում է պարզ և հստակ:

### Կարդալու ռազմավարություններ

**Օտ. Բ-Մ.III. 11. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և կարդալու կարողության բարելավման համար:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Կիրառում է ճանաչողական ընթերցանության միջոցները. դիտարկում է տեքստի կառուցվածքը, վերնագիրը, պարբերությունները, պատկերազարդումները, մակագրությունները, ընդգծված բառերը և այլն: Անձանոթ բառերի դեպքում կանգ չի առնում:
- Կիրառում է ուսուցողական ընթերցանության միջոցները. առաջին ընթերցման ժամանակ ամբողջությամբ ծանոթանում է տեքստին, դժվարությունների հաղթահարման համար վերընթերցում է անհասկանալի, բարդ կամ կարևոր մասերը, համատեքստի, ունեցած փորձի կամ բառարանի միջոցով ճշտում է անձանոթ բառերի նշանակությունը:
- Կիրառում է որոնողական ընթերցանության միջոցները. կոնկրետ տեղեկություն գտնելու նպատակով արագ ընթերցում է տեքստը, որոնում է հենակետեր. հանգուցային բառեր, պարբերությունների առաջին նախադասություններ, խորագրեր, պարզաբանումներ, գծապատկերներ, աղյուսակներ և այլն):
- Ինքնուրույն որոշում է անձանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը՝ ծանոթ տարրերի օգնությամբ (պատկերազարդումներ, ծանոթ հիմք, համատեքստ, մայրենի լեզվում հաստատված օտար բառեր և այլն):

- Տարբեր տարրերի օգնությամբ (վերնագիր, պարբերությունների սկիզբ, հանգուցային բառեր, որևէ պարբերություն, ընդգծված բառեր) ենթադրություն է անում տեքստի բովանդակության մասին:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով կարողացավ վճռել ընթերցանական խնդիրը:
- Համեմատում է ուրիշի ընտրած եղանակին և անում է եզրակացություն, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:

### Ուղղություն՝ գրավոր խոսք

Օտ. Բ-Մ.III. 12. Աշակերտը գրում է տարբեր տեսակի տեքստեր, որտեղ մանրամասնորեն նկարագրում է սեփական փորձը:

*Արդյունքն ակնհայտ է, երբ աշակերտը.*

ա) Նամակ է գրում իր օտարերկրացի հասակակցին (ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ):

- Պահպանում է թղթակցության ձևական կողմը (դիմումի և հրաժեշտի բանաձև, ստորագրություն, հասցե, ամսաթիվ):
- Ներկայացնում է իրեն, իր ընտանիքը:
- Մատնանշում է իր տարածաշրջանի, քաղաքի, գյուղի գտնվելու վայրը:
- Նկարագրում է, թե ինչով է զբաղված, ինչպես է անցկացնում ազատ ժամանակը:
- Բնութագրում է իր բարեկամներին:
- Հասցեատիրոջը հարցեր է առաջադրում՝ իրեն հետքրքրող հարցերի պատասխանը ստանալու համար:
- Հրավիրում է և բացատրում, թե ժամանելու դեպքում ինչ կանեն և ինչպես կանցկացնեն ժամանակը:

բ) Անձնական նամակներ է գրում իր մերձավորներին

ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ)

- Պահպանում է թղթակցության ձևական կողմը (դիմելու և հրաժեշտի բանաձև, ստորագրություն, հասցե, ամսաթիվ):
- Հասցեատիրոջը հարցեր է տալիս:
- Տեղեկացնում է իր անձնական կյանքի հետ կապված նորություններ:
- Մանրամասնորեն նկարագրում է կոնկրետ պատմություններ (օրինակ՝ ինչպես հանդիպեց վաղուց չտեսած ընկերոջը, որտեղ, ինչ իրավիճակում, ինչպես ընթացավ հանդիպումը, ինչով ավարտվեց):
- Նկարագրում է սեփական վերաբերմունքը, տրամադրվածությունը, արձագանքները՝ կոնկրետ իրավիճակի, երևույթի հետ կապված:



գ) Օրագիր է գրում:

- Հիշում է և հաղորդում կոնկրետ լուր, պատմություն:
- Մանրամասնորեն նկարագրում է իրավիճակը:
- Նկարագրում է իր հուզական արձագանքները, տրամադրվածությունը:
- Սեփական դիրքորոշումից գնահատում է փաստերը, վարքերը, երևույթները:
- Գրառումների վրա նշում է ամսաթվերը:

**Օտ. Բ-Մ.III. 13. Աշակերտը տարբեր թեմաներով (պատմական, մշակութային, բնապահպանական և այլն) ճանաչողական բնույթի փոքր տեքստեր է գրում:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ընտրում է թեման:
- Վերնագրում է:
- Ի մի է բերում համապատասխան տեղեկություններ, պատկերագրություններ:
- Որոշում է պատկերագրումների մակագրությունները:
- Սահմանում է խորագրերը:
- Տեքստեր է կազմում յուրաքանչյուր խորագրի համար:
- Գրում է տեքստի լրիվ տարբերակը, պատկերագրում է, ուշադրություն է դարձնում տեքստի կառուցվածքային կազմակերպմանը:

**Օտ. Բ-Մ.III. 14. Աշակերտը գրելիս պահպանում է տեքստի կառուցվածքը, ձևը է բերում և աշխատում գործնականում օգտագործել լեզվա-քերականական բազիսային հմտություն-կարողություններ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Պահպանում է տեքստի այս կամ այն տեսակի կառուցվածքային բնութագրիչները և արդյունավետ է օգտագործում բառային թե ոչ բառային կազմակերպողները (վերնագիր, ենթավերնագիր, պատկերագրում, սյունակ, պարբերություն, ընդգծված բառ և այլն):
- Տեքստի ստեղծման ժամանակ պահպանում է իմաստային կապի պարզ լեզվա-քերականական միջոցները (օրինակ՝ համապատասխան համատեքստում անունների փոխարեն ճիշտ է օգտագործում դերանուններ և պարզ մակբայներ):
- Համապատասխանաբար է օգտագործում նոր սովորած բառերը և արտահայտությունները:
- Պատմություններ, փաստեր հաղորդելիս կիրառում է համապատասխան բայաձևեր՝ ներկա, անցյալ և ապառնի ժամանակների արտահայտման համար:

- Կիրառում է մակբայներ, նախդիրներ, կայուն բառակապակցություններ՝ գործողությունների, երևույթների ժամանակը ճշգրտելու համար (օրինակ՝ երեկոյան, վաղը, մի քանի ժամում և այլն):
- Կիրառում է պարզ լեզվական կառույցներ՝ գործողությունների միջև տրամաբանական կապերի (օրինակ՝ պատճառա-հետևանքային, հակադրական) արտահայտման համար (օրինակ՝ համադասական նախադասություն, պարզ ստորադասում):
- Հաղորդակցական իրավիճակին, նպատակին համապատասխան ընտրում է սովորած լեզվական կառույցները, կաղապարները, բանաձևերը, հարգալից և մտերմական ձևեր:
- Ճիշտ է օգտագործում շարահյուսական հարբերությունները բառերի միջև:
- Նկարագրման ժամանակ ճշտում է գտնվելու վայրը՝ մակբայների, պարզ լեզվական բանաձևերի օգտագործմամբ:
- Պահպանում է կետադրության և ուղղագրության նորմերը:

### Գրելու ռազմավարություններ

**Օտ. Բ-Մ.III. 15. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ գրավոր խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և գրավոր խոսքի կարողության բարելավման նպատակով:**

*Արդյունքն ակնհերև է, երբ աշակերտը.*

- Հայթայթում է և պատրաստում պարտադիր ուսումնական ռեսուրսներ՝ բառարան, նմուշ, քերականական տեղեկատու և այլն:
- Գրում է գաղափարներ, ընտրում, դասակարգում և կազմում տեքստի պլան:
- Հայթայթում է համապատասխան պատկերազարդումներ:
- Գրում է սևագիր:
- Ուսումնական ռեսուրսի վրա հիմնվելով՝ ստուգում է գրածը և ուղղում սխալները:

### Ուղղություն՝ խոսողություն

### Երկխոսություն

**Օտ. Բ-Մ.III. 16. Աշակերտը մասնակցում է ինտերակտիվին:**

*Արդյունքն ակնհերև է, երբ աշակերտը.*

- Ծանոթ թեմատիկայով հարցեր է առաջադրում և պատասխանում է դրանց:
- Կարողանում է արձագանքել զրուցակիցների ռեպլիկներին:

- Նախօրոք պատրաստվելու հիման վրա՝ կարողանում է, այս կամ այն հարցի հետ կապված, իր վերաբերմունքն արտահատել և բացատրել այն (ինչ է հավանում, չի հավանում, ինչու):
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա՝ անում է տարբեր տեսակի ընտրություն և բացատրում է այն (օրինակ՝ որ դերասանին է տալիս նախապատվություն և ինչու, ուր է գերադասում գնալ և այլն):
- Դիմում է ուսուցչին, համադասարանցիներին՝ կապված ուսումնական գործընթացում առաջացած անհրաժեշտությունների հետ:

**Օտ. Բ-Մ.III. 17. Աշակերտը կարողանում է իրեն դրսևորել կենցաղային հաղորդակցական իրավիճակներում:**

*Արդյունքն ակնհերև է, երբ աշակերտը.*

- Նախօրոք պատրաստվելու հիման վրա՝ մասնակցում է դերային խաղերի, կեղծակերպած իրավիճակների, որոնք արտացոլում է սովորական կենցաղային իրավիճակում (օրինակ՝ *հեռախոսով տեղեկության ձեռքբերում կինոսեսանների ժամերի մասին, ուշանալու պատճառով արդարանալ և այլն*):
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա՝ մասնակցում է այնպիսի կեղծակերպած իրավիճակների, որոնք արտացոլում են ամենօրյա կենցաղային իրավիճակ (*Օրինակ՝ մի մարդ զանգում է մյուսին և տեղեկացնում, որ մտադիր է երկու շաբաթով ժամանել՝ տարածաշրջանը դիտելու նպատակով*):

## Մենախոսություն

**Օտ. Բ-Մ.III. 18. Աշակերտը խոսում է կապակցված:**

*Արդյունքն ակնհերև է, երբ աշակերտը.*

- Նախօրոք պատրաստվելու հիման վրա՝ պարզ լեզվով խոսում է իրեն ծանոթ թեմաների մասին (ազատ ժամանակ, նորաձևություն և այլն):
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա՝ պարզ լեզվով պատմում է իր գլխով անցած, լսած կամ կարդացած պատմություն:

**Օտ. Բ-Մ.III. 19. Աշակերտը ձեռք է բերում և փորձում է գործնականում կիրառել լեզվա-քերականական բազիսային հմտություն-կարողությունները:**

*Արդյունքն ակնհերև է, երբ աշակերտը*

- Ինտերակտիվ հաղորդակցության ժամանակ համապատասխանաբար է ընտրում սովորած լեզվական կառույցները և բանաձևերը, կաղապարներ:

- Ինտերակտիվ հաղորդակցության ժամանակ համապատասխանաբար է կիրառում առօրյա-կենցաղային և հարգալից ձևերը:
- Ազատ օգտագործում է պարզ և համադասական նախադասությունների կառուցվածքները:
- Կիրառում է հաճախ օգտագործվող, պարզ կառուցվածք ունեցող ստորադասական նախադասություններ:
- Պահպանում է շարահյուսական հարբերությունները սովորած լեզվական կառույցներում:
- Պատմություններ հաղորդելիս՝ աշխատում է ճիշտ օգտագործել բայի սովորած ձևերը՝ ներկա, անցյալ և ապառնի ժամանակներ արտահայտելու համար:
- Օգտագործում է անհատական վերաբերմունք արտահայտող բայերը, բառակապակցություններ (հավանում եմ, չեմ հավանում, գերադասում եմ, իմ կարծիքով):
- Օգտագործում է հույզեր (ուրախություն, զարմանք, ավստասանք և այլն) արտահայտող բառային միավորներ, հաճախ օգտագործվող լեզվական բանաձևեր:
- Լուր հաղորդելիս՝ ճիշտ է օգտագործում իրադարձությունների հաջորդականությունը արտահայտող բառեր (*սկզբից, դեռ, վերջում, ավարտին*), բայի անցյալ ժամանակաձևեր:
- Ջգացմունքներ և հույզեր արտահայտելիս՝ կիրառում է կոնկրետ եղանակին բնորոշ հնչերանգ:

**Խոսելու ռազմավարություններ**

**Օտ. Բ-Մ.III. 20. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և բանավոր խոսքի կարողության բարելավման նպատակով:**

*Արդյունքն ակնհեր է, երբ աշակերտը*

- Նախօրոք պատրաստում է անհրաժեշտ ռեսուրսը, հավաքում է մոդելներ, արտահայտություններ, կաղապարներ, հանգուցային բառեր:
- Մինչև լսարանի առջև ելույթ ունենալը փորձեր է անում:
- Չհասկանալու դեպքում խնդրում է բացատրել, դանդաղ և հստակ արտասանել, կրկնել:
- Բառը մոռանալու, չգիտենալու դեպքում կիրառում է փոխհատուցող միջոցներ (օրինակ՝ դիմախաղ, ձեռածություն, շրջասություն, նկարագրում է նկատի ունեցած առարկան կամ նշում է, թե ինչում է օգտագործվում և այլն):

## Ուղղություն՝ մշակույթների երկխոսություն

**Օտ. Բ-Մ.III.21. Աշակերտը ծանոթ է նպատակային երկրի (երկրների) մշակութային իրողություններին:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը*

- ճանաչում է պետական խորհրդանշանները (դրոշ, զինանշան, օրհներգ):
- Անվանում է նպատակային երկրի, երկրների հետ կապված աշխարհագրական, ժողովրդագրական տվյալներ, նշանակալի պատմական իրադարձություններ (օրինակ՝ նպատակային երկրների մայրաքաղաքները, Գերմանիայի միավորման օրը, Բաստիլը գրավելու օրը և այլն):
- Որոշում է արվեստի և ճարտարապետության նմուշները (օրինակ՝ Բրադենբուրգի պարիսպը, Փարիզի Աստվածամոր տաճարը, Բիգ-Բենը, Օստանկինոյի աշտարակը և այլն):
- Որոշում է պատմական դեմքերին և անվանի մարդկանց (օրինակ՝ Վոլֆգանգ Գյոթե, Շառլ Դե Գոլ, թագուհի Եղիսաբեթ Երկրորդ, Ալեքսանդր Պուշկին), անվանում է գործունեության ոլորտները, ժամանակաշրջանը, վաստակը:
- Անվանում է տոնակատարությունները և տոները:

**Օտ. Բ-Մ.III. 22. Աշակերտը հետաքրքրություն է դրսևորում և հանդես է բերում հանդուրժողական վերաբերմունք օտարալեզու երկրի մշակութային և սոցիո-մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը*

- Որոշում է հասարակության մեջ վարվելաձևի կարգը և կեղծակերպական իրավիճակների խաղարկման ժամանակ պահպանում է դրանք:
- Որոշում է ավանդույթները, սովորույթները և համեմատում հայրենիի հետ, գտնում է նմանություններ, տարբերություններ:
- Կոնկրետ արտահայտում է սեփական կարծիքը, տեսակետը, վերաբերմունքը՝ մշակութային առանձնահատկությունների մասին դատողություն անելիս:

## Ուղղություն՝ օտար լեզվի գործնական կիրառում

**Օտ.Բ-ՄՊՊ. 23.** Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ ցուցահանդես, տոնական սեղան, զբոսաշրջական բրոշյուրի ստեղծում օտարերկրացիների համար և քաղաքապետարանի կայք-էջում տեղադրում, բարեկամանալ աշխարհի որևէ անկյունի այնպիսի դասարանի հետ, որը նույն լեզուն է սովորում և այլն):

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը*

- Ուսուցչի հետ միասին ձևակերպում են նախագծի հաջող իրականացման չափանիշներ:
- Թիմի անդամներն ինքնուրույն սահմանում են նախագծի իրականացման փուլեր, այնուհետև թիմերը միմյանց հետ փոխանակում են իրենց կազմած պլանները, համեմատում, կատարելագործում:
- Ուսուցչի հետ որոշում են կատարման ժամկետները:
- Մոբիլիզացնում են գիտելիքը և կարողությունները, սահմանում են, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերեն նախանշած խնդիրների վճռման համար:
- Թիմի անդամները սահմանում են և բաշխում գործառույթները:
- Թիմի անդամները գտնում են, ընտրում և մշակում տեղեկություններ:
- Ընտրում են նախագծի ներկայացման ձև:
- Իրականացնում են նախագիծը:
- Փորձեր են անում, մեկ այլ խմբի ներկայությամբ շնորհանդեսի կեղծակերպում են անում, մեկնաբանությունների, դիտողությունների նախատեսումով բարելավում են նախագիծը, նրա մեջ ուղղումներ ընդգրկում:
- Կազմում են նախագծի վերջնական տարբերակը և այն ներկայացնում լսարանի առջև:

## Ուղղություն՝ ուսանման ուսուցում

**Օտ.Բ-ՄՊՊ. 24.** Աշակերտն ուսուցչի օգնությամբ որոշում է կատարվելիք հանձնարարության պահանջները:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը*

- Մասնակցում է հանձնարարությունը հաջող իրականացնելու չափանիշների ձևակերպմանը:
- Առանձնացնում է հանձնարարության կատարման փուլեր:

- Սահմանում է այն գիտելիքը և կարողությունները, որոնց տիրապետում է և կօգտագործի հանձնարարության կատարման ժամանակ:
- Սահմանում է, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերի հանձնարարության կատարման համար:
- Որոշում է, թե ինչը հեշտ կանի, ինչից կդժվարանա, ինչում անհրաժեշտ կլինի օգնություն, խորհրդատվություն:
- Սահմանում է անհրաժեշտ ռազմավարություններ հանձնարարության յուրաքանչյուր փուլի համար:

**Օտ.Բ-ՄIII. 25. Աշակերտը ձեռք է բերում ռազմավարական կարողություններ՝ հաջող ուսուցման ապահովման համար:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը*

- Մինչև աշխատանքի սկսելը կատարում է գիտելիքի համախմբում:
- Մասնակցում է մտքերի փոխանակման, թե ինչպիսի մոտեցում կօգտագործեն այս կամ այն փուլում՝ կոնկրետ խնդրի լուծման ժամանակ:
- Աշխատանքի գործընթացում առաջացած հիմնախնդիրների դեպքում փոխում է ռազմավարությունները:
- Անհրաժեշտության դեպքում խնդրում է օգնություն, խորհրդատվություն:
- Աշխատանքն ավարտելուց հետո ներկայացնում է կիրառած ռազմավարությունները, համեմատում է ուրիշների կիրառած ռազմավարություններին:
- Համաձայնում է տարբերվող ռազմավարությունների փորձարկում-կիրառման:
- Համեմատում է տարբեր, այդ թվում նաև մայրենի լեզվի ուսանման ժամանակ ստացած փորձը միմյանց, որոշում է, թե որքանով պիտանի կլինի այս կամ այն ռազմավարությունը այլ լեզվի կամ առարկայի ուսանման գործընթացում:
- Վերլուծում է սխալների, թերությունների պատճառները:
- Մասնակցում է կիրառած ռազմավարությունների արդյունավետության գնահատմանը:
- Մասնակցում է ինքնագնահատման և համագնահատման (աշակերտ-ուսուցիչը կամ աշակերտ-աշակերտը միմյանցից անկախ ստուգում են միևնույն աշխատանքը):
- Դիտարկելով արդյունքները՝ նշում է, թե որտեղ ունի առաջընթաց:
- Վերլուծում է հաջողության թե անհաջողության պատճառները՝ դրանք հետագայում նկատի առնելու նպատակով:
- Անվանում է գործոցները և պատճառները, որոնք խանգարում են առաջընթացին (օրինակ համապատասխանաբար չկիրառեց ռեսուրսը, չկարողացավ ընդգծել ակտիվության գլխավոր խնդիրը, բաց թողեց մի փուլ, խնդիրն անհաղթահարելի թվաց, անտրամադիր էր և այլն):
- Նկատում է և անվանում իր թերությունները:

- Որոշում է, թե ինչ միջոցների պետք է դիմի թերութուններն ուղղելու համար:
- Սեփական նախաձեռնությամբ դիմում է սխալներն ուղղելու միջոցների:

**Օտ.Բ-ՄIII. 26. Աշակերտն օգտագործում է ռեսուրսներ ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը*

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները (բառարան, կառուցվածքային նմուշներ, քերականական տեղեկատու, պատկերազարդումներ և այլն):
- Տեղեկություններ է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսներից (դասագրքի ակներև նյութ, բառարան, դպրոցի, գյուղի, քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրազեկ անձ, համացանց և այլն):
- Տեղեկություններ, ուսումնական նյութ է գտնում հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով:
- Օգտագործում է ՏՀՏ այս կամ այն նյութը, տեքստը ստեղծելու, մշակելու համար:
- Օգտագործում է ՏՀՏ նախագծեր իրականացնելու համար:

**Օտ.Բ-ՄIII. 27. Աշակերտը դիմում է տարբեր միջոցների՝ բառապաշարի հաստատման և հարստացման համար:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը*

- Կանոնավոր կերպով կրկնում է անցած բառապաշարային նյութը:
- Որոշում է վատ յուրացրած բառապաշարային միավորները:
- Կիրառում է մտապահման տարբեր եղանակներ (մի քանի անգամ արտագրել, բարձրաձայն կրկնել, նույն հիմքով բառերի, հականշային, հոմանշային զույգերի խմբավորում, զուգորդություն, համատեքստի օգտագործում, խմբավորում թեմատիկայի համաձայն և այլն):

**Օտ.Բ-ՄIII. 28. Աշակերտը կիրառում է ռազմավարություններ՝ քերականության յուրացմանն օժանդակելու նպատակով (հեշտացնելու համար):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը*

- Կոնկրետ օրինակի դիտարկումով որոշում է քերականական կառույցները, կանոնները:
- Կիրառում է որոշած կառույցները, կանոնները տարբեր համատեքստերում:
- Միմյանց հետ համեմատում է մայրենի և օտար լեզվի քերականական կառույցները, օրինաչափությունները:



- Կիրառում է և ինքն էլ է ստեղծում գծապատկերներ, աղյուսակներ, կառուցվածքային նմուշօրինակներ:

**Օտ.Բ-ՄIII. 29. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների, ուսուցչի, զույգի հետ՝ արդյունքների բարելավման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ոգևորում է զույգին, թիմակցին:
- Խնդրում է կամ ինքն է առաջարկում օգնություն:
- Գործում է թիմի անդամների հետ համաձայնեցված, թիմակիցների հետ:
- Դատողություններ է անում՝ հիմնախնդիրը վճռելու, գործառույթները բաշխելու համար:
- Լսում է ուրիշների կարծիքները, արտահայտում է իրենը:
- Անհամաձայնության դեպքում աշխատում է հասնել համաձայնության:
- Աշխատում է իր ներդրումն անել ընդհանուր գործի մեջ:
- Ըստ անհրաժեշտության, մասնակցում է զույգի, թիմի անդամների համագնահատմանը:
- Քննադատում է գաղափարները և ոչ թե՛ գաղափարների հեղինակներին, գնահատելիս հանդես է բերում կռռելություն:
- Քաղաքավարի ձևով է մատնացույց անում ուրիշների թույլ տված սխալները:
- Մասնակցում է համագնահատման՝ արդյունքների բարելավման նպատակով:



IV մակարդակ  
Չեռքբերվելիք արդյունքները

Ուղղություն.		
Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ. Բ-Մ. IV. 1. Աշակերտը լսում է և հասկանում օտարալեզու խոսակիցների միջև ընթացող ինտերակտիվը (երկխոսություն, մենախոսություն, հարցազրույց), մենախոսությունը կենսական թեմաների մասին:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 2. Աշակերտը լսում է և հասկանում կարճ հրահանգները, տեղեկագրերը, հասարակական հավաքի վայրերում արված հայտարարությունները:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 3. Աշակերտը լսում է և հասկանում տեղեկատվական ռադիոհաղորդումները (տեղեկատվություն, զրոսաշրջական ռեպորտաժ, հարցազրույց) ծանոթ թեմատիկայով:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 4. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրվելիք խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և լսելու կարողության բարելավման նպատակով:</p>	<p>Օտ. Բ-Մ. IV. 5. Աշակերտը կարդում և հասկանում է բազմաստիճան հրահանգներ (համալիր հանձնարարության հրահանգ, խորհուրդ-խրատ, խաղի կանոններ, երաշխավորություններ և այլն):</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 6. Աշակերտը կարդում է և հասկանում տարբեր թեմաներով ստեղծված ճանաչողական տեքստեր (պատմական, մշակութային, հնագիտական, աշխարհագրական և այլն):</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 7. Աշակերտը հասկանում է կենսագրական բնույթի տեքստերը (կենսագրություն, հուշ, օրագիր, որպես ինքնակենսագրական տեքստ):</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 8. Աշակերտը կարդում է և հասկանում հարմարեցված պատմվածքը (կամ հատված պատմվածքից):</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 9. Աշակերտը որոշում է տեքստի կառուցվածքային բնութագրիչները, սովորած լեզվա-քերականական ձևերը և նրանց գործառույթը իմաստ ունեցող համատեքստում:</p>	<p>Օտ. Բ-Մ. IV. 12. Աշակերտը գրում է տարբեր տեսակի տեքստեր, որտեղ մանրամասնորեն նկարագրում է սեփական փորձը (անձնական նամակ, էսսե):</p> <p>ա) Նամակ է գրում իր օտարերկրացի հասակակցին (ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ):</p> <p>բ) Անձնական նամակներ է գրում իր մերձավորներին (ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ):</p> <p>գ) Գրում է էսսե, հոդված (ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ) դպրոցական կամ երիտասարդական ամսագրի համար, որտեղ հաղորդում է իր տպավորությունները (օրինակ՝ ճանապարհորդության տպավորություններ, արձագանք տեսած ներկայացման կամ անցկացված միջոցառման վերաբերյալ և այլն):</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 13. Աշակերտը գրում է պրագմատիկ բնույթի տեքստ (տուրիստական ուղեցույց, տեղեկատվական բուկլետ):</p>

Ուղղություն.		
Լսել	Կարդալ	Գրել
	<p>Օտ. Բ-Մ. IV. 10. Աշակերտը բարձրաձայն կարդում է տեքստ, հատվածներ:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 11. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և կարդալու կարողության բարելավման համար:</p>	<p>Օտ. Բ-Մ. IV. 14. Աշակերտը գրելիս պահպանում է տեքստի կառուցվածքը, ձևը է բերում և աշխատում գործնականում օգտագործել լեզվաքերականական բազիսային հմտություն-կարողություններ:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 15. Աշակերտն աշխատում է կիրառել տարբեր ռազմավարություններ գրելու գործընթացի բոլոր փուլերում (նախապատրաստական, տեքստ կազմելու, տեքստի բարելավման)՝ արդյունքի բարելավման նպատակով:</p>

Ուղղություն.			
Խոսել	Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն	Ուսանման ուսուցում
<p><i>Երկխոսություն</i></p> <p>Օտ. Բ-Մ. IV. 16. Աշակերտը մասնակցում է ինտերակտիվին:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 17. Աշակերտը կարողանում է իրեն դրսևորել կենցաղային հաղորդակցական իրավիճակներում:</p> <p><i>Մենախոսություն</i></p> <p>Օտ. Բ-Մ. IV. 18. Աշակերտը խոսում է կապակցված, իրեն ծանոթ թեմաների շուրջ:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 19. Աշակերտը ներկայացնում է բանավոր զեկուցում իրեն հետաքրքիր թեմայով:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 20. Աշակերտը ձեռք է բերում և գործնականում կիրառում լեզվաքերականական բազիսային հմտություն-կարողությունները:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 21. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և բանավոր խոսքի կարողության բարելավման նպատակով:</p>	<p>Օտ. Բ-Մ. IV. 22. Աշակերտը ծանոթ է նպատակային երկրի կամ երկրների մշակութային իրողություններին:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 23. Աշակերտը ծանոթ է նպատակային երկրի կամ երկրների սոցիո-մշակութային իրողություններին:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 24. Աշակերտը դրսևորում է հետաքրքրություն և հանդուրժողական է մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 25. Աշակերտը հանդուրժողական է անհատական տարբերությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.Բ-Մ IV. 26. Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ տոնակատարության կազմակերպում մույն քաղաքում, տարածաշրջանում գործող օտարերկրացիների հետ՝ հրուշակագործ, ձեռներեց, տեղական քանդարանի կատալոգի օտարալեզու տարբերակի ստեղծում՝ քաղաքապետարանի կայք-էջում տեղադրելու համար և այլ):</p>	<p>Օտ.Բ-Մ. IV. 27. Աշակերտն ինքնուրույն որոշում է կատարվելիք հանձնարարության պահանջները:</p> <p>Օտ.Բ-Մ. IV. 28. Աշակերտն օգտագործում է ռազմավարական կարողություններ՝ հաջող ուսուցման ապահովման համար:</p> <p>Օտ.Բ-Մ. IV. 29. Աշակերտն օգտագործում է ռեսուրսներ ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:</p> <p>Օտ.Բ-Մ. IV. 30. Աշակերտը մշակում է տեղեկություն՝ նրա մտապահմանն ու արդյունավետ օգտագործմանն օժանդակելու նպատակով:</p> <p>Օտ.Բ-Մ. IV. 31. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների ուսուցչի, գույզի հետ՝ արդյունքների բարելավման նպատակով:</p>

## Ուսուցման արդյունքներ և ստուգիչներ

### Ուղղություն՝ ունկնդրում

(Լսելու կարողության զարգացման համար օգտագործվում են ուսումնական նպատակով ստեղծված լսաերկրներ)

**Օտ. Բ-Մ. IV. 1. Աշակերտը լսում է և հասկանում օտարալեզու խոսակիցների միջև ընթացող ինտերակտիվը (երկխոսություն, մենախոսություն, հարցազրույց), մենախոսությունը կենսական թեմաների մասին:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է, թե որտեղ է ընթանում զրույցը:
- Որոշում է զրուցակիցներին:
- Որոշում է զրույցի հիմնական թեման, հարցերը:
- Հավաքում է կոնկրետ տեղեկությունները (ով, ինչ, որտեղ, երբ, որ, ինչպիսի, որքան, ինչու և այլն):
- Որոշում է զրուցակիցների վերաբերմունքը, գնահատումը՝ կապված այս կամ այն հարցի հետ:
- Ջրույցի բովանդակությունից ելնելով՝ եզրակացություն է անում զրուցակիցների բնավորության, գործունեության, հետաքրքրությունների, սոցիալական վիճակի և նրանց միջև առկա հարաբերությունների մասին (բարեկամական, կոնֆլիկտային, գործնական, վաղուցվա ծանոթներ, նոր ծանոթացածներ և այլն):
- Հնչերանգով տարբերում է ասելիքի երանգը (հարց, խնդրանք, պահանջ, նկատողություն, ավստասանք, բողոքարկում):
- Տարբերում է դիմումի քաղաքավարի և մտերմական ձևերը:

**Օտ. Բ-Մ. IV. 2. Աշակերտը լսում է և հասկանում կարճ հրահանգները, տեղեկագրերը, հասարակական հավաքի վայրերում արված հայտարարությունները:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է տեքստի նպատակը (գովազդ, տեղեկացում և այլն):
- Որոշում է հասցեատիրոջը (ու՞մ համար է հատկացված տեղեկությունը):
- Տեքստից հավաքում է կոնկրետ տեղեկությունները (օրինակ՝ իրի շահագործման կանոնները, զբոսաշրջական գործակալության կոնկրետ առաջարկություններ, իրի բնութագրիչները, մթերքի գինը, ուղևորվելու ժամանակը, անվտանգության կանոնները և այլն):

**Օտ. Բ-Մ. IV. 3. Աշակերտը լսում է և հասկանում տեղեկատվական ռադիոհաղորդումները (տեղեկատվություն, զբոսաշրջական ռեպորտաժ, հարցազրույց ) ծանոթ թեմատիկայով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է հաղորդման խորագիրը (լուրեր արտասահմանից, սպորտի, մշակույթի լուրեր, մամուլի վերլուծություն, ռեպորտաժ և այլն):
- Որոշում է հիմնական, հարցերը:
- Տեքստից հավաքում է կոնկրետ տեղեկությունները (ով, երբ, ուր, ինչպիսի, որքան և այլն):
- Միմյանցից սահմանազատում է հարցում անցկացնողի և թղթակցի վերաբերմունքները, գնահատումները:
- Տարբերում է փաստերը վերաբերմունքներից:
- Կոնկրետ մանրամասները կապում է հիմնական տեղեկության հետ:
- Անում է կոնկրետ եզրակացություններ:

### Լսելու ռազմավարություններ

**Օտ. Բ-Մ. IV. 4. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրվելիք խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և լսելու կարողության բարելավման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Կենդանի խոսք, ձայնագրություն լսելիս՝ օգտվում է ոչ բառային միջոցներից (ձայնի տեմբր, հնչերանգ, դիմախառ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտ, պատկերազարդում, գծապատկեր և այլն):
- Հիմնվելով ծանոթ տարրերի վրա (հաղորդակցական իրավիճակ, համատեքստ, ծանոթ լեզվական կառույցներ)՝ որոշում է անծանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Նշում է անծանոթ բառերը՝ դրանց նշանակությունը պարզելու համար:
- Կոնկրետ տեղեկությունը որոշելու համար կիրառում է սելեկցիոն ունկնդրման ռազմավարությունը:
- Նպատակին համապատասխան փոխում է լսելու ռազմավարությունը. ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար հիմնվում է ծանոթ բառերի, ոչ բառային տարրերի վրա և որոշում է հաղորդակցական իրավիճակը, համատեքստը, զրույցի թեման: Կոնկրետ տեղեկությունը որոշելու համար ընտրում է կոնկրետ հենարաններ, ուշադրությունը դրանց վրա կենտրոնացնելով, հավաքում է անհրաժեշտ տեղեկությունը:

- Նկարագրում է, թե ինչ եղանակով, ճանապարհով է կարողացել վճռել լսելու խնդիրը:
- Համեմատում է ուրիշների ընտրած եղանակին և անում եզրակացություն, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Հիշում է, թե ուրիշ առարկաներից ինչ տիպի ռազմավարություն է օգտագործել տեղեկություն լսելիս, համեմատում է հին և նոր փորձը, անում եզրակացություններ:
- Դատողություն է անում, թե որ ուսումնական թե կենսական իրավիճակում կարող են անհրաժեշտ լինել օգտագործած, քննարկած ռազմավարությունները:
- Օտար լեզվով դիտում է և լսում իրեն հետաքրքիր հեռուստա-, ռադիոհաղորդումներ, ֆիլմեր:

### Ուղղություն՝ ընթերցանություն

**Օտ. Բ-Մ. IV. 5. Աշակերտը կարդում և հասկանում է բազմաստիճան հրահանգներ (համալիր հանձնարարության հրահանգ, խորհուրդ-խրատ, խաղի կանոններ, երաշխավորություններ և այլն):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է հասցեատիրոջը:
- Որոշում է կատարված գործողությունները:
- Որոշում է գործողությունների կատարման հաջորդականությունը:

**Օտ. Բ-Մ. IV. 6. Աշակերտը կարդում է և հասկանում տարբեր թեմաներով ստեղծված ճանաչողական տեքստեր (պատմական, մշակութային, հնագիտական, աշխարհագրական և այլն):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է գլխավոր թեման, հարցերը:
- Որոշում է տեքստում մակերեսային տրված փաստական տեղեկությունը:
- Տեքստը բաժանում է իմաստային մասերի:
- Կոնկրետ բնութագրիչների համաձայն՝ տեղեկություններ է հավաքում (նմանություն-տարբերություն, աճող-նվազող աստիճան և այլն):
- Մահմանագատում է փաստը ենթադրությունից, գնահատումից:
- Որոշում է տեքստի տարբեր հատվածներում տրված փաստերի և երևույթների միջև առկա կապը (տրամաբանական, ժամանակագրական) և անում համապատասխան եզրակացություններ:
- Տեքստում տրված տեղեկությունը կապում է անձնական փորձի հետ:



**Օտ. Բ-Մ. IV. 7. Աշակերտը հասկանում է կենսագրական բնույթի տեքստերը (կենսագրություն, հուշ, օրագիր, որպես ինքնակենսագրական տեքստ):**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Որոշում է պատմողին:
- Միմյանցից տարբերում է հեղինակին, պատմողին, դեպքերին մասնակից անձին:
- Սահմանում է իրադարձությունների ժամանակը և տեղը (ժամանակաշրջան, ծննդյան ժամանակը և վայրը և այլն):
- Անվանում է անձնավորության գործունեության բնագավառը, որում հռչակել է իրեն:
- Որոշում է կարիերայի փուլերը:
- Տեքստում տրված տեղեկությունների (գործունեության, հարաբերության, վարքի) համաձայն՝ բնութագրում է անձնավորությանը:
- Որոշում է, թե ինչին է հիմնվում հեղինակը (սեփական հիշողությանը, գրավոր աղբյուրին, ուրիշի պատմածին և այլն):

**Օտ. Բ-Մ. IV. 8. Աշակերտը կարդում է և հասկանում հարմարեցված պատմվածքը (կամ հատված պատմվածքից):**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Վերնագիրը գիտակցված կապում է տեքստի հետ:
- Որոշում է պատմողին, գործող անձանց:
- Որոշում է գործողությունների հաջորդականությունը:
- Անվանում է կոնկրետ տեղեկությունը ( ով, ուր, ինչպիսի, ինչպես, ինչու և այլն):
- Որոշում է գործող անձանց վարքի դրսևապատճառը և գնահատում է նրանց վարքը:
- Որոշում է գործող անձանց միջև գոյություն ունեցած հարաբերությունները:
- Բնութագրում է գործող անձանց՝ հիմնվելով բացատրական բնույթի տեղեկության վրա:
- Ստեղծագործության մեջ առանձնացնում է սյուժեի զարգացման աստիճանները (սկիզբ, գործողության ընթացք, ավարտ):

**Օտ. Բ-Մ. IV. 9. Աշակերտը որոշում է տեքստի կառուցվածքային բնութագրիչները, սովորած լեզվա-քերականական ձևերը և նրանց գործառույթը իմաստ ունեցող համատեքստում:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Գնահատում է, թե որքանով է տեքստի դիզայնն օգնում նրա բովանդակության ընկալմանը (պատկերազարդումների և տեքստի հարաբերությունը, տառատեսակի չափսը և տարատեսակները, տեքստի բաժանում պարբերությունների, սյունակների, մասերի վերնագրում և այլն):
- Որոշում է արտահայտությունները և բառերը, որոնք ընթերցողին օգնում են սահմանազատել փաստը գնահատումից, վերաբերմունքից, տեսակետից (միջանկյալ բառեր և արտահայտություններ, տարբեր եղանակներ արտահայտող բայեր):
- Բացատրում է, թե որտեղ են սկսվում և ավարտվում պատմության զարգացման աստիճանները և ինչ բառեր են օգտագործվում դրա համար (այն ժամանակ .. երբ, վաղուց, դեռ, այնուհետև, վերջում ...):
- Բնութագրում է տեքստը կամ նրա հատված խոսողության գործընթացին մասնակցող անձանց քանակի համաձայն (մենախոսություն, երկխոսություն ...):
- Նշում է, թե տեքստում որ դեմքն է հեղինակը՝ առաջին, թե երրորդ:
- Որոշում է ուղիղ և անուղղակի խոսքը և տարբերում է ուրիշի խոսքը:
- Տարբերում է անհրաժեշտություն, խորհուրդ, արգելք արտահայտող լեզվական կառույցները:
- Որոշում է գործողության ինտենսիվություն (հաճախականություն) արտահայտող լեզվական միջոցները (մակբայ, բայի եղանակը, կայուն բառակապակցություն):
- Որոշում է հույզեր (վիշտ, բավականություն, դժգոհություն, ուրախություն, գոհունակություն և այլն) արտահայտող լեզվական միջոցները:
- Որոշում է ուղղություն, կողմնորոշում, տեղ, հեռավորություն, դիրք արտահայտող լեզվական կառույցներ, բանաձևեր, բառեր:
- Տարբերում է համեմատություն արտահայտող լեզվական միջոցները (նմանություն, տարբերություն, հարաբերականություն, հավասարություն և այլն):
- Ճանաչում է գործողությունների հաջորդականություն արտահայտող պարզ լեզվական կառուցվածքները (նախորդող և հաջորդող գործողության):
- Ճանաչում է կամք-ցանկություն, խորհուրդ-խրատ (արգելք, անհրաժեշտություն, ցանկալիություն, խորհուրդ տալ) արտահայտող լեզվական կառույցներ:
- Որոշում է տրամաբանական կապեր արտահայտող լեզվական կառույցները (օրինակ՝ պատճառ, հետևանք, հանդիպադրում, պայմանականություն):

- Որոշում է իմաստային կապեր արտահայտող լեզվա-քերականական միջոցները (օր.՝ *կրկնական դերանուններ և մակբայներ, բառերի իմաստային և բառապաշարային կրկնություններ, հոմանշային և հականշային փոխակերպումներ, բայ-ստորոգյալի ժամանակա-եղանակային ձևեր և այլն*):

**Օտ. Բ-Մ. IV. 10. Աշակերտը բարձրաձայն կարդում է տեքստ, հատվածներ:**

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Ընտրում է տեքստ, հատված, որը կամենում է ընթերցել լսարանի առջև:
- Մինչև ընթերցելը գիտակցում է տեքստի բովանդակությունը:
- Բովանդակությանը համապատասխան փոխում է խոսքի տեմպը, ձայնի երանգը, բարձրությունը):
- Հնչերանգով արտահայտում է տեքստում արտացոլված հույզերը:
- Կետադրական նշանների գործառույթով կիրառում է հնչերանգը:
- Կարդալու ընթացքում աշխատում է տեսողական կապ հաստատել լսարանի հետ:
- Խոսում է պարզ և հստակ:

### Կարդալու ռազմավարություններ

**Օտ. Բ-Մ. IV. 11. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և կարդալու կարողության բարելավման համար:**

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Կիրառում է ճանաչողական ընթերցանության միջոցները. դիտարկում է տեքստի կառուցվածքը, վերնագիրը, պարբերությունները, պատկերազարդումները, մակագրությունները, ընդգծված բառերը և այլն: Անձանոթ բառերի դեպքում կանգ չի առնում:
- Կիրառում է ուսուցողական ընթերցանության միջոցները. առաջին ընթերցման ժամանակ ամբողջությամբ ծանոթանում է տեքստին, դժվարությունների հաղթահարման համար վերընթերցում է անհասկանալի, բարդ կամ կարևոր մասերը, համատեքստի, ունեցած փորձի կամ բառարանի միջոցով ճշտում է անձանոթ բառերի նշանակությունը:
- Կիրառում է որոնողական ընթերցանության միջոցները. կոնկրետ տեղեկություն գտնելու նպատակով արագ ընթերցում է տեքստը, որոնում է հենակետեր. հանգուցային բառեր, պարբերությունների առաջին նախադասություններ, խորագրեր, պարզաբանումներ, գծապատկերներ, աղյուսակ և այլն):

- Ինքնուրույն որոշում է անձանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը՝ ծանոթ տարրերի օգնությամբ (պատկերազարդումներ, ծանոթ հիմք, համատեքստ, մայրենի լեզվում հաստատված օտար բառեր և այլն):
- Տարբեր տարրերի օգնությամբ (վերնագիր, պարբերությունների սկիզբ, հանգուցային բառեր, որևէ պարբերություն, ընդգծված բառեր) ենթադրություն է անում տեքստի բովանդակության մասին:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով կարողացավ վճռել ընթերցանական խնդիրը:
- Համեմատում է ուրիշի ընտրած եղանակին և անում է եզրակացություն, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ ռազմավարություն է օգտագործել տարբեր տեքստերի ընթերցման ժամանակ, համեմատում է հին և նոր փորձը, անում է եզրակացություններ:
- Դատողություն է անում, թե որ կենցաղային իրավիճակում կարող են իրեն անհրաժեշտ լինել օգտագործած, քննարկած ռազմավարությունները:
- Ընթերցանության խնդիրների վճռման համար օգտագործում է ինչպես մայրենի, այնպես էլ այլ լեզվով ստացած փորձը:

### Ուղղություն՝ գրավոր խոսք

Օտ. Բ-Մ. IV. 12. Աշակերտը գրում է տարբեր տեսակի տեքստեր, որտեղ մանրամասնորեն նկարագրում է սեփական փորձը (անձնական նամակ, էսսե):

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

ա) Նամակ է գրում իր օտարերկրացի հասակակցին (ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ):

- Պահպանում է թղթակցության ձևական կողմը (ղիմումի և հրաժեշտի բանաձև, ստորագրություն, հասցե, ամսաթիվ):
- Ներկայացնում է իրեն, իր ընտանիքը:
- Մատնանշում է իր տարածաշրջանի, քաղաքի, գյուղի գտնվելու վայրը:
- Նկարագրում է, թե ինչով է զբաղված, ինչպես է անցկացնում ազատ ժամանակը:
- Բնութագրում է իր բարեկամներին:
- Մանրամասնորեն նկարագրում է իր երկրամասի հետաքրքիր ավանդույթները, որոնց ինքը մասնակցել է (օրինակ՝ տոնակատարություն, որտեղ և երբ են նշում, ինչպես է ընթանում, ինքն ինչ էր անում, ինչպիսին են իր տպավորությունները):
- Հասցեատիրոջը հարցեր է առաջադրում՝ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանը ստանալու համար:

- Հրավիրում է և բացատրում, թե ժամանելու դեպքում ինչ կանեն և ինչպես կանցկացնեն ժամանակը:
- Հետևողականորեն, հստակ և հասկանալի ձևակերպում է իր միտքը:

**բ) Անձնական նամակներ է գրում իր մերձավորներին՝**

**ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ:**

- Պահպանում է թղթակցության ձևական կողմը (դիմելու և հրաժեշտի բանաձև, ստորագրություն, հասցե, ամսաթիվ):
- Հասցեատիրոջը հարցեր է տալիս:
- Տեղեկացնում է իր անձնական կյանքի հետ կապված նորություններ:
- Մանրամասնորեն նկարագրում է կոնկրետ պատմություններ (օրինակ՝ ինչպես հանդիպեց վաղուց չտեսած ընկերոջը, որտեղ, ինչ իրավիճակում, ինչպես ընթացավ հանդիպումը, ինչով ավարտվեց):
- Նկարագրում է սեփական վերաբերմունքը, տրամադրվածությունը, արձագանքները՝ կոնկրետ իրավիճակի, երևույթի հետ կապված:
- Լուսաբանում է անձնական կյանքում ծագած որևէ հիմնախնդիր (օրինակ՝ թե ինչու անհամաձայնություն ունեցավ մոտ ընկերոջ հետ՝ նկարագրում է իրավիճակը, անհամաձայնության պատճառները և խորհուրդ է խնդրում):
- Խնդրում է կամ տալիս է խորհուրդ, օգնություն է խնդրում կամ ինքն է օգնում:
- Հետևողականորեն, հստակ և հասկանալի ձևակերպում է իր միտքը:

**գ) Գրում է էսսե, հոդված (ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ) դպրոցական կամ երիտասարդական ամսագրի համար, որտեղ հաղորդում է իր տպավորությունները (օրինակ՝ ճանապարհորդության տպավորություններ, արձագանք տեսած ներկայացման կամ անցկացված միջոցառման վերաբերյալ և այլն):**

- Ներկայացնում է ինքն իրեն:
- Ներածական մասում ընթերցողին հայտնում է ակնարկի թեման:
- Մանրամասնորեն նկարագրում է իրավիճակները, տպավորություններ, հաղորդում է կոնկրետ փաստեր, պատմություններ (օրինակ՝ ուր է եղել, ինչ է տեսել, ինչպիսին է և այլն):
- Հաղորդում է հույզեր, ապրումներ, տրամադրվածություններ, որ առաջացել է տեսածից:
- Անում է գնահատումներ, արտահայտում է վերաբերմունքներ:
- Վերնագրում է էսսեն, հոդվածը:
- Հետևողականորեն, հստակ և հասկանալի ձևակերպում է միտքը:

**Օտ. Բ-Մ. IV. 13. Աշակերտը գրում է պրագմատիկ բնույթի տեքստ (տուրիստական ուղեցույց, տեղեկատվական բուկլետ):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Սահմանում է հասցեատիրոջը (օրինակ՝ տարածաշրջանում ապրող օտերկրյա հասակակից, բարեկամացած դպրոցների աշակերտներ):
- Որոշում է տեքստի ձևաչափը (օրինակ՝ բուկլետ քաղաքապետարանի կայքէջում տեղադրելու համար և այլն):
- Սահմանում է նպատակը (գրոսաշրջիկների տեղեկացում տարածաշրջանում գոյություն ունեցած տեսարժան վայրերի մասին, օտարերկրյա հասակակիցների տարածաշրջան գալ և այլն):
- Նպատակից ելնելով՝ կազմում է խորագրեր (օրինակ՝ տեսարժան վայրեր, զվարճալիքներ, անվանի մարդիկ, տեղական կերակրատեսակներ և այլն):
- Յուրաքանչյուր խորագրի համար գրում է տեղեկատվական տեքստեր, որտեղ նկարագրում է մանրամասները և անում գնահատումներ:
- Հրահանգներ է տալիս:
- Տալիս է համապատասխան խորհուրդներ, խրատներ:
- Տեքստը համապատասխանաբար է ձևակերպում (լուսանկար, նկար, քարտեզ, պլան և այլն):
- Հստակ և հասկանալի է ձևակերպում իր միտքը:

**Օտ. Բ-Մ. IV. 14. Աշակերտը գրելիս պահպանում է տեքստի կառուցվածքը, ձեռք է բերում և աշխատում գործնականում օգտագործել լեզվա-քերականական բազիսային հմտություն-կարողություններ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Կիրառում է կանք-ցանկություն, խորհուրդ-խրատ արտահայտող լեզվական կառույցներ, բանաձևեր:
- Ազատ օգտագործում է բայաձևերը՝ ներկա, անցյալ և ապառնի ժամանակներ արտահայտելու համար:
- Կիրառում է պարզ լեզվական կառույցներ՝ տրամաբանական կապերի (օրինակ՝ պատճառ, հետևանքային, հանդիպադրում, պայմանականություն) արտահայտման համար:
- Հաղորդակցական իրավիճակին, նպատակին համապատասխան ընտրում է սովորած լեզվական կառույցները, կաղապարները, բանաձևերը:
- Օգտագործում է հույզեր, վերաբերմունքներ, տպավորություններ

արտահայտող հաճախ օգտագործվող լեզվական միջոցներ (բառապաշարային միավորներ, կայուն բառակապակցություններ, կաղապարներ, լեզվական կառուցվածքներ):

- Կիրառում է պարզ կառուցվածքներ գործողությունների համաժամանակության և հաջորդականության (նախորդող, հաջորդող գործողություններ) արտահայտման համար:
- Անձին, առարկան, իրադարձությունը բնութագրելիս՝ ընտրում է համապատասխան լեզվական միջոցներ (որոշիչներ, համեմատություններ, ածական դերբայներ):
- Տեքստի ստեղծման ժամանակ պահպանում է իմաստային կապի պարզ լեզվաքերականական միջոցները, համապատասխան համատեքստում ճիշտ է անունների փոխարեն օգտագործում դերանուններ և պարզ մակբայներ:
- Մի իմաստային մասից մյուսին անցնելու համար կիրառում է համապատասխան բառեր և լեզվական բանաձևեր (*համապատասխանաբար, բացի այդ, օրինակ*):
- Նկարագրում-բնութագրման ժամանակ կիրառում է տարբեր տեսակի համեմատություն:
- Պահպանում է կետադրության (բարդ նախադասություններում, երկխոսության հաղորդման ժամանակ) և ուղղագրության նորմերը:

### Գրելու ռազմավարություններ

**Օտ. Բ-Մ. IV. 15. Աշակերտն աշխատում է կիրառել տարբեր ռազմավարություններ գրելու գործընթացի բոլոր փուլերում (նախապատրաստական, տեքստի կազմելու, տեքստի բարելավման) արդյունքի բարելավման նպատակով:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Նախատեսելով նախանշված հաղորդակցական խնդիրը՝ հիշողության մեջ գտնում է անհրաժեշտ տեղեկությունը, կամ ակտիվացնում է անհրաժեշտ գիտելիքն ինչպես լեզվական, այնպես էլ իմաստային թե հաղորդակցական տեսակետից՝ տվյալ սյուժեի հետ կապված ինչ գիտելիք ունի, նաև կապված տեքստի տեսակի և նրա կառուցվածքային թե լեզվական բնութագրիչների հետ: Մտաբերում է այլ լեզուներից ստացած փորձը:
- Անհրաժեշտության դեպքում ռեսուրսներում գտնում է լրացուցիչ տեղեկություններ:
- Դիմում է մտավոր գրոհի և գրում է բոլորի գաղափարները, որ այդ պահին կմտածի՝ կապված գրելու թեմատիկայի հետ:
- Ընտրում է տեղեկություններ և գաղափարներ, մտածում, թե ինչպես դրանք

կկապի իրար հետ կամ կմշակի պլան:

- Տեքստը գրում է՝ հիմնվելով պլանին:
- Գրածն ուղղելիս՝ փորձում է այն գնահատել հասցեատիրոջ կամ հավանական ընթերցողի տեսանկյունից, թե որքանով արդյունավետ արտացոլվեց գրածում հաղորդակցական նպատակը:
- Աշխատում է ուղղել իմաստային թերությունները, որոնք հնարավոր է ընթերցողի համար խնդիրներ առաջացնեն կամ որոշ չափով խափանեն հաղորդակցությունը՝ ավելացնում է կամ հանում բառ, նախադասություն, տեքստի մի հատված, փոխում կառուցվածքը, կատարելագործում դիզայնը:
- Ուղղում է քերականական և ուղղագրական սխալները, դրա համար կիրառում է ուսումնական ռեսուրսները:
- Կարդալ է տալիս համադասարանցուն, նրա դիտողությունների նախատեսումով բարելավում է գրածը:
- Մաքրագրում է գրածը:
- Հիշում է, թե, տեքստ կազմելիս այլ առարկաներից ինչ ռազմավարություն է օգտագործել, համեմատում է հին և նոր փորձը, անում եզրակացություններ:
- Դատողություն է անում, թե որ ուսումնական թե կենսական իրավիճակում կարող են անհրաժեշտ լինել կիրառած ռազմավարությունները:

## Ուղղություն՝ խոսողություն

### Երկխոսություն

Օտ. Բ-Մ. IV. 16. Աշակերտը մասնակցում է ինտերակտիվին:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Առանց նախապատրաստվելու կարողանում է տեղեկություն փոխանակել իրեն լավ ծանոթ թեմատիկայով:
- Այս կամ այն վիճելի հարցի հետ կապված առանց նախապատրաստվելու արտահայտում է իր վերաբերմունքը, դիրքորոշումը և բացատրում է այն (ինչ է հավանում, չի հավանում, ինչու):
- Անում է տարբեր տեսակ ընտրություն և բացատրում այն (օրինակ՝ որ հեռուստահաղորդումն է նախընտրում և ինչու, որ երկրում է ուզում ճանապարհորդել և ինչու և այլն):
- Կարողանում է արձագանքել զրուցակիցների ռեպլիկներին՝ ճշգրտում է տեղեկությունը, անում մեկնաբանություն:
- Արտահայտում է իր հույզերը, տրամադրվածությունը:
- Կարողանում է երևույթները, փաստերը, վարմունքները գնահատել իր դիրքորոշումից:



**Օտ. Բ-Մ. IV. 17. Աշակերտը կարողանում է իրեն դրսևորել կենցաղային հաղորդակցական իրավիճակներում:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Առանց նախապատրաստվելու՝ մասնակցում է այնպիսի կեղծակերպած իրավիճակների, որոնք արտացոլում են ամենօրյա կենցաղային իրավիճակ (ընկերները պլանավորում են շաբաթ-կիրակի էքսկուրսիա գնալ, դատողություն են անում ուր գնալ, ինչով, այնտեղ ինչ կանեն, ինչ կուտեն և այլն):
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա՝ մասնակցում է այնպիսի կեղծակերպած իրավիճակներում, որոնք անսպասելի, անսովոր իրավիճակ են արտացոլում (*օրինակ՝ մի մարդ մեծ ոգևորությամբ հանդիպում է մեկ ուրիշ մարդու, վերջինս նրան չի ճանաչում, մի մարդը կոնկրետ հիմնախնդիր ունի, պատմում է ընկերոջը: Վերջինս խորհուրդներ է տալիս*):
- Հարցազրույց է անցկացնում կամ իր հետ են անցկացնում հարցազրույց՝ կապված հրատապ հարցի հետ:

### Մենախոսություն

**Օտ. Բ-Մ. IV 18. Աշակերտը խոսում է կապակցված, իրեն ծանոթ թեմաների շուրջ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Մանրամասնորեն խոսում է իր փորձի մասին, նկարագրում է սեփական հույզերը, արձագանքները:
- Հաղորդում է որևէ դեպքի նշանակալից մանրամասներ:
- Պատմություն է պատմում:
- Պատմում է երազ, իրական թե երևակայական իրադարձություն:
- Միտքը ձևակերպում է հստակ և հասկանալի:

**Օտ. Բ-Մ. IV. 19. Աշակերտը ներկայացնում է բանավոր զեկուցում իրեն հետաքրքիր թեմայով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Անվանում է թեման:
- Ներածական մասում ներկայացնում է քննարկվելիք հարցերը:
- Ապացույցներ է բերում և համապատասխան փաստեր, օրինակներ:
- Խոսելիս օգտագործում է տեսողական նյութ:
- Իր վերաբերմունքն է արտահայտում կոնկրետ տեղեկության, քննարկվելիք հարցի վերաբերյալ:

- Անում է եզրակացություն:
- Միտքը ձևակերպում է հետևողականորեն, հստակ և հասկանալի:

**Օտ. Բ-Մ. IV. 20. Աշակերտը ձեռք է բերում և գործնականում կիրառում լեզվա-քերականական բազիսային հմտություն-կարողությունները:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Ինտերակտիվ հաղորդակցության ժամանակ համապատասխանաբար է ընտրում սովորած լեզվական կառույցները և բանաձևերը, կադապարներ:
- Ինտերակտիվ հաղորդակցության ժամանակ համապատասխանաբար է կիրառում մտերմական և հարգալից ձևերը:
- Կիրառում է գրույցի թեմային համապատասխան բառապաշար:
- Օգտագործում է հաճախ օգտագործված, պարզ կառուցվածք ունեցող ստորադասական նախադասություններ:
- Կիրառում է կանք-ցանկություն, խորհուրդ-խրատ արտահայտող լեզվական կառույցներ, բանաձևեր:
- Սովորած լեզվական կառույցներում պահպանում է շարահյուսական հարաբերությունները:
- Պատմություններ հաղորդելիս՝ աշխատում է ճիշտ օգտագործել բայի սովորած ձևերը՝ ներկա, անցյալ և ապառնի ժամանակներ արտահայտելու համար:
- Օգտագործում է հույզեր, վերաբերմունքներ, տպավորություններ արտահայտող հաճախ օգտագործվող լեզվական միջոցներ (բառապաշարային միավորներ, կայուն բառակապակցություններ, կադապարներ, լեզվական կառույցներ):
- Գործողությունների համաժամանակության և հաջորդականության արտահայտման համար օգտագործում է պարզ կառուցվածքներ (նախորդող, հաջորդող գործողություններ):
- Անձ, առարկա, երևույթ նկարագրելիս՝ ընտրում է համապատասխան լեզվական միջոցներ (որոշիչներ, համեմատություններ, ածական դերբայներ):
- Լուր հաղորդելիս՝ ճիշտ է օգտագործում իրադարձությունների հաջորդականությունը արտահայտող բառեր (*սկզբից, դեռ, վերջում, ավարտին*), բայի անցյալ ժամանակաձևեր:
- Զգացմունքներ և հույզեր արտահայտելիս՝ կիրառում է կոնկրետ եղանակին բնորոշ հնչերանգ:
- Տրամաբանական կապեր արտահայտելու համար կիրառում է պարզ լեզվական կառուցվածքներ (*պատճառ, հետևանք, նպատակ, պայմանականություն*):

## Խոսելու ռազմավարություններ

**Օտ. Բ-Մ. IV. 21. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և բանավոր խոսքի կարողության բարելավման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Նախօրոք պատրաստում է անհրաժեշտ ռեսուրսը, հավաքում է մոդելներ, արտահայտություններ, կադասյարներ, հանգուցային բառեր:
- Մինչև լսարանի առջև ելույթ ունենալը փորձեր է անում:
- Չհասկանալու դեպքում խնդրում է բացատրել, դանդաղ և հստակ արտասանել, կրկնել:
- Բառը մոռանալու, չգիտենալու դեպքում կիրառում է փոխհատուցող միջոցներ (օրինակ՝ դիմախաղ, ձեռածություն, շրջասություն, նկարագրում է նկատի ունեցած առարկան կամ նշում է, թե ինչում է օգտագործվում և այլն):
- Խոսողական խնդիրներ վճռելու համար՝ օգտագործում է այլ լեզուներից ստացած փորձը:
- Վերլուծում է այն գործոնները, որոնք օժանդակեցին հաջողությանը կամ բանավոր ելույթի ժամանակ անհաջողության պատճառ դարձան և ուսուցչի հետ նախանշում է ուղղելու պլանը:

## Ուղղություն՝ մշակույթների երկխոսություն

**Օտ. Բ-Մ. IV. 22. Աշակերտը ծանոթ է նպատակային երկրի (երկրների) մշակութային իրողություններին:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ճանաչում է պետական խորհրդանշանները (դրոշ, զինանշան, օրհներգ և այլն):
- Անվանում է նպատակային երկրի, երկրների հետ կապված աշխարհագրական, ժողովրդագրական տվյալներ, նշանակալի պատմական իրադարձություններ (օրինակ՝ նպատակային երկրների մայրաքաղաքները, Գերմանիայի միավորման օրը, Բաստիլը գրավելու օրը և այլն):
- Որոշում է արվեստի և ճարտարապետության նմուշները (օրինակ՝ Բրադենբուրգի պարիսպը, Փարիզի Աստվածամոր տաճարը, Բիգ-Բենը, Օստանկինոյի աշտարակը և այլն):
- Որոշում է պատմական դեմքերին և անվանի մարդկանց (օրինակ՝ Վոլֆգանգ Գյոթե, Շառլ Դե Գոլ, թագուհի Եղիսաբեթ Երկրորդ, Ալեքսանդր Պուշկին), անվանում է գործունեության ոլորտները, ժամանակաշրջանը, վաստակը:
- Անվանում է տոնակատարությունները և տոները:

**Օտ. Բ-Մ. IV. 23. Աշակերտը ծանոթ է նպատակային երկրի կամ երկրների սոցիո-մշակութային իրողություններին:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ճանաչում է վարքի կանոնները կենցաղային իրավիճակներում (ողջույն, հրաժեշտ, հրավերք, հյուրընկալում, ճաշկերույթի արարողակարգեր և այլն):
- Ճանաչում է հասարակության մեջ վարվելու կանոնները:
- Ճանաչում է նպատակային երկրների ավանդույթները, բարքերը, սովորույթները:

**Օտ. Բ-Մ. IV. 24. Աշակերտը դրսևորում է հետաքրքրություն և հանդուրժողական է մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Չուզահեռներ է անցկացնում արտասահմանյան և հայրենի մշակույթների միջև, գտնում է նմանություններ և տարբերություններ:
- Քաղաքավարի արտահայտում է իր կարծիքը, տեսակետը, վերաբերմունքը՝ մշակութային առանձնահատկությունների մասին դատողություն անելիս:

**Օտ. Բ-Մ. IV. 25. Աշակերտը հանդուրժողական է անհատական տարբերությունների նկատմամբ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Չուզահեռներ է անցկացնում արտասահմանյան և հայրենի մշակույթների միջև և գտնում է նմանություններ և տարբերություններ:
- Քաղաքավարի արտահայտում է իր կարծիքը, տեսակետը, վերաբերմունքը՝ մշակութային առանձնահատկությունների մասին դատողություն անելիս:

### Ուղղություն՝ օտար լեզվի գործնական կիրառություն

**Օտ.Բ-Մ IV. 26. Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ տոնակատարության կազմակերպում նույն քաղաքում, տարածաշրջանում գործող օտարերկրացիների հետ՝ հրուշակագործ, ձեռներեց, տեղական թանգարանի կատալոգի օտարալեզու տարբերակի ստեղծում՝ քաղաքապետարանի կայք-էջում տեղադրելու համար և այլ):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ուսուցչի հետ միասին ձևակերպում է նախագծի հաջող իրականացման

չափանիշներ:

- Թիմի անդամներն ինքնուրույն սահմանում են նախագծի իրականացման փուլեր, այնուհետև թիմերը միմյանց հետ փոխանակում են իրենց կազմած պլանները, համեմատում, կատարելագործում:
- Ուսուցչի հետ որոշում են կատարման ժամկետները:
- Մոբիլիզացում են գիտելիքը և կարողությունները, սահմանում են, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերեն նախանշած խնդիրների վճռման համար:
- Թիմի անդամները սահմանում են և բաշխում գործառույթները:
- Թիմի անդամները գտնում են, ընտրում և մշակում տեղեկություններ:
- Ընտրում են նախագծի ներկայացման ձև:
- Իրականացնում են նախագիծը:
- Փորձեր են անում, մեկ այլ խմբի ներկայությամբ շնորհանդեսի կեղծակերպում են անում, մեկնաբանությունների, դիտողությունների նախատեսումով բարելավում են նախագիծը, նրա մեջ ուղղումներ ընդգրկում:
- Կազմում են նախագծի վերջնական տարբերակը և այն ներկայացնում լսարանի առջև:

### Ուղղություն՝ ուսանման ուսուցում

#### Օտ.Բ-Մ.IV. 27. Աշակերտն ինքնուրույն որոշում է կատարվելիք հանձնարարության պահանջները:

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Մասնակցում է հանձնարարությունը հաջող իրականացնելու չափանիշների ձևակերպմանը:
- Առանձնացնում է հանձնարարության կատարման փուլեր:
- Սահմանում է այն գիտելիքը և կարողությունները, որոնց տիրապետում է և կօգտագործի հանձնարարության կատարման ժամանակ:
- Սահմանում է, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերի հանձնարարության կատարման համար:
- Որոշում է, թե ինչը հեշտ կանի, ինչից կդժվարանա, ինչում անհրաժեշտ կլինի օգնություն, խորհրդատվություն:
- Սահմանում է անհրաժեշտ ռազմավարություններ հանձնարարության յուրաքանչյուր փուլի համար:

**Օտ.Բ-Մ. IV. 28. Աշակերտն օգտագործում է ռազմավարական կարողություններ՝ հաջող ուսուցման ապահովման համար:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Մինչև աշխատանքի սկսելը կատարում է գիտելիքի համախմբում:
- Մասնակցում է մտքերի փոխանակման, թե ինչպիսի մոտեցում կօգտագործեն այս կամ այն փուլում՝ կոնկրետ խնդրի լուծման ժամանակ:
- Աշխատանքի գործընթացում առաջացած հիմնախնդիրների դեպքում փոխում է ռազմավարությունները:
- Անհրաժեշտության դեպքում խնդրում է օգնություն, խորհրդատվություն:
- Աշխատանքն ավարտելուց հետո ներկայացնում է կիրառած ռազմավարությունները, համեմատում է ուրիշների կիրառած ռազմավարություններին:
- Մասնակցում է կիրառած ռազմավարությունների արդյունավետության գնահատմանը:
- Համաձայնում է տարբերվող ռազմավարությունների փորձարկում-կիրառման:
- Համեմատում է տարբեր, այդ թվում նաև մայրենի լեզվի ուսանման ժամանակ ստացած, փորձը միմյանց, որոշում է, թե որքանով պիտանի կլինի այս կամ այն ռազմավարությունը այլ լեզվի կամ առարկայի ուսանման գործընթացում:
- Վերլուծում է սխալների, թերությունների պատճառները:
- Մասնակցում է ինքնագնահատման և համագնահատման (աշակերտ-ուսուցիչը կամ աշակերտ-աշակերտը միմյանցից անկախ ստուգում են միևնույն աշխատանքը):
- Դիտարկելով արդյունքները՝ նշում է, թե որտեղ ունի առաջընթաց:
- Վերլուծում է հաջողության, թե անհաջողության պատճառները՝ դրանք հետազայում նկատի առնելու նպատակով:
- Անվանում է գործոնները և պատճառները, որոնք խանգարում են առաջընթացին (օրինակ՝ համապատասխանաբար չկիրառեց ռեսուրսը, չկարողացավ ընդգծել ակտիվության գլխավոր խնդիրը, բաց թողեց մի փուլ, խնդիրն անհաղթահարելի թվաց, անտրամադիր էր և այլն):
- Նկատում է և անվանում իր թերությունները:
- Որոշում է, թե ինչ միջոցների պետք է դիմի թերություններն ուղղելու համար:
- Սեփական նախաձեռնությամբ դիմում է սխալներն ուղղելու միջոցների:

**Օտ.Բ-Մ. IV. 29. Աշակերտն օգտագործում է ռեսուրսներ ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները (բառարան, կառուցվածքային մնուշներ, քերականական տեղեկատու, պատկերագրություններ և այլն):
- Տեղեկություններ է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսներից (դասագրքի ակներև նյութ, բառարան, դպրոցի, գյուղի, քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրազեկ անձ, համացանց և այլն):
- Տեղեկություններ, ուսումնական նյութ է գտնում հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով:
- Օգտագործում է ՏՀՏ այս կամ այն նյութը, տեքստը ստեղծելու, մշակելու համար:
- Օգտագործում է ՏՀՏ նախագծեր իրականացնելու համար:

**Օտ.Բ-Մ.IV. 30. Աշակերտը մշակում է տեղեկություններ՝ նրա մտապահմանն ու արդյունավետ օգտագործմանն օժանդակելու նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ընկալում-մտապահմանն օժանդակելու նպատակով դիմում է տեղեկությունների կազմակերպման տարբեր միջոցների (իմաստային քարտեզ, սխեմատիկ գրառումներ, աղյուսակ, գծապատկեր, տվյալների բազա և այլն ), տրամաբանական կապեր է հայտնաբերում տեղեկության տարբեր մասերի միջև:
- Տարբեր պարամետրերի համաձայն՝ որակավորում է, խմբավորում ձեռք բերած տեղեկությունները:

**Օտ.Բ-Մ. IV. 31. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների, ուսուցչի, զույգի հետ՝ արդյունքների բարելավման նպատակով:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ոգևորում է զույգին, թիմակցին:
- Խնդրում է կամ ինքն է առաջարկում օգնություն:
- Գործում է թիմի անդամների հետ համաձայնեցված, թիմակիցների հետ՝ հիմնախնդիրներ վճռելու, գործառույթները բաշխելու նպատակով:
- Լսում է ուրիշների կարծիքները, արտահայտում է իրենը:
- Անհամաձայնության դեպքում աշխատում է հասնել համաձայնության:

**2009**

- Աշխատում է իր ներդրումն անել ընդհանուր գործի մեջ:
- Ըստ անհրաժեշտության, մասնակցում է գույզի, քիմի անդամների համագնահատմանը:
- Քննադատում է գաղափարները և ոչ թե գաղափարների հեղինակներին, գնահատելիս հանդես է բերում կոռեկտորյուն:
- Քաղաքավարի ձևով է մատնացույց անում ուրիշների թույլ տված սխալները:
- Մասնակցում է համագնահատման՝ արդյունքների բարելավման նպատակով:



V մակարդակ  
Ձեռքբերվելիք արդյունքները

Ուղղություն.		
Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ. Բ-Մ. V. 1. Աշակերտը լսում է և հասկանում օտարալեզու խոսակիցների միջև ընթացող ինտերակցիան (երկխոսություն, մենախոսություն, հարցազրույց):</p> <p>Օտ. Բ-Մ. V. 1 2. Աշակերտը լսում է և հասկանում ռադիո-հեռուստահաղորդումները, աուդիոձայնագրությունները և բանավոր ելույթ ծանոթ կամ իրեն հետաքրքիր թեմատիկայի մասին (ռեպորտաժ, փաստագրական հաղորդում, դասախոսություն):</p> <p>Օտ. Բ-Մ. V. 3. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրվելիք խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և լսելու կարողության բարելավման նպատակով:</p>	<p>Օտ. Բ-Մ. V. 4. Աշակերտը կարդում է և հասկանում տարբեր թեմաներով ստեղծված ճանաչողական տեքստեր (պատմական, մշակութային, հնագիտական, աշխարհագրական, բնապահպանական և այլն):</p> <p>Օտ. Բ-Մ. V. 5. Աշակերտը կարդում և հասկանում է լրագրային հրապարակումը իրեն հետաքրքիր թեմաներով (օրինակ՝ ինտերնետի, բջջային հեռախոսի, ԽՍՀ-ի դրական և բացասական կողմեր, անվտանգ դպրոց, ռոբ-երաժշտություն, տարբերություն տղաների և աղջիկների միջև և այլն ):</p> <p>Օտ. Բ-Մ. V. 6. Աշակերտը կարդում է և հասկանում հարմարեցված պատմվածք, նովել:</p>	<p>Օտ. Բ-Մ. V. 12. Աշակերտը գրում է բացատրագիր, դիմում, նամակ՝ կապված կոնկրետ հիմնախնդրային իրավիճակի հետ:</p> <p>Օտ. Բ-Մ. V. 13. Աշակերտը գրում է տարբեր տեսակի տեքստեր (էսսե, նամակ, դպրոցական կամ երիտասարդական ամսագրի համար ) հրատապ թեմայով, հարցով (օրինակ՝ աշակերտը և բջջային հեռախոսը, աշակերտների վերաբերմունքը դպրոցի նկատմամբ, գիրքը և ինտերնետը և այլն) ա) Գրում է գովազադային տեքստ (զբոսաշրջական ուղեցույց, տեղեկատվական բուկլետ):</p> <p>Օտ. Բ-Մ. V. 14. Գրելիս աշակերտը ստեղծում է տեքստի կառուցվածքը, ձեռք է բերում և գործնականում կիրառում լեզվա-քերականական հմտություն-կարողություններ:</p>

Ուղղություն.		
Լսել	Կարդալ	Գրել
	<p>Օտ. Բ-Մ. V. 7. Աշակերտը կարդում է և հասկանում կոմիքսը:</p> <p>Օտ. Բ-Մ. V. 8. Աշակերտը որոշում է տեքստի կառուցվածքային բնութագրիչները, սովորած լեզվա-քերականական ձևերը և նրանց գործառույթը իմաստ ունեցող համատեքստում:</p> <p>Օտ. Բ-Մ. V. 9. Աշակերտը բարձրաձայն կարդում է տեքստ, հատվածներ:</p> <p>Օտ. Բ-Մ. V. 10. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և կարդալու կարողության բարելավման համար:</p> <p>Օտ. Բ-Մ. V. 11. Աշակերտը տիրապետում է սխեմատիկ գրառումների տարբեր տեխնիկայի:</p>	<p>Օտ. Բ-Մ. V. 15. Աշակերտը ձեռք է բերում և կիրառում է տարբեր ռազմավարություններ գրելու գործընթացի բոլոր փուլերում (նախապատրաստական, տեքստի կազմելու, տեքստի բարելավման):</p>

Ուղղություն.			
Խոսել	Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն	Ուսանման ուսուցում
<p><i>Երկխոսություն</i></p> <p>Օտ. Բ-Մ. V. 16. Աշակերտը մասնակցում է ինտերակցիային իրեն ծանոթ թեմայով, ծանոթ հարցերի շուրջ:</p> <p>Օտ.Բ-Մ.V.17. Աշակերտը հաղթահարում է կենցաղային հաղորդակցական իրավիճակը:</p> <p><i>Մենախոսություն</i></p> <p>Օտ. Բ-Մ. V 18. Աշակերտը խոսում է կապակցված, իրեն ծանոթ թեմաների շուրջ:</p> <p>Օտ. Բ-Մ. V. 19. Աշակերտը ներկայացնում է բանավոր զեկուցում (շնորհանդես) իրեն հետաքրքիր թեմայով:</p> <p>Օտ. Բ-Մ. V. 20. Աշակերտը ձեռք է բերում և գործնականում կիրառում է լեզվա-քերականական բազիսային հմտություն-կարողությունները:</p> <p>Օտ. Բ-Մ. V. 21. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և բանավոր խոսքի կարողության բարելավման նպատակով:</p>	<p>Օտ. Բ-Մ. V. 22. Աշակերտը դրսևորում է հետաքրքրություն և հանդուրժողական է մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.Բ-Մ V. 23. Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ ուսումնական ուղևորություն այն վայրեր, որ կապվում են այս կամ այն գրողի, հասարակական գործչի հետ, էքսկուրսավարություն անել օտարերկրացիներին և այլն):</p> <p>Օտ.Բ-Մ V. 24. Աշակերտները մշակում են օտարալեզու աղբյուրներ, տեքստեր հետագա օգտագործման համար (օրինակ՝ նյութ հայթայթել-հավաքել դպրոցական նախագծի իրականացման համար):</p>	<p>Օտ.Բ-Մ.V. 25. Աշակերտն ինքնուրույն որոշում է կատարվելիք հանձնարարության պահանջները:</p> <p>Օտ.Բ-Մ. V. 26. Աշակերտն օգտագործում է ռազմավարական կարողություններ՝ հաջող ուսուցման ապահովման համար:</p> <p>Օտ.Բ-Մ. V. 27. Աշակերտն օգտագործում է ռեսուրսներ ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:</p> <p>Օտ.Բ-Մ. V. 28. Աշակերտը մշակում է տեղեկություններ՝ նրա մտապահմանն ու արդյունավետ օգտագործմանն օժանդակելու նպատակով:</p> <p>Օտ.Բ-Մ. V. 29. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների ուսուցչի, զույգի հետ՝ արդյունքների բարելավման նպատակով:</p>

**Ուսուցման արդյունքներ և ստուգիչներ**  
**Ուղղություն՝ լսել**

(Լսելու կարողության զարգացման համար օգտագործվում են ուսումնական նպատակով ստեղծված լսանիշներ)

**Օտ. Բ-Մ. V. 1. Աշակերտը լսում է և հասկանում օտարալեզու խոսակիցների միջև ընթացող ինտերակցիան (երկխոսություն, մենախոսություն, հարցազրույց):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է, թե որտեղ և երբ է ընթանում զրույցը:
- Որոշում է խոսակիցներին, հարցվողին, թղթակցին:
- Որոշում է զրույցի հիմնական թեման, հարցերը:
- Տեքստից հավաքում է կոնկրետ տեղեկությունները (ով, ուր, երբ, որքան, ինչու, ինչպիսի և այլն):
- Ջրույցի բովանդակությունից ելնելով՝ եզրակացություն է անում զրուցակիցների բնավորության, գործունեության, ապագա պլանների, հետաքրքրությունների և նրանց միջև գոյություն ունեցած հարաբերությունների մասին (բարեկամական, կոնֆլիկտային, վաղուցվա ծանոթներ, նոր ծանոթացած և այլն):
- Հնչերանգով տարբերում է ասելիքի երանգը (հարց, խնդրանք, պահանջ):
- Տարբերում է դիմումի հարգալից և առօրյա-խոսակցական ձևերը:

**Օտ. Բ-Մ. V. 2. Աշակերտը լսում է և հասկանում ռադիո-հեռուստահաղորդումները, աուդիոձայնագրությունները և բանավոր ելույթ ծանոթ կամ իրեն հետաքրքիր թեմատիկայի մասին (ռեպորտաժ, փաստագրական հաղորդում, դասախոսություն):**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Որոշում է թեման, հիմնական հարցերը, ապացույցները:
- Որոշում է տրամաբանական կապերը փաստերի, իրադարձությունների միջև:
- Տեքստից հավաքում է փաստական տեղեկությունները (ով, ուր, երբ, որքան, ինչու, ինչպիսի և այլն):
- Տարբերում է ենթադրությունը փաստից, փաստերը վերաբերմունքներից, գնահատումներից:
- Կապում է կոնկրետ մանրամասները հիմնական տեղեկության հետ:
- Տեքստից հավաքում է տեղեկությունները՝ կոնկրետ բնութագրիչների համաձայն:

## Լսելու ռազմավարություններ

Օտ. Բ-Մ. V. 3. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրվելիք խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և լսելու կարողության բարելավման նպատակով:

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Կենդանի խոսք, ձայնագրություն լսելիս՝ օգտվում է ոչ բառային միջոցներից (ձայնի տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտ, պատկերազարդում, գծապատկեր և այլն):
- Հիմնվելով ծանոթ տարրերի վրա (հաղորդակցական իրավիճակ, համատեքստ, ծանոթ լեզվական կառույցներ)՝ որոշում է անծանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Նշում է անծանոթ բառերը՝ դրանց նշանակությունը պարզելու համար:
- Օգտագործում է ընտրությամբ լսելու ռազմավարությունը՝ կոնկրետ տեղեկությունը որոշելու համար:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով, ճանապարհով է կարողացել վճռել լսելու խնդիրը:
- Համեմատում է ուրիշների ընտրած եղանակին և անում եզրակացություն, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Նպատակին համապատասխան փոխում է լսելու ռազմավարությունը. ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար հիմնվում է ծանոթ բառերի, ոչ բառային տարրերի վրա և որոշում է հաղորդակցական իրավիճակը, համատեքստը, զրույցի թեման: Կոնկրետ տեղեկությունը որոշելու համար ընտրում է կոնկրետ հենարաններ, ուշադրությունը դրանց վրա կենտրոնացնելով, հավաքում է անհրաժեշտ տեղեկությունը:
- Օտար լեզվով դիտում է և լսում իրեն հետաքրքիր հեռուստա-, ռադիոհաղորդումներ, ֆիլմեր:
- Ունկնդրման խնդիրը վճռելիս՝ կիրառում է այլ լեզուներից ստացած փորձը:
- Հիշում է, թե այլ առարկայից ինչ ռազմավարություն է կիրառել տեղեկություն լսելիս, համեմատում է հին և նոր փորձը, անում է եզրակացություններ:
- Դատողություն է անում, թե որ ուսումնական թե կենսական իրավիճակում կարող են պետք գալ օգտագործած, քննարկած ռազմավարությունները:

**Օտ. Բ-Մ. V. 4.** Աշակերտը կարդում է և հասկանում տարբեր թեմաներով ստեղծված ճանաչողական տեքստեր (պատմական, մշակութային, հնագիտական, աշխարհագրական, բնապահպանական և այլն):

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Որոշում է գլխավոր թեման, հարցերը:
- Ճանաչում է տեքստի մեջ մակերեսորեն տրված փաստական տեղեկությունը:
- Տեքստը բաժանում է իմաստային մասերի:
- Մահմանագատում է փաստը ենթադրությունից:
- Որոշում է տեքստի տարբեր մասերում տրված փաստերի և իրադարձությունների միջև գոյություն ունեցած կապը (պատճառահետևանքային, հակադրական, պայմանական, ինդուկցիոն և այլն) և անում է համապատասխան եզրակացություն:
- Կապում է տեքստում տրված տեղեկությունն իր փորձի հետ և դրա հիման վրա եզրակացություն է անում:

**Օտ. Բ-Մ. V. 5.** Աշակերտը կարդում և հասկանում է լրագրային հրատարակումը իրեն հետաքրքիր թեմաներով (օրինակ՝ ինտերնետի, բջջային հեռախոսի, mp3-ի դրական և բացասական կողմեր, անվտանգ դպրոց, ռոք-երաժշտություն, տարբերություն տղաների և աղջիկների միջև և այլն ):

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Որոշում է հրատարակության նպատակը (քննադատել, հիմնախնդիր առաջ քաշել, տպավորություններով կիսվել և այլն):
- Որոշում է հրատարակության հասցեատիրոջը (ում համար է հատկացված):
- Որոշում է հիմնախնդիրը:
- Որոշում է տարբերվող ասպեկտները, որոնցով քննարկվում է հիմնախնդիրը:
- Որոշում է տարբերվող տեսակետները, ապացույցները:
- Տեսակետները համապատասխանեցնում է հղված փաստերին, օրինակներին:
- Տեղեկությունները կապում է սեփական փորձի հետ և, սրա վրա հիմնվելով, ընդգծում է և արտահայտում իր դիրքորոշումը՝ քննակված հարցի համեմատ:

**Օտ. Բ-Մ. V. 6.** Աշակերտը կարդում է և հասկանում հարմարեցված պատմվածք, նովել:

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Վերնագիրը գիտակցված կապում է տեքստի հետ:

- Որոշում է պատմողին, գործող անձանց:
- Որոշում է գործողությունների հաջորդականությունը:
- Անվանում է կոնկրետ տեղեկությունը (ով, ուր, ինչպիսի, ինչպես, ինչու և այլն):
- Անվանում է գլխավոր և երկրորդական գործող անձանց:
- Բացատրում է գործող անձանց վարքի դրդապատճառը և գնահատում է նրանց վարքը:
- Որոշում է գործող անձանց միջև գոյություն ունեցած հարաբերությունները :
- Բնութագրում է գործող անձանց՝ հիմնվելով ինչպես բացատրական բնույթի տեղեկության, այնպես էլ բովանդակությունն իմաստավորելու վրա:
- Ստեղծագործության մեջ առանձնացնում է սյուժեի զարգացման աստիճանները (սկիզբ, պատմության ընթացք, ավարտ):
- Որոշում է երևույթների և գործող անձանց հեղինակային գնահատումները:

**Օտ. Բ-Մ. V. 7. Աշակերտը կարդում է և հասկանում կոմիքսը:**

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Միմյանցից տարբերում է երկխոսական և պատմողական բնույթի տեքստերի դիզայնը:
- Միմյանց հետ կապում է տեքստը և նկարը:
- Որոշում է կերպարվեստի և տպագրական միջոցներով արտահայտված հույզերը, տրամադրվածությունները (օրինակ՝ խոշորացված տառատեսակ, բացականչություն, զայրույթ արտահայտելու համար և այլն):
- Պատկերագրությունների վրա հիմնվելով՝ որոշում է դրվագների բովանդակությունը:
- Որոշում է նկարներում թե տեքստում մատնանշված, բացատրված տեղեկությունը մշակույթի բնագավառից (ժամանակաշրջան, երկիր, պատմական իրադարձություն, այս կամ այն սոցիալական խավի տիպիկ ներկայացուցիչ և այլն)

**Օտ. Բ-Մ. V. 8. Աշակերտը որոշում է տեքստի կառուցվածքային բնութագրիչները, սովորած լեզվա-քերականական ձևերը և նրանց գործառույթը իմաստ ունեցող համատեքստում:**

*Արդյունքն սկներև է, երբ աշակերտը.*

- Աշխատում է առանձնացնել առաջատար, լրացուցիչ և ամփոփիչ պարբերությունները, որոշում է լրացուցիչ պարբերության գործառույթը (օրինակ՝ *նախորդ պարբերությունում հաղորդած միտքն ընդարձակել, ճշտել, բացատրել պատճառները, օրինակ բերել*):
- Որոշում է, թե ինչ ձևով է հաղորդած ուրիշի խոսքը (ուղիղ, անուղղակի):

- Որոշում է և խմբավորում այս կամ այն հարցի նկատմամբ տարբեր տեսակի վերաբերմունք արտահայտող լեզվական բանաձևերը (օրինակ՝ լավ է, կողմ եմ, դեմ եմ, չնայած ..., ճիշտ է, սակայն . . . , չեմ կարծում . . . , չեմ համաձայնում . . . , ես կարծում եմ և այլն):
- Որոշում է արտահայտությունները և բառերը, որոնք ընթերցողին օգնում են սահմանազատել փաստը գնահատումից, վերաբերմունքներից, տեսակետից (միջանկյալ բառեր և արտահայտություններ, տարբեր եղանակներ արտահայտող բայեր):
- Որոշում է ժամանակ և տարածություն արտահայտող բառերը, կառույցները:
- Մի տեքստի շրջանակներում առանձնացնում է տեքստի կառուցվածքային տեսակները (պատմել, նկարագրել, դատողություն անել) և մատնանշում է համապատասխան նշանները:
- Համապատասխան նշանների վրա հիմնվելով՝ մատնացույց է անում, թե որտեղ են սկսվում և որտեղ ավարտվում սյուժեի զարգացման աստիճանները (*հանգույց, գործողության զարգացում, զագաթնակետ և հանգուցալուծում*):
- Որոշում է և համապատասխանաբար օգտագործում ժամանակային հարաբերությունների տեսակները (*գործողությունների համաժամանակություն, հաջորդականություն*) և այս հարաբերություններն արտահայտող միջոցները (օրինակ՝ *համապատասխան շաղկապներ, բայաձևեր, գլխավոր և երկրորդական նախադասությունների շարադասությունը, հարաբերյալները գլխավորում և այլն*):
- Որոշում է տրամաբանական կապեր արտահայտող պարզ և բարդ լեզվական կառույցները (օրինակ՝ պատճառ, հետևանք, հակադրություն, պայմանականություն):
- Որոշում է իմաստային կապեր արտահայտող լեզվա-քերականական միջոցները (օր.՝ կրկնական դերանուններ և մակբայներ, բառերի իմաստային և բառապաշարային կրկնություններ, հոմանշային և հականշային փոխակերպումներ, բայ-ստորոգյալի ժամանակա-եղանակային ձևեր և այլն):
- Բնութագրում է տեքստը կամ նրա հատված՝ խոսողության գործընթացին մասնակցող անձանց քանակի համաձայն (մենախոսություն, երկխոսություն ... ):
- Կոնկրետ լեզվական նշանների վրա հենվելով՝ մատնանշում է, թե հանդիպում է արդյոք տեքստում հեղինակի խոսք և իրադարձությունների հեղինակային գնահատում:

**Օտ. Բ-Մ. V. 9. Աշակերտը բարձրաձայն կարդում է տեքստ, հատվածներ:**

*Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.*

- Ընտրում է տեքստ, հատված, որը կամենում է ընթերցել լսարանի առջև:
- Մինչև ընթերցելը գիտակցում է տեքստի բովանդակությունը:



- Բովանդակությանը համապատասխան փոխում է խոսքի տեմպը, ձայնի երանգը, բարձրությունը:
- Հնչերանգով արտահայտում է տեքստում արտացոլված հույզերը:
- Կետադրական նշանների գործառույթով կիրառում է հնչերանգը:
- Բովանդակության համաձայն օգտագործում է դիմախաղ, ձեռածություն:
- Կարդալու ընթացքում աշխատում է տեսողական կապ հաստատել լսարանի հետ:
- Խոսում է պարզ և հստակ:

### Կարդալու ռազմավարություններ

**Օտ. Բ-Մ. V. 10. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և կարդալու կարողության բարելավման համար:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Կիրառում է ճանաչողական ընթերցանության միջոցները. դիտարկում է տեքստի կառուցվածքը, վերնագիրը, պարբերությունները, պատկերազարդումները, մակագրությունները, ընդգծված բառերը և այլն: Անձանոթ բառերի դեպքում կանգ չի առնում:
- Կիրառում է ուսուցողական ընթերցանության միջոցները. առաջին ընթերցման ժամանակ ամբողջությամբ ծանոթանում է տեքստին, դժվարությունների հաղթահարման համար վերընթերցում է անհասկանալի, բարդ կամ կարևոր մասերը, համատեքստի, ունեցած փորձի կամ բառարանի միջոցով ճշտում է անձանոթ բառերի նշանակությունը:
- Կիրառում է որոնողական ընթերցանության միջոցները. կոնկրետ տեղեկություն գտնելու նպատակով արագ ընթերցում է տեքստը, որոնում է հենակետեր. հանգուցային բառեր, պարբերությունների առաջին նախադասություններ, խորագրեր, պարզաբանումներ, գծապատկերներ, աղյուսակ և այլն):
- Ինքնուրույն որոշում է անձանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը՝ ծանոթ տարրերի օգնությամբ (պատկերազարդումներ, ծանոթ հիմք, համատեքստ, մայրենի լեզվում հաստատված օտար բառեր և այլն):
- Տարբեր տարրերի օգնությամբ (վերնագիր, պարբերությունների սկիզբ, հանգուցային բառեր, որևէ պարբերություն, ընդգծված բառեր) ենթադրություն է անում տեքստի բովանդակության մասին:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով կարողացավ վճռել ընթերցանական խնդիրը:
- Համեմատում է ուրիշի ընտրած եղանակին և անում է եզրակացություն, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Ընթերցանության խնդիրների վճռման համար օգտագործում է ինչպես մայրենի, այնպես էլ այլ լեզվով ստացած փորձը:

**Օտ. Բ-Մ. V. 11. Աշակերտը տիրապետում է սխեմատիկ գրառումների տարբեր տեխնիկայի:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Տեքստը կարդում է ամբողջությամբ, տարբեր խորհրդանշաններով նշում է գլխավոր հարցերը, երկրորդական գաղափարները, հանգուցային բառերը:
- Որոշում է երկրորդական գաղափարների նշանակումը (գլխավոր գաղափարի ցուցադրում, պատճառների բացատրություն, ճշգրտում և այլն):
- Բացահայտում է տեքստի կառուցվածքը կամ տեքստում տեղեկության կազմակերպման օրենքը (օրինակ՝ *ժամանակագրական կառուցվածք* – ինչն ինչից հետո պետք է կատարվի, *տարածական կառուցվածք* – մի վայրին մյուսն է հաջորդում՝ աշխարհագրական բնույթի տեքստում, *չափանիշների վրա կառուցած կառուցվածք*՝ մեկ հիմնախնդիր և այս հիմնախնդրի տարբեր կողմեր, *ինդուկցիոն կառուցվածք*՝ փաստեր և վերջում եզրակացություն, *դեդուկցիոն կառուցվածք*՝ օրինաչափություն և նրա հաստատող օրինակներ, *հակադրական կառուցվածք*՝ դրական և բացասական կողմեր, առավելություններ և թերություններ, *եռամաս կառուցվածք*՝ փաստ, հիմնախնդիր, հետևանք, փաստ, պատճառ, ելք և այլն):
- Տեղեկության որակավորման համար կիրառում է սխեմատիկ գրառումների տարբեր տեխնիկա (սխեմատիկ պլան հիերարխիական կառուցվածքով, ճյուղավորված գծապատկեր, հանգուցային բառերի աղյուսակ և այլն):
- Կատարած գծապատկերը ցույց է տալիս համադասարանցիներին, ծանոթանում է ուրիշների աշխատանքներին:
- Ուրիշների հետ մեկտեղ գնահատում է սխեմատիկ գրառումները (որն է գերադասելի և ինչու, ով ինչը պետք է բարելավի և այլն):
- Դիտողություններ է անում, նկատի է ունենում դիտողությունները, երաշխավորությունները:
- Համագործակցում է համադասարանցիների, ուսուցիչների հետ սխեմատիկ գրառումը բարելավելու համար:

**Ուղղություն՝ գրավոր խոսք**

**Օտ. Բ-Մ. V. 12. Աշակերտը գրում է բացատրագիր, դիմում, նամակ՝ կապված կոնկրետ հիմնախնդրային իրավիճակի հետ:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Պահպանում է ձևական կողմը (համապատասխան տեղում նշում է հեղինակի, հասցեատիրոջ կոորդինատները, անձնական տվյալները, դիմումի և հրաժեշտի բանաձև, ստորագրություն, ամիս, ամսաթիվ, տարեթիվ):
- Առանձնացնում է հիմնախնդիրը:

- Նկարագրում է իրավիճակը, հիմնախնդրի առաջացնող պատճառները:
- Բացատրում է իրավիճակի մասնակից անձանց վարքի դրդապատճառը:
- Հասցեատիրոջն առաջարկում է հիմնախնդրի վճռման ուղիներ, խորհուրդներ է տալիս, երաշխավորություններ (օրինակ՝ դպրոցում ծագած հիմնախնդրի հետ կապված):
- Արտահայտում է իր վերաբերմունքը այս հիմնախնդրի կամ նրա առաջացնող պատճառների նկատմամբ:
- Գրելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Հստակ և հասկանալի ձևակերպում է իր միտքը:

**Օտ. Բ-Մ. V. 13. Աշակերտը գրում է տարբեր տեսակի տեքստեր, (էսսե, նամակ, դպրոցական կամ երիտասարդական ամսագրի համար) հրատապ թեմայով, հարցով (օրինակ՝ աշակերտը և բջջային հեռախոսը, աշակերտների վերաբերմունքը դպրոցի նկատմամբ, գիրքը և ինտերնետը և այլն):**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Ներկայացնում է ինքն իրեն:
- Մանրամասնորեն նկարագրում է սեփական փորձը՝ կոնկրետ հարցի համեմատ:
- Ընդգծում է դրական և բացասական կողմերը և բացատրում դրանք, բերում է համապատասխան օրինակներ:
- Արտահայտում է իր վերաբերմունքը հարցի նկատմամբ:
- Անձնական փորձից կոնկրետ օրինակ բերելով՝ բացատրում է սեփական վերաբերմունքը:
- Եզրահանգում է անում:
- Վերնագրում է հոդվածը, նամակը:
- Գրելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Հստակ և հասկանալի հաղորդում է իր միտքը:

**ա) Գրում է գովազդային տեքստ (գրոսաշրջական ուղեցույց, տեղեկատվական բուկլետ):**

- Սահմանում է հասցեատիրոջը (օրինակ՝ տարածաշրջանում ապրող օտարերկրյա հասակակից, բարեկամացած դպրոցների աշակերտներ):
- Որոշում է տեքստի ձևաչափը (օրինակ՝ ակնարկ թերթի խորագրի համար «Ճանապարհորդի տպավորություններ» կամ քաղաքապետարանի կայք-էջում տեղադրելու համար և այլն):

- Սահմանում է նպատակը (գրոսաշրջիկների տեղեկացում տարածաշրջանում գոյություն ունեցած տեսարժան վայրերի մասին, օտարերկրյա հասակակիցների տարածաշրջան գալու նպատակով և այլն):
- Նպատակից ելնելով՝ կազմում է խորագրեր (օրինակ՝ տեսարժան վայրեր, զվարճալիքներ, ավանդույթներ, տեղական կերակրատեսակներ և այլն):
- Յուրաքանչյուր խորագրի համար գրում է տեղեկատվական տեքստեր, որտեղ նկարագրում է մանրամասները և անում գնահատումներ:
- Խորհուրդներ և խրատներ է տալիս:
- Համապատասխանաբա ձևավորում է տեքստը (լուսանկար, նկար, քարտեզ, պլան և այլն):
- Հստակ և հասկանալի է ձևակերպում միտքը:

**Օտ. Բ-Մ. V. 14. Գրելիս աշակերտը ստեղծում է տեքստի կառուցվածքը, ձևը է բերում և գործնականում կիրառում լեզվա-քերականական հմտություն-կարողություններ:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Նպատակից ելնելով՝ ընտրում է տեքստի համապատասխան կառուցվածքը, ճիշտ է օգտագործում պարբերությունը և այլ կառուցվածքային կազմակերպիչներ (վերնագիր, ենթավերնագիր, խորագիր և այլն):
- Կիրառում է կանք-ցանկություն, խորհուրդ-խրատ արտահայտող լեզվական կառույցներ, բանաձևեր:
- Ներկա, անցյալ, ապառնի ժամանակներն արտահայտելու համար՝ ազատ կիրառում է բայաձևեր:
- Տրամաբանական կապեր (պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն) արտահայտելու համար ազատ կիրառում է պարզ լեզվական կառուցվածքներ:
- Հաղորդակցական իրավիճակին համապատասխան կիրառում է սովորած լեզվական կառույցներ, կաղապարներ, բանաձևեր:
- Կիրառում է հույզեր, վերաբերմունքներ, տպավորություններ արտահայտող հաճախ օգտագործվող լեզվական միջոցներ (բառապաշարային միավորներ, կայուն բառակապակցություններ, կաղապարներ, լեզվական կառույցներ):
- Գործողությունների համաժամանակություն և հաջորդականություն (նախորդող, հաջորդող գործողություններ) արտահայտելու համար կիրառում է պարզ կառույցներ:
- Անհատին, առարկա, երևույթ բնութագրելիս՝ ընտրում է համապատասխան լեզվական միջոցներ (որոշիչներ, համեմատություններ, ածական դերբայներ):
- Տեքստի ստեղծման ժամանակ պահպանում է իմաստային կապակցման համապատասխան լեզվա-քերականական միջոցները, (օրինակ՝ *կրկնադիր*)

դերանուններ և մակբայներ, բառի բառապաշարային և իմաստային կրկնություններ, հոմանշային և հականշային փոխարինումներ, բայ-ստորոգյալի ժամանակա-եղանակային ձևեր):

- Ճիշտ է կապակցում հարաբերյալը և անդամ-շաղկապները՝ հարաբերականները (օրինակ՝ նա ... որը, նրանք ... որոնք);
- Նկարագրում-բնութագրման ժամանակ կիրառում է տարբեր տեսակի համեմատություն:
- Պահպանում է կետադրության (բարդ նախադասություններում, երկխոսության հաղորդման ժամանակ) և ուղղագրության նորմերը:
- Պայման, հավանականություն, ենթադրություն արտահայտող նախադասություններում կիրառում է համապատասխան շարահյուսական կառույցներ:
- Մի իմաստային մասից, հարցից մյուսին անցնելու համար կիրառում է համապատասխան բառեր և լեզվական բանաձևեր (*նախ և առաջ, այնուհետև, վերջում, ասում են, ըստ իս, այնպես որ, այսպիսով և այլն*):
- Կիրառում է անձնական վերաբերմունք արտահայտող լեզվա-քերականական միջոցներ:

### Գրելու ռազմավարություններ

**Օտ. Բ-Մ. V. 15. Աշակերտը գրելու գործընթացի բոլոր փուլերում (նախապատրաստական, տեքստի կազմելու, տեքստի բարելավման) ձեռք է բերում և կիրառում տարբեր ռազմավարություններ:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Նախատեսելով նախանշված հաղորդակցական խնդիրը՝ հիշողության մեջ գտնում է անհրաժեշտ տեղեկությունը, կամ ակտիվացնում է անհրաժեշտ գիտելիքն (ինչպես լեզվական, այնպես էլ ճարտասանական թե հենց սյուժեի հետ կապված):
- Անհրաժեշտության դեպքում ռեսուրսներում գտնում է լրացուցիչ տեղեկություններ:
- Գիմնում է մտավոր գրոհի և գրում է բոլոր գաղափարները, որ այդ պահին կմտածի՝ կապված գրելու թեմատիկայի հետ:
- Ընտրում է տեղեկություններ և գաղափարներ, մտածում, թե ինչպես կկապի դրանք իրար հետ կամ կմշակի պլան:
- Տեքստը գրում է՝ հիմնվելով պլանին:
- Տեքստը գրելու ընթացքում մշտապես հետևում է գրածին, կշռադատում է, թե

որքանով է կարողանում ասելիքը հասկանալի և հետևողականորեն հաղորդել, անհրաժեշտության դեպքում փոփոխություններ է ընդգրկում՝ անում է պլանի յուրովի վերակառուցում, ավելացնում կամ պակասեցնում է տեղեկությունը և այլն:

- Գրածն ուղղելիս՝ մշտապես պահպանում է հաղորդակցությունն իր ընթերցողի հետ, փորձում է այն գնահատել հասցեատիրոջ կամ հավանական ընթերցողի տեսանկյունից, թե որքանով արդյունավետ արտացոլվեց գրածում հաղորդակցական նպատակը:
- Ուղղում է այն լեզվական և իմաստային թերությունները, որոնք կարող են հիմնախնդիրներ ստեղծել ընթերցողին և որոշ չափով խափանել հաղորդակցությունը: Համապատասխանաբար, ավելացնում է կամ հանում բառ, նախադասություն, տեքստի մեկ հատված, ուղղում քերականական կամ ուղղագրական սխալները:
- Աշխատում է աշխատանքը հարստացնել տեղեկություններով, տարբեր կերպ խմբավորել մի քանի գաղափար, մասամբ կամ ամբողջությամբ փոխել պլանը, տեքստը ենթարկել խորքային փոփոխության:
- Որակյալ մթերք ստեղծելու համար միշտ նախատեսում է համապատասխանությունը հասցեատիրոջ, հաղորդակցական նպատակի և տեքստի միջև:
- Համադասարանցուն ընթերցել է տալիս, նրա դիտողությունների նախատեսումով, բարելավում է գրածը:
- Մաքրագրում է գրածը:
- Մտաբերում է, թե ուրիշ առարկաներից ինչ ռազմավարություն է կիրառել տեքստ կազմելիս, համեմատում է հին և նոր փորձը, անում է եզրակացություններ:
- Դատողություն է անում, թե որ ուսումնական թե կենսական իրավիճակում կարող է անհրաժեշտ լինեն կիրառած ռազմավարությունները:

### Ուղղություն՝ խոսել

### Երկխոսություն

**Օտ. Բ-Մ. V. 16. Աշակերտը մասնակցում է ինտերակցիային իրեն ծանոթ թեմայով, հարցերի շուրջ:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Առանց նախապատրաստվելու կարողանում է տեղեկություն փոխանակել իրեն լավ ծանոթ թեմատիկայով:
- Այս կամ այն վիճելի հարցի հետ կապված՝ առանց նախապատրաստվելու արտահայտում է իր վերաբերմունքը, դիրքորոշումը և բացատրում է այն (ինչ է հավանում, չի հավանում, ինչու):

- Անում է տարբեր տեսակ ընտրություն և բացատրում այն (օրինակ՝ որ գործող անձին է ավելի հավանում և ինչու, որ տեսակետին է կողմ և ինչու և այլն):
- Ինքնաբերաբար է արձագանքում գրուցակիցների ռեպլիկներին՝ ճշգրտում է տեղեկությունը, անում մեկնաբանություն:
- Արտահայտում է իր հույզերը, տրամադրվածությունը:
- Կարողանում է երևույթները, փաստերը, վարմունքները գնահատել իր դիրքորոշումից:

**Օտ.Բ-Մ.Վ.17.** Աշակերտը հաղթահարում է կենցաղային հաղորդակցական իրավիճակը:

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Առանց նախապատրաստվելու՝ մասնակցում է դերային խաղերի, կեղծակերպած իրավիճակների, որոնք արտացոլում են ամենօրյա կենցաղային իրավիճակ (օրինակ՝ ընկերները երեք տարբեր հնարավորություն ունեն արձակուրդներն անցկացնելու համար, յուրաքանչյուրը դրսևորում է իր ընտրության դրական կողմերը):
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա՝ մասնակցում է այնպիսի կեղծակերպած իրավիճակների, որոնք անապասելի, անսովոր իրավիճակ են արտացոլում , որի ժամանակ անհրաժեշտ է լինում արդարանալ, բողոքարկել (*օրինակ՝ գրադարանում ընթերցողից գիրք են պահանջում, իսկ նա այս գիրքը հանձնել է, ուղևորը հայտնաբերում է, որ իր տեղում ուրիշն է նստած, գնորդը վերադարձնում է գնած իրը, որը պարզվում է, որ փչացած է և այլն*):
- Հարցազրույց է տալիս կամ վերցնում որևէ հրատապ հարցի շուրջ:

## Մենախոսություն

**Օտ. Բ-Մ. Վ 18.** Աշակերտը խոսում է կապակցված, իրեն ծանոթ թեմաների շուրջ:

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Մանրամասնորեն խոսում է իր փորձի մասին, նկարագրում է սեփական հույզերը, արձագանքները:
- Պատմում է կինոնկարի, գրքի սյուժետային գիծը:
- Կարդացած գրքի շուրջ կազմում է ամփոփագիր, հողորդում է գլխավոր թեման, քննարկած հարցերը, տեքստում արտացոլված տարբերվող տեսակետները, արտահայտում է սեփական վերաբերմունքը:
- Դատողություն է անում այնպիսի պատկերազարդման վրա հիմնվելով, որտեղ արտացոլված է հիմնախնդրային իրավիճակ կամ հրատապ հարց

(մանրամասնորեն նկարագրում է իրավիճակը, ընդգծում է հիմնախնդիրը, հարցը, արտահայտում է իր վերաբերմունքը և պարզաբանում է այն՝ հիմնվելով սեփական փորձի վրա):

- Խոսելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Միտքը ձևակերպում է հստակ և հասկանալի:

**Օտ. Բ-Մ. V. 19. Աշակերտը ներկայացնում է բանավոր զեկուցում (շնորհանդես) իրեն հետաքրքիր թեմայով:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Անվանում է թեման:
- Ներածական մասում ներկայացնում է քննարկվելիք հարցերը:
- Բերում է փաստեր, օրինակներ:
- Խոսելիս օգտագործում է տեսանելի նյութ:
- Հետևողականորեն, հստակ և հասկանալի է ձևակերպում միտքը:
- Իր վերաբերմունքն է արտահայտում կոնկրետ տեղեկության, քննարկվելիք հարցի վերաբերյալ:
- Անում է եզրակացություն:
- Պահպանում է իմաստային հաջորդականությունը:

**Օտ. Բ-Մ. V. 20. Աշակերտը ձեռք է բերում և գործնականում կիրառում է լեզվա-քերականական բազիսային հմտություն-կարողությունները:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Հաղորդակցական իրավիճակին համապատասխան՝ օգտագործում է սովորած լեզվական կառույցները, բանաձևերը, կաղապարներ, հարգալից կամ առօրյա-խոսակցական ձևեր:
- Պատմելիս ճիշտ է օգտագործում բայի սովորած ձևերը՝ անցյալ, ներկա, ապառնի ժամանակ արտահայտելու համար:
- Լուր հաղորդելիս ճիշտ է օգտագործում իրադարձությունների հաջորդականություն արտահայտող բառեր (դեռ, այնուհետև, վերջում):
- Կիրառում է գրույցի թեմային համապատասխան սովորած բառապաշար:
- Պահպանում է շարահյուսական հարաբերությունները սովորած լեզվական կառույցներում:
- Օգտագործում է հույզեր, վերաբերմունքներ, տպավորություններ արտահայտող լեզվական միջոցներ (բառապաշարային միավորներ, կայուն բառակապակցություններ, կաղապարներ, լեզվական կառույցներ):



- Գործողությունների համաժամանակության և հաջորդականության արտահայտման համար օգտագործում է պարզ կառուցվածքներ (նախորդող, հաջորդող գործողություններ):
- Օգտագործում է սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտող լեզվաքերականական միջոցներ (միջանկյալ բառեր, արտահայտություններ և այլն):
- Մի իմաստային մասից մյուսին անցնելիս՝ օգտագործում է համապատասխան բառեր և լեզվական բանաձևեր (համապատասխանաբար, օրինակ, բացի այդ, այնպես որ և այլն):
- Իրադարձությունների և վարմունքների գնահատման համար կիրառում է համապատասխան արտահայտչական բառեր և լեզվական բանաձևեր:
- Հարցի առաջադրում, խնդրանք, հրաման և զգացմունքներ հաղորդելիս պահպանում է բառերի հերթականությունը և այս եղանակներին բնորոշ հնչերանգը:
- Անձ, առարկա, երևույթ նկարագրելիս՝ ընտրում է համապատասխան լեզվական միջոցներ (որոշիչներ, համեմատություններ, ածական դերբայներ):

### Խոսելու ռազմավարություններ

**Օտ. Բ-Մ. V. 21. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և բանավոր խոսքի կարողության բարելավման նպատակով:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Նախօրոք պատրաստում է անհրաժեշտ ռեսուրսները, հավաքում է մոդելներ, արտահայտություններ, կաղապարներ, հանգուցային բառեր:
- Մինչև լսարանի առջև ելույթ ունենալը փորձեր է անում:
- Չհասկանալու դեպքում խնդրում է բացատրել, դանդաղ և հստակ արտասանել, կրկնել:
- Բառը մոռանալու, չգիտենալու դեպքում կիրառում է փոխհատուցող միջոցներ (օրինակ՝ դիմախաղ, ձեռածություն, շրջասություն, նկարագրում է նկատի ունեցած առարկան կամ նշում է, թե ինչում է օգտագործվում և այլն):
- Խոսողական խնդիրներ վճռելու համար օգտագործում է այլ լեզուներից ստացած փորձը:
- Վերլուծում է այն գործոնները, որոնք օժանդակեցին հաջողությանը կամ առաջացրին անհաջողություն բանավոր ելույթի ժամանակ և ուսուցչի հետ նախանշում է ուղղելու պլանը:

## Ուղղություն՝ մշակույթների երկխոսություն

**Օտ. Բ-Մ. V. 22.** Աշակերտը դրսևորում է հետաքրքրություն և հանդուրժողական է մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Որոշում է տեքստերում արտացոլած սոցիալ-մշակութային միջավայրը և գուգահեռներ է անցկացնում հայրենի սոցիալ-մշակութային միջավայրի հետ (դավանանք, ապրելակերպ, տոնակատարություններ, ավանդույթներ և սովորույթներ, երկրի վարչական կազմակերպում, պատմական ժամանակաշրջանի առանձնահատկություններ և այլն):
- Պատկերազարդումներում, տեքստերում որոշում է արտացոլած մշակութային, խորհրդանշային, կենցաղային իրողությունները:
- Ջուգահեռներ է անցկացնում արտասահմանյան և հայրենի մշակույթների միջև, գտնում է նմանություններ և տարբերություններ:
- Քաղաքավարի արտահայտում է իր կարծիքը, տեսակետը, վերաբերմունքը՝ մշակութային առանձնահատկությունների մասին դատողություն անելիս:
- Հետաքրքրություն է դրսևորում մարդկանց ապրումների, վերաբերմունքների նկատմամբ:
- Ջուգահեռներ է անցկացնում, գտնում է և նշում նմանությունները, տարբերությունները իր և ուրիշների հոգևոր աշխարհների միջև (ապրումներ, տրամադրվածություններ, վերաբերմունքներ):
- Որոշում է ասացվածքների, դարձվածքների նշանակությունը և գտնում է նրանց համապատասխանը մայրենի լեզվում:

## Ուղղություն՝ օտար լեզվի գործնական կիրառություն

**Օտ.Բ-Մ V. 23.** Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ ուսումնական ուղևորություն այն վայրեր, որ կապվում են այս կամ այն գրողի, հասարակական գործչի հետ, էքսկուրսավարություն անել օտարերկրացիներին և այլն ):

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Ուսուցչի հետ միասին ձևակերպում են նախագծի հաջող իրականացման չափանիշներ:
- Թիմի անդամներն ինքնուրույն սահմանում են և պլանավորում նախագծի իրականացման փուլերը, այնուհետև թիմերը միմյանց հետ փոխանակում են

իրենց կազմած պլանները, համեմատում, կատարելագործում:

- Մոբիլիզացում են գիտելիքը և կարողությունները, սահմանում են, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերեն նախանշած խնդիրների վճռման համար:
- Թիմի անդամները սահմանում են և բաշխում գործառույթները:
- Թիմի անդամները գտնում են, ընտրում և մշակում տեղեկություններ:
- Ընտրում են նախագծի ներկայացման ձև:
- Թիմի անդամներն իրականացնում են նախագիծը:
- Թիմի անդամները փորձեր են անում, մեկ այլ խմբի ներկայությամբ շնորհանդեսի կեղծակերպում են անում, մեկնաբանությունների, դիտողությունների նախատեսումով բարելավում են նախագիծը, նրա մեջ ուղղումներ ընդգրկում:
- Թիմի անդամները կազմում են նախագծի վերջնական տարբերակը և այն ներկայացնում լսարանի առջև:

**Օտ.Բ-Մ V. 24. Աշակերտները մշակում են օտարալեզու աղբյուրներ, տեքստեր հետագա օգտագործման համար (օրինակ՝ նյութ հայթաթել-հավաքել դպրոցական նախագծի իրականացման համար ):**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Անում է օտարալեզու տեքստի սխեմատիկ գրառումներ և նրա վրա հիմնվելով ուսուցման լեզվով\* բանավոր հաղորդում է տեքստի համառոտ բովանդակությունը հետաքրքրված անձանց համար (օրինակ՝ թիմակիցների համար):
- Անում է սխեմատիկ գրառումներ, և նրա վրա հիմնվելով, հետաքրքրված անձանց համար գրում է ամփոփագիր ուսուցման լեզվով:
- Ուսումնասիրում է օտար աղբյուրներ և ուսուցման լեզվով գրում է երկու-երեք բառանոց բացատրություններ նրանցից յուրաքանչյուրի մասին (նշում է հեղինակին, վերնագիրը, հրատարակման տարին, թեման, գլխավոր հարցերը):
- Թարգմանում է փոքր չափսի ոչ գեղարվեստական (տեղեկատվական, ճանաչողական և այլն) տեքստեր:

### Ուղղություն՝ ուսանման ուսուցում

**Օտ.Բ-Մ.V. 25. Աշակերտն ինքնուրույն որոշում է կատարվելիք հանձնարարության պահանջները:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Մասնակցում է հանձնարարությունը հաջող իրականացնելու չափանիշների

ձևակերպմանը:

- Առանձնացնում է հանձնարարության կատարման փուլեր:
- Մահմանում է այն գիտելիքը և կարողությունները, որոնց տիրապետում է և կօգտագործի հանձնարարության կատարման ժամանակ:
- Մահմանում է, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերի հանձնարարության կատարման համար:
- Որոշում է, թե ինչը հեշտ կանի, ինչից կդժվարանա, ինչում անհրաժեշտ կլինի օգնություն, խորհրդատվություն:
- Մահմանում է անհրաժեշտ ռազմավարություններ հանձնարարության յուրաքանչյուր փուլի համար:

**Օտ.Բ-Մ. V. 26. Աշակերտն օգտագործում է ռազմավարական կարողություններ՝ հաջող ուսուցման ապահովման համար:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Մինչև աշխատանքի սկսելը կատարում է գիտելիքի համախմբում:
- Մասնակցում է մտքերի փոխանակման այն մասին, թե ինչպիսի մոտեցում կօգտագործեն այս կամ այն փուլում՝ կոնկրետ խնդրի լուծման ժամանակ:
- Աշխատանքի գործընթացում առաջացած հիմնախնդիրների դեպքում փոխում է ռազմավարությունները:
- Անհրաժեշտության դեպքում խնդրում է օգնություն, խորհրդատվություն:
- Աշխատանքն ավարտելուց հետո ներկայացնում է կիրառած ռազմավարությունները, համեմատում է ուրիշների կիրառած ռազմավարություններին:
- Մասնակցում է կիրառած ռազմավարությունների արդյունավետության գնահատմանը:
- Համաձայնում է տարբերվող ռազմավարությունների փորձարկում-կիրառման:
- Համեմատում է տարբեր, այդ թվում նաև մայրենի լեզվի ուսանման ժամանակ ստացած փորձը միմյանց, որոշում է, թե որքանով պիտանի կլինի այս կամ այն ռազմավարությունը այլ լեզվի կամ առարկայի ուսանման գործընթացում:
- Վերլուծում է սխալների, թերությունների պատճառները:
- Մասնակցում է ինքնագնահատման և համագնահատման (աշակերտ-ուսուցիչը կամ աշակերտ-աշակերտը միմյանցից անկախ ստուգում են միևնույն աշխատանքը):
- Դիտարկելով արդյունքները՝ նշում է, թե որտեղ ունի առաջընթաց:
- Վերլուծում է հաջողության թե անհաջողության պատճառները՝ դրանք հետագայում նկատի առնելու նպատակով:
- Անվանում է գործոնները և պատճառները, որոնք խանգարում են առաջընթացին

(օրինակ՝ համապատասխանաբար չկիրառեց ռեսուրսը, չկարողացավ ընդգծել ակտիվության գլխավոր խնդիրը, բաց թողեց մի փուլ, խնդիրն անհաղթահարելի թվաց, անտրամադիր էր և այլն):

- Նկատում է և անվանում իր թերությունները:
- Որոշում է, թե ինչ միջոցների պետք է դիմի թերություններն ուղղելու համար:
- Մեխական նախաձեռնությամբ դիմում է սխալներն ուղղելու միջոցների:

**Օտ.Բ-Մ. V. 27. Աշակերտն օգտագործում է ռեսուրսներ ուսումնական գործունեության օժանդակման նպատակով:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները (բառարան, կառուցվածքային նմուշներ, քերականական տեղեկատու, պատկերազարդումներ և այլն):
- Տեղեկություններ է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսներից (դասագրքի ակներև նյութ, բառարան, դպրոցի, գյուղի, քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրազեկ անձ, համացանց և այլն):
- Տեղեկություններ, ուսումնական նյութ է գտնում հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով:
- Օգտագործում է ՏՀՏ այս կամ այն նյութը, տեքստը ստեղծելու, մշակելու համար:
- Օգտագործում է ՏՀՏ նախագծեր իրականացնելու համար:

**Օտ.Բ-Մ. V. 28. Աշակերտը մշակում է տեղեկություններ՝ նրանց մտապահմանն ու արդյունավետ օգտագործմանն օժանդակելու նպատակով:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Ընկալում-մտապահմանն օժանդակելու նպատակով դիմում է տեղեկությունների կազմակերպման տարբեր միջոցների (իմաստային քարտեզ, սխեմատիկ գրառումներ, աղյուսակ, գծապատկեր, տվյալների բազա և այլն ), տրամաբանական կապեր է հայտնաբերում տեղեկության տարբեր մասերի միջև:
- Տարբեր պարամետրերի համաձայն՝ որակավորում է, խմբավորում ձեռք բերած տեղեկությունները:

**Օտ.Բ-Մ. V. 29. Աշակերտը համագործակցում է համադասարանցիների  
ուսուցչի, զույգի հետ՝ արդյունքների բարելավման  
նպատակով:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Ոգևորում է զույգին, թիմակցին:
- Խնդրում է կամ ինքն է առաջարկում օգնություն:
- Գործում է թիմի անդամների հետ համաձայնեցված, թիմակիցների հետ՝ հիմնախնդիրներ վճռելու, գործառույթները բաշխելու նպատակով:
- Լսում է ուրիշների կարծիքները, արտահայտում է իրենը:
- Անհամաձայնության դեպքում աշխատում է հասնել համաձայնության:
- Աշխատում է իր ներդրումն անել ընդհանուր գործի մեջ:
- Ըստ անհրաժեշտության, մասնակցում է զույգի, թիմի անդամների համագնահատմանը:
- Քննադատում է գաղափարները և ոչ թե գաղափարների հեղինակներին, գնահատելիս հանդես է բերում կոռեկտություն:
- Քաղաքավարի ձևով է մատնացույց անում ուրիշների թույլ տված սխալները:
- Մասնակցում է համագնահատման՝ արդյունքների բարելավման նպատակով:

## VI մակարդակ Չեռքերվելիք արդյունքներ

Ուղղություն.			
Խոսել	Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն	Ուսանման ուսուցում
<p><i>Երկխոսություն</i></p> <p>Օտ. Բ-Մ. IV. 15. Աշակերտը մասնակցում է ինտերակցիային իրեն ծանոթ թեմայով:</p> <p>Օտ. Բ-Մ. IV. 16. Աշակերտը կարողանում է իրեն դրսևորել կենցաղային հաղորդակցական իրավիճակներում:</p> <p><i>Մենախոսություն</i></p> <p>Օտ. Բ-Մ. VI. 17. Աշակերտն անում է փոքր չափսի զեկուցում (մոտավորապես 2-3 րոպեանոց) այնպիսի հրատապ հարցի շուրջ, որին ծանոթացել է ընթերցանության տեքստում:</p> <p>Օտ. Բ-Մ. VI. 18. Աշակերտը ներկայացնում է բանավոր զեկուցում իրեն հետաքրքիր թեմայի, հիմնախնդրի շուրջ:</p> <p>Օտ. Բ-Մ. VI. 19. Աշակերտը տիրապետում է և գործնականում կիրառում լեզվա-քերականական բազիսային հմտություն-կարողությունները:</p> <p>Օտ. Բ-Մ. VI. 20. Աշակերտը տիրապետում է ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և բանավոր խոսքի կարողության բարելավման նպատակով:</p>	<p>Օտ. Բ-Մ. VI. 21. Աշակերտը դրսևորում է հետաքրքրություն և հանդուրժողական է մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.Բ-Մ VI. 22. Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ ֆիլմ օտար լեզվով, օտար լեզվով թերթի ստեղծում և տարածում, արվեստագետի հետ հանդիպման կազմակերպում, կայք-էջի ստեղծում և այլն):</p> <p>Օտ.Բ-Մ VI. 23. Աշակերտները մշակում են օտարալեզու աղբյուրներ, տեքստեր հետագա օգտագործման համար (օրինակ՝ նյութ հայթայթել-հավաքել դպրոցական նախագծի իրականացման համար ):</p>	<p>Օտ.Բ-Մ. VI. 24. Աշակերտը տիրապետում է ռազմավարական կարողությունների՝ հաջող ուսուցման ապահովման և լեզուների ուսանումը հեշտացնելու համար:</p>

(Լսելու կարողության զարգացման համար օգտագործվում են ուսումնական նպատակով ստեղծված լսատեղիները)

**Օտ. Բ-Մ. VI. 1. Աշակերտը լսում է և հասկանում տարբեր տեսակի աուդիոձայնագրություններ ծանոթ թեմատիկայի մասին (ռեպորտաժ, փաստագրական հաղորդում, դասախոսություն, բանավեճ, հարցազրույց):**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Որոշում է տեքստի տեսակը:
- Որոշում է հաղորդակցական իրավիճակը (որտեղ է տեղի ունենում, ում է վերաբերում և այլն):
- Որոշում է իրավիճակի մասնակից անձանց:
- Որոշում է, թե ինչ տեսակի հարաբերություն է մասնակից դեմքերի միջև:
- Որոշում է թեման, հիմնական հարցերը, ապացույցները:
- Որոշում է տեսակետները, վերաբերմունքները, գնահատումները:
- Որոշում է տրամաբանական կապերը տարբեր տեղեկատվությունների միջև:
- Տեքստից հավաքում է փաստական տեղեկությունները (ով, ինչ, երբ, որտեղ, ինչպիսի, որքան և այլն):
- Տարբերում է ենթադրությունը փաստից, փաստերը վերաբերմունքներից, գնահատումից:
- Կոնկրետ մանրամասները կապում է հիմնական տեղեկության հետ:
- Տեղեկությունները հավաքում է կոնկրետ բնութագրիչների համաձայն:

**Օտ. Բ-Մ. VI. 2. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրվելիք խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և լսելու կարողության բարելավման նպատակով:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Կենդանի խոսք, ձայնագրություն լսելիս օգտվում է ոչ բառային միջոցներից (ձայնի տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտ, պատկերազարդում, գծապատկեր և այլն):
- Հիմնվելով ծանոթ տարրերի վրա (հաղորդակցական իրավիճակ,



համատեքստ,)՝ որոշում է անձանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:

- Նշում է անձանոթ բառերը՝ դրանց նշանակությունը պարզելու համար:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով, ճանապարհով է կարողացել վճռել լսելու խնդիրը:
- Համեմատում է ուրիշների ընտրած եղանակին և անում եզրակացություն, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Օգտագործում է ընտրությամբ լսելու ռազմավարությունը՝ կոնկրետ տեղեկությունը որոշելու համար:
- Տեղեկության դասակարգման համար կիրառում է սխեմատիկ գրառումների տեխնիկան:
- Օտար լեզվով դիտում է և լսում իրեն հետաքրքիր հեռուստա-, ռադիոհաղորդումներ, ֆիլմեր:
- Ունկնդրման խնդիրը վճռելիս՝ կիրառում է այլ լեզուներից ստացած փորձը:
- Հիշում է, թե այլ առարկայից ինչ ռազմավարություն է կիրառել տեղեկություն լսելիս, համեմատում է հին և նոր փորձը, անում է եզրակացություններ:
- Դատողություն է անում, թե որ ուսումնական թե կենսական իրավիճակում կարող են պետք գալ օգտագործած, քննարկած ռազմավարությունները:
- Նպատակին համապատասխան փոխում է լսելու ռազմավարությունը. ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար հիմնվում է ծանոթ բառերի, ոչ բառային տարրերի վրա և որոշում է հաղորդակցական իրավիճակը, համատեքստը, գրույցի թեման: Կոնկրետ տեղեկությունը որոշելու համար ընտրում է կոնկրետ հենարաններ, ուշադրությունը դրանց վրա կենտրոնացնելով, հավաքում է անհրաժեշտ տեղեկությունը:

### Ուղղություն՝ ընթերցանություն

**Օտ. Բ-Մ. VI. 3. Աշակերտը կարդում է և հասկանում տարբեր թեմաներով ստեղծված ճանաչողական տեքստեր (պատմական, մշակութային, հնագիտական, աշխարհագրական, բնապահպանական և այլն):**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Որոշում է գլխավոր թեման, հարցերը:
- Ճանաչում է տեքստի մեջ մակերեսորեն տրված փաստական տեղեկությունը:
- Տեքստը բաժանում է իմաստային մասերի:
- Որոշում է կոնկրետ հարցի մասին տեսակետները:
- Սահմանազատում է փաստը ենթադրությունից:

- Որոշում է տեքստի տարբեր մասերում տրված փաստերի և իրադարձությունների միջև գոյություն ունեցած կապը (պատճառահետևանքային, հակադրական, պայմանական, ինդուկցիոն և այլն) և անում է համապատասխան եզրակացություն:
- Կապում է տեքստում տրված տեղեկությունն իր փորձի հետ և դրա հիման վրա եզրակացություն է անում:

**Օտ. Բ-Մ. VI. 4. Աշակերտը կարդում և հասկանում է լրագրային հրապարակումները, որոնք պարունակում են որոշակի տեսակետ, դատողություն՝ կապված կոնկրետ հիմնախնդրի հետ (օրինակ՝ գովազդի դերը ժամանակակից կյանքում, միջավայրի աղտոտում, սպառողական հասարակություն, բռնությունը դպրոցներում և այլն ):**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Որոշում է հրատարակության հասցեատիրոջը (ուն համար է հատկացված):
- Որոշում է հիմնախնդիրը:
- Որոշում է տարբերվող ասպեկտները, որոնցով քննարկվում է հիմնախնդիրը:
- Որոշում է հիմնախնդրի առաջացման պատճառները, սպասվելիք արդյունքները:
- Որոշում է տարբերվող տեսակետները, ապացույցները:
- Որոշում է փաստերը, իրադարձությունները և կապում համապատասխան տեսակետների, ապացույցների հետ:
- Իրարից տարբերում է փաստը, ենթադրությունը, կանխատեսումը, գնահատումը:
- Արտահայտում է իր ենթադրությունը՝ կապված քննարկված հարցի հետ:

**Օտ. Բ-Մ. VI. 5. Աշակերտը կարդում է և հասկանում հարմարեցված պատմվածք, նովել:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Վերնագիրը գիտակցված կապում է տեքստի հետ:
- Որոշում է պատմողին, գործող անձանց:
- Որոշում է գործողությունների հաջորդականությունը:
- Որոշում է կոնկրետ տեղեկությունը ( ով, ուր, ինչպիսի, ինչպես, ինչու և այլն):
- Որոշում է գլխավոր և երկրորդական գործող անձանց:
- Բացատրում է գործող անձանց վարքի դրդապատճառը և գնահատում է նրանց վարքը:
- Որոշում է գործող անձանց միջև գոյություն ունեցած հարաբերությունները :

- Բնութագրում է գործող անձանց՝ հիմնվելով ինչպես բացատրական բնույթի տեղեկության, այնպես էլ բովանդակությունն իմաստավորելու վրա:
- Ստեղծագործության մեջ առանձնացնում է սյուժեի զարգացման աստիճանները (սկիզբ, հանգույց, զարգացում, գագաթնակետ, հանգուցալուծում, ավարտ):
- Որոշում է երևույթների և գործող անձանց հեղինակային գնահատումները:

**Օտ. Բ-Մ. VI. 6. Աշակերտը կարդում է և հասկանում կոմիքսը:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Միմյանցից տարբերում է երկխոսական և պատմողական բնույթի տեքստերի դիզայնը:
- Միմյանց հետ կապում է տեքստը և նկարը:
- Որոշում է կերպարվեստի և տպագրական եղանակներով արտահայտված հույզերը, տրամադրվածությունները (օրինակ՝ խոշորացված տառատեսակ, բացականչություն, զայրույթ արտահայտելու համար և այլն):
- Պատկերագրությունների վրա հիմնվելով՝ որոշում է դրվագների բովանդակությունը:
- Որոշում է նկարներում թե տեքստում մատնանշված, բացատրված տեղեկությունը մշակույթի բնագավառից (ժամանակաշրջան, երկիր, պատմական իրադարձություն, այս կամ այն սոցիալական խավի տիպիկ ներկայացուցիչ և այլն)

**Օտ. Բ-Մ. VI. 7. Աշակերտը կարդում է և վերլուծում գեղարվեստական (պոեզիայի, պոեմի, դրամատիկական ստեղծագործության, պատմվածքի և այլն) գրականության հատված, մանրածավալ երկ:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Որոշում է թեման, ընդհանուր բովանդակությունը:
- Զուգահեռներ է անցկացնում վրացերեն սովորած գեղարվեստական տեքստերի հետ տարբեր չափանիշներով (օրինակ՝ հերոսի տիպը, հաղորդած տրամադրվածությունը և այլն):
- Համեմատում է համապատասխան վրացերեն թարգմանությունների տարբեր տարբերակների հետ և անում կոնկրետ եզրակացությունները:

**Օտ. Բ-Մ. VI. 8. Աշակերտը վերլուծում է տեքստը կառուցվածքային և լեզվական բնութագրիչների համաձայն:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Առանձնացնում է առաջատար, լրացուցիչ և ամփոփիչ պարբերությունները,

որոշում է լրացուցիչ պարբերության գործառույթը (օրինակ՝ *նախորդ պարբերությունում հաղորդած միտքն ընդարձակել, ճշտել, բացատրել պատճառները, օրինակ բերել*):

- Որոշում է, թե ինչ ձևով է հաղորդած ուրիշի խոսքը (ուղիղ, անուղղակի):
- Որոշում է և խմբավորում այս կամ այն հարցի նկատմամբ տարբեր տեսակի վերաբերմունք արտահայտող լեզվական բանաձևերը (օրինակ՝ լավ է, կողմ եմ, դեմ եմ, չնայած ..., ճիշտ է, սակայն . . . , չեմ կարծում . . . , չեմ համաձայնում . . . , ես կարծում եմ և այլն):
- Որոշում է արտահայտությունները և բառերը, որոնք ընթերցողին օգնում են սահմանագատել փաստը գնահատումից, վերաբերմունքներից, տեսակետից (միջանկյալ բառեր և արտահայտություններ, տարբեր եղանակներ արտահայտող բայեր):
- Որոշում է ժամանակ և տարածություն արտահայտող բառերը, կառույցները:
- Մի տեքստի շրջանակներում առանձնացնում է տեքստի կառուցվածքային տեսակները (պատմել, նկարագրել, դատողություն անել) և մատնանշում է համապատասխան նշանները (օրինակ՝ *նկարագրելիս՝ ածականների և ածական դերբայների առատություն, բայերի պակաս քանակ, պատմելիս՝ բայերի առատություն, գործողության հաջորդականություն և այլն*):
- Համապատասխան նշանների վրա հիմնվելով՝ մատնացույց է անում, թե որտեղ են սկսվում և որտեղ ավարտվում սյուժեի զարգացման աստիճանները (*հանգույց, գործողության զարգացում, զագաթնակետ և հանգուցալուծում*):
- Որոշում է և համապատասխանաբար բացատրում ժամանակային հարաբերությունների տեսակները (*գործողությունների համաժամանակություն, հաջորդականություն*) և այս հարաբերություններն արտահայտող միջոցները (օրինակ՝ *համապատասխան շաղկապներ, բայաձևեր, գլխավոր և երկրորդական նախադասությունների շարադասությունը, հարաբերյալները գլխավորում և այլն*):
- Որոշում է տրամաբանական կապեր արտահայտող պարզ և բարդ լեզվական կառույցները (օրինակ՝ պատճառ, հետևանք, հակադրություն, պայմանականություն):
- Որոշում է իմաստային կապեր արտահայտող լեզվա-քերականական միջոցները (օր.՝ կրկնական դերանուններ և մակբայներ, բառերի իմաստային և բառապաշարային կրկնություններ, հոմանշային և հականշային փոխակերպումներ, բայ-ստորոգյալի ժամանակա-եղանակային ձևեր և այլն):
- Բնութագրում է տեքստը կամ նրա հատված խոսողության գործընթացին մասնակցող անձանց քանակի համաձայն (մեմախոսություն, երկխոսություն...):
- Կոնկրետ լեզվական նշանների վրա հենվելով՝ մատնանշում է, թե հանդիպում է արդյոք տեքստում հեղինակի խոսք և իրադարձությունների հեղինակային գնահատում:

**Օտ. Բ-Մ. VI. 9. Աշակերտը բարձրաձայն կարդում է տեքստ, հատվածներ:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Ընտրում է տեքստ, հատված, որը կամենում է ընթերցել լսարանի առջև:
- Մինչև ընթերցելը գիտակցում է տեքստի բովանդակությունը:
- Սահմանում է, թե ինչն է ուզում շեշտադրել տեքստում և ինչ բառային և ոչ բառային միջոցներով (խոսքը փոխել, հնչերանգով հույզեր արտահայտել, տրամաբանական և իմաստային դադարներ, դիմախաղ-ձեռածություն):
- Բառային և ոչ բառային միջոցներն օգտագործում է նպատակին համապատասխան:
- Կարդալու ընթացքում աշխատում է տեսողական կապ հաստատել լսարանի հետ:
- Մասնակցում է խմբային ընթերցանության, օրինակ՝ բեմադրության հատված դերերի բաշխումով:
- Խոսում է պարզ և հստակ:

**Օտ. Բ-Մ. VI. 10. Աշակերտը տիրապետում է և կիրառում  
նազմավարություններ տեքստի խորքային ուսումնասիրման  
նպատակով:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Նախ՝ թերթում է տեքստը, ուշադրություն է դարձնում վերնագրերին, ենթավերնագրերին, խորագրերին, տպագրական տառատեսակներին, պատկերազարդումներին և այլն:
- Հիշում է, թե ինչ գիտի՝ կապված տեքստում տրված թեմատիկայի հետ:
- Առաջադրում է այն հարցերը, որոնց պատասխանը սպասում է տեքստից:
- Ամբողջությամբ ծանոթանում է տեքստին, այս փուլում կանգ չի առնում անծանոթ բառերի վրա, տարբեր խորհրդանշաններով նշում է տեքստի էական հարցերը, որոնց պետք է անդրադառնա՝ դրանք խորացնելու նպատակով, հանգուցային բառերը և այլն:
- Անդրադառնում է անհասկանալի տեղերին, աշխատում է համատեքստի համաձայն որոշել բառերի նշանակությունները:
- Բառարանում փնտրում է այն բառերի նշանակությունները, որոնք անհասկանալի են:
- Տարբերում է գլխավոր և երկրորդական գաղափարները, գլխավոր գաղափարները ձևակերպում է վերնագրերի տեսքով, երկրորդականները՝ ենթավերնագրերի:
- Սահմանում է երկրորդական գաղափարների գործառույթը՝ ընդարձակել ընդհանուր գաղափարը, պատկերազարդել, պատճառները բացատրել և այլն:

- Տեղեկությունների դասակարգման համար կիրառում է իմաստային գրառումների տեխնիկան (սխեմատիկ պլան՝ ստորակարգային գործառնություն, ճյուղավորված գծապատկեր, հանգուցային բառերի ցանկ և այլն (տես՝ Օտ. Բ-Մ.Վ.11.):
- Հիմնվելով սխեմատիկ գրառումների վրա՝ վերականգնում է տեքստի բովանդակությունն իր բառերով:
- Կրկին կարդում է տեքստը և վերընթերցում, թե որևէ նշանակալի բան բաց է թողել արդյոք:
- Դատողություն է անում, թե որ ուսումնական թե կենսական իրավիճակում կարող են անհրաժեշտ լինել սխեմատիկ գրառումների ռազմավարությունները:

### Ուղղություն՝ գրավոր խոսք

Օտ. Բ-Մ. VI. 11. Աշակերտը գրում է տարբեր տեսակի գործնական նամակներ:

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

ա) Գրում է պատճառաբանական նամակ:

- Պահպանում է ձևական կողմը (համապատասխան տեղում նշում է հեղինակի, հասցեատիրոջ կոորդինատները, անձնական տվյալները, ամիս, ամսաթիվ, տարեթիվ, դիմելու, հրաժեշտի բանաձև, ստորագրություն):
- Հայտնում է նամակի դրդապատճառը (որտեղից է իմացել մրցույթի մասին և որ թափուր տեղի համար է ներկայացնում թեկնածությունը):
- Ներկայացնում է սեփական ուսումնական թե աշխատանքային փորձը, կարողությունները, գիտելիքը, հատկանիշները:
- Խոսում է պատճառաբանության մասին, ընդգծում է հզոր կողմերը:
- Արտահայտում է հարցազրույցի հրավիրելու հույս:
- Պահպանում է տեքստի կազմակերպման կանոնները:
- Հստակ և հասկանալի է ձևակերպում միտքը:

բ) Կազմում է այսպես կոչված CV:

- Որոշում է պարտադիր և լրացուցիչ խորագրերը:
- Խորագրերի տակ տեղադրում է համապատասխան տեղեկությունները:
- Տեղեկությունը հաղորդում է համառոտ (կիրառում է հաղորդման համառոտ ձևեր):

գ) Գրում է գործնական նամակ տեղեկության ձեռքբերման նպատակով (օրինակ՝ մրցույթի, փոխանակման ծրագրի, ուսումնական ծրագրի պայմանների ճշգրտման համար և այլն):

- Պահպանում է ձևական կողմը (համապատասխան տեղում նշում է հեղինակի և հասցեատիրոջ անձնական տվյալները, կոորդինատները, ամիս, ամսաթիվ, տարեթիվ, դիմելու, հրաժեշտի բանաձև):
- Ներկայացնում է իրեն և նշում, թե որտեղից ունի հասցեատիրոջ տվյալները:
- Թղթակցության նպատակից ելնելով՝ նկարագրում է իրավիճակը (օրինակ՝ ինչին դարձրեց ուշադրություն, ինչ իմացավ, ինչու հետաքրքրվեց, ինչ է մտադիր անել):
- Հարցեր է ձևակերպում իրենց հետաքրքիր տեղեկությունների ձեռքբերման համար:
- Նամակի վերջում արտահայտում է սպասում, նախօրոք շնորհակալություն է հայտնում:
- Միտքը ձևակերպում է հստակ և հասկանալի:

դ) Գրում է գործնական նամակ՝ դժգոհության արտահայտման նպատակով (օրինակ՝ նամակ է գրում երիտասարդական ամսագրի խմբագրին, որը ոչ ճիշտ տեղեկատվություն է հրատարակել, գրում է խանութին, որի վաճառողը իրը հետ չի վերցրել և այլն):

- Պահպանում է ձևական կողմը (համապատասխան տեղում նշում է հեղինակի և հասցեատիրոջ անձնական տվյալները, կոորդինատները, ամիս, ամսաթիվ, տարեթիվ, դիմելու, հրաժեշտի բանաձև):
- Մանրամասնորեն նկարագրում է իրավիճակը:
- Արտահայտում է դժգոհություն, հիացմունք:
- Իրավիճակը շտկելու համար խորհուրդներ է տալիս, անում առաջարկություններ:
- Միտքը ձևակերպում է հստակ և հասկանալի:

Օտ. Բ-Մ. VI. 12. Աշակերտը գրում է տարբեր տեսակի տեքստեր (էսսե, նամակ, դպրոցական կամ երիտասարդական ամսագրի համար) հրատապ թեմայով, հարցով (օրինակ՝ համակարգչային խաղեր, տարբերություններ սերունդների միջև և այլն):

Արդյունքն ակնհայտ է, երբ աշակերտը.

- Անում է ներածություն, ընդգծում է քննարկվելիք հարցերը:
- Հաղորդում է նշանակալի տեղեկություն՝ կապված քննարկվելիք հարցի հետ:

- Հաղորդում է քննարկվելիք հարցի վերաբերյալ տարբեր տեսակետներ և բացատրում է դրանք:
- Արտահայտում է իր վերաբերմունքը, տեսակետը քննարկվելիք հարցի նկատմամբ:
- Անձնական փորձից կոնկրետ օրինակ բերելով՝ բացատրում է սեփական վերաբերմունքը:
- Եզրահանգում է անում:
- Վերնագրում է հոդվածը, նամակը:
- Գրելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Հստակ և հասկանալի հաղորդում է իր միտքը:

**Օտ. Բ-Մ. VI. 13. Գրելիս աշակերտը ստեղծում է տեքստի կառուցվածքը, տիրապետում է և գործնականում կիրառում բազիսային լեզվա-քերականական հմտություն-կարողություններ:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Նպատակից ելնելով՝ ընտրում է տեքստի համապատասխան կառուցվածքը, ճիշտ է օգտագործում պարբերությունը և այլ կառուցվածքային կազմակերպիչներ (վերնագիր, ենթավերնագիր, խորագիր և այլն):
- Կիրառում է կամք-ցանկություն, խորհուրդ-խրատ արտահայտող լեզվական կառույցներ, բանաձևեր:
- Ներկա, անցյալ, ապառնի ժամանակներն արտահայտելու համար՝ ազատ կիրառում է բայաձևեր:
- Տրամաբանական կապեր (պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն) արտահայտելու համար ազատ կիրառում է պարզ լեզվական կառուցվածքներ:
- Հաղորդակցական իրավիճակին համապատասխան՝ կիրառում է սովորած լեզվական կառույցներ, կաղապարներ, բանաձևեր:
- Կիրառում է հույզեր, վերաբերմունքներ, տպավորություններ արտահայտող հաճախ օգտագործվող լեզվական միջոցներ (բառապաշարային միավորներ, կայուն բառակապակցություններ, կաղապարներ, լեզվական կառույցներ):
- Գործողությունների համաժամանակություն և հաջորդականություն (նախորդող, հաջորդող գործողություններ) արտահայտելու համար ազատ կիրառում է պարզ կառույցներ:
- Անհատին, առարկա, երևույթ բնութագրելիս՝ ընտրում է համապատասխան լեզվական միջոցներ (որոշիչներ, համեմատություններ, ածական դերբայներ):
- Տեքստի ստեղծման ժամանակ պահպանում է իմաստային կապակցման համապատասխան լեզվա-քերականական միջոցները, (օրինակ՝ *կրկնադիր*)



*դերանուններ և մակբայներ, բառի բառապաշարային և իմաստային կրկնություններ, հոմանշային և հականշային փոխարինումները, բայ-ստորոգյալի ժամանակա-եղանակային ձևեր):*

- Դիշտ է կապակցում հարաբերյալը և անդամ-շաղկապները՝ հարաբերականները (օրինակ՝ նա ... որը, նրանք ... որոնք):
- Մի իմաստային մասից, հարցից մյուսին անցնելու համար կիրառում է համապատասխան բառեր և լեզվական բանաձևեր (*նախ և առաջ, այնուհետև, վերջում, ասում են, ըստ իս, այնպես որ, այսպիսով և այլն):*
- Կիրառում է ուղղակի և անուղղակի խոսքի հաղորդման լեզվական միջոցները:
- Նկարագրում-բնութագրման ժամանակ կիրառում է տարբեր տեսակի համեմատություն:
- Պահպանում է կետադրության (բարդ նախադասություններում, երկխոսության հաղորդման ժամանակ) և ուղղագրության նորմերը:
- Պայման, հավանականություն, ենթադրություն արտահայտող նախադասություններում կիրառում է համապատասխան շարահյուսական կառույցներ:
- Կիրառում է անձնական վերաբերմունք արտահայտող լեզվա-քերականական միջոցներ:

#### Գրելու ռազմավարություններ

**Օտ. Բ-Մ. VI. 14. Աշակերտը տիրապետում է և կիրառում տարբեր ռազմավարություններ գրելու գործընթացի բոլոր փուլերում (նախապատրաստական, տեքստի կազմելու, տեքստի բարելավման):**

*Արդյունքն սկներն է, երբ աշակերտը.*

- Նախատեսելով նախանշված հաղորդակցական խնդիրը՝ հիշողության մեջ գտնում է անհրաժեշտ տեղեկությունը և գաղափարները կամ ակտիվացնում անհրաժեշտ գիտելիքը՝ ինչպես լեզվական, այնպես էլ ճարտասանական և հենց այուժեի հետ կապված:
- Անհրաժեշտության դեպքում ռեսուրսներում գտնում է լրացուցիչ տեղեկություններ:
- Գիմում է մտավոր գրոհի և գրում է բոլորի գաղափարները, որոնք այդ պահին կմտածեն՝ կապված գրելու թեմատիկայի հետ:
- Ընտրում է տեղեկություններ և գաղափարներ, մտածում, թե ինչպես կկապի դրանք իրար հետ կամ կմշակի պլան:
- Գրում է տեքստ՝ հիմնվելով պլանի վրա:
- Տեքստը գրելու ընթացքում մշտապես հետևում է գրածին, կշռադատում է, թե որքանով է կարողանում ասելիքը հասկանալի և հետևողականորեն հաղորդել,

անհրաժեշտության դեպքում փոփոխություններ է ընդգրկում՝ անում է պլանի յուրովի վերակառուցում, ավելացնում կամ պակասեցնում է տեղեկությունը և այլն:

- Գրածն ուղղելիս՝ մշտապես պահպանում է հաղորդակցությունն իր ընթերցողի հետ, փորձում է այն գնահատել հասցեատիրոջ կամ հավանական ընթերցողի տեսանկյունից, թե որքանով արդյունավետ արտացոլվեց գրածում հաղորդակցական նպատակը:
- Ուղղում է այն լեզվական և իմաստային թերությունը, որը կարող է հիմնախնդիրներ ստեղծել ընթերցողին և որոշ չափով խափանել հաղորդակցությունը: Համապատասխանաբար, ավելացնում է կամ հանում բառ, նախադասություն, տեքստի մեկ հատված, ուղղում քերականական կամ ուղղագրական սխալները:
- Աշխատում է աշխատանքը հարստացնել նոր տեղեկություններով, տարբեր կերպ խմբավորել մի քանի գաղափար, մասամբ կամ ամբողջությամբ փոխել պլանը, տեքստը ենթարկել խորքային փոփոխության:
- Որակյալ ապրանք ստեղծելու համար միշտ նախատեսում է համապատասխանությունը հասցեատիրոջ, հաղորդակցական նպատակի և տեքստի միջև:
- Համադասարանցուն ընթերցել է տալիս, նրա դիտողությունների նախատեսումով, բարելավում է գրածը:
- Մաքրագրում է գրածը:
- Մտաբերում է, թե ուրիշ առարկաներից ինչ ռազմավարություն է կիրառել տեքստ կազմելիս, համեմատում է հին և նոր փորձը, անում է եզրակացություններ:
- Դատողություն է անում, թե որ ուսումնական թե կենսական իրավիճակում կարող է անհրաժեշտ լինեն կիրառած ռազմավարությունները:

### Ուղղություն՝ խոսողություն

#### Երկխոսություն

**Օտ. Բ-Մ.VI. 15. Աշակերտը մասնակցում է ինտերակցիային իրեն ծանոթ թեմայով:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Առանց նախապատրաստվելու կարողանում է տեղեկություն փոխանակել իրեն լավ ծանոթ թեմատիկայով:
- Այս կամ այն վիճելի հարցի հետ կապված՝ առանց նախապատրաստվելու արտահայտում է իր վերաբերմունքը, դիրքորոշումը և բացատրում է այն (ինչ է հավանում, չի հավանում, ինչու):
- Անում է տարբեր տեսակ ընտրություն և բացատրում այն (օրինակ՝ որ գործող

անձին է ավելի հավանում և ինչու, որ տեսակետին է կողմ և ինչու և այլն):

- Ինքնաբերաբար է արձագանքում գրուցակիցների ռեպլիկներին՝ ճշգրտում է տեղեկությունը, անում մեկնաբանություն:
- Արտահայտում է իր հույզերը, տրամադրվածությունը:
- Կարողանում է երևույթները, փաստերը, վարմունքները գնահատել իր դիրքորոշումից:

**Օտ. Բ-Մ. VI. 16. Աշակերտը կարողանում է իրեն դրսևորել կենցաղային հաղորդակցական իրավիճակներում:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Առանց նախապատրաստվելու՝ մասնակցում է դերային խաղերի, կեղծակերպած իրավիճակների, որոնք արտացոլում են ամենօրյա կենցաղային իրավիճակ:
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա՝ մասնակցում է այնպիսի կեղծակերպած իրավիճակների, որոնք անսպասելի, անսովոր իրավիճակ են արտացոլում, որի ժամանակ անհրաժեշտ է լինում արդարանալ, բողբոջարկել:
- Հարցազրույց է տալիս կամ վերցնում որևէ հրատապ հարցի շուրջ:

### Մենախոսություն

**Օտ. Բ-Մ. VI. 17. Աշակերտը անում է փոքր չափսի զեկուցում (մոտավորապես 2-3 րոպեանոց) այնպիսի հրատապ հարցի շուրջ, որին ծանոթացել է ընթերցանության տեքստում:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Ընդգծում է թեման, հիմնախնդիրը:
- Քննարկում է այն տարբեր կողմերից:
- Ընդգծում է դրական և բացասական կողմերը:
- Արտահայտում է իր վերաբերմունքը և բացատրում է այն՝ հիմնվելով անձնական փորձի վրա:
- Հետևողականորեն, հստակ և հասկանալի ձևակերպում է միտքը:
- Անում է եզրահանգում:

**Օտ. Բ-Մ. VI. 18. Աշակերտը ներկայացնում է բանավոր զեկուցում իրեն հետաքրքիր թեմայի, հիմնախնդրի շուրջ:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Անվանում է թեման:
- Ներածական մասում ներկայացնում է, ընդգծում հիմնախնդիրը:

- Ընդգծում է հիմնախնդրի առաջացնող պատճառները:
- Բերում է փաստեր, օրինակներ:
- Խոսելիս կիրառում է տեսանելի նյութ:
- Խոսում է սպասվելիք կապերի մասին:
- Արտահայտում է իր վերաբերմունքը կոնկրետ տեղեկության, քննարկվելիք հարցի նկատմամբ:
- Ներկայացնում է հիմնախնդրի վճռման ուղիներ:
- Անում է եզրակացություն:
- Խոսելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Միտքը ձևակերպում է հստակ և հասկանալի:

**Օտ. Բ-Մ. VI. 19. Աշակերտը տիրապետում է և գործնականում կիրառում է լեզվա-քերականական բազիսային հմտություն-կարողությունները:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Հաղորդակցական իրավիճակին համապատասխան՝ օգտագործում է սովորած լեզվական կառույցները, բանաձևերը, կաղապարներ, հարգավից կամ առօրյա-խոսակցական ձևեր:
- Ինտերակցիային համապատասխան օգտագործում է առօրյա խոսակցական և հարգավից ձևեր:
- Օգտագործում է սովորած բառապաշարը:
- Ազատ օգտագործում է պարզ (համառոտ և ընդարձակ) և համադասական նախադասությունների կառուցվածքը:
- Կարողանում է օգտագործել ստորադասական նախադասություն (օրինակ՝ որոշիչ ստորադաս նախադասություն):
- Նախադասության մասեր միացնելու համար կիրառում է համապատասխան շաղկապներ:
- Պահպանում է շարահյուսական հարաբերությունները սովորած լեզվական կառույցներում:
- Ճիշտ է կիրառում սովորած բայերի կառույցը:
- Պատմելիս աշխատում է ճիշտ օգտագործել բայի սովորած ձևերը անցյալ, ներկա և ապառնի ժամանակի արտահայտման համար:
- Տեղին է օգտագործում դիրքորոշում, վերաբերմունք արտահայտող բառերը և լեզվական բանաձևերը:
- Որևէ լուր հաղորդելիս ճիշտ է օգտագործում երևույթների հաջորդականություն արտահայտող բառեր (դեռ, այնուհետև, վերջում):

### Խոսելու ռազմավարություններ

**Օտ. Բ-Մ. VI. 20. Աշակերտը տիրապետում է ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ վճռմանն օժանդակելու և բանավոր խոսքի կարողության բարելավման նպատակով:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Նախօրոք պատրաստում է անհրաժեշտ ռեսուրսները, հավաքում է մոդելներ, արտահայտություններ, կադապարներ, հանգուցային բառեր:
- Մինչև լսարանի առջև ելույթ ունենալը փորձեր է անում:
- Չհասկանալու դեպքում խնդրում է բացատրել, դանդաղ և հստակ արտասանել, կրկնել:
- Բառը մոռանալու, չգիտենալու դեպքում կիրառում է փոխհատուցող միջոցներ (օրինակ՝ դիմախաղ, ձեռածություն, շրջասություն, նկարագրում է նկատի ունեցած առարկան կամ նշում է, թե ինչում է օգտագործվում և այլն):
- Խոսողական խնդիրներ վճռելու համար օգտագործում է այլ լեզուներից ստացած փորձը:
- Վերլուծում է այն գործոնները, որոնք օժանդակեցին հաջողությանը կամ առաջացրին անհաջողություն բանավոր ելույթի ժամանակ և ուսուցչի հետ նախանշում է ուղղելու պլանը:

**Օտ. Բ-Մ. VI. 21. Աշակերտը հետաքրքրություն է դրսևորում և հանդուրժողական է մշակութային առանձնահատկությունների նկատմամբ:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Որոշում է տեքստերում արտացոլած սոցիալ-մշակութային միջավայրը և գուգահեռներ է անցկացնում հայրենի սոցիալ-մշակութային միջավայրի հետ (դավանանք, ապրելակերպ, տոնակատարություններ, ավանդույթներ և սովորույթներ, երկրի վարչական կազմակերպում, պատմական ժամանակաշրջանի առանձնահատկություններ և այլն):
- Պատկերազարդումներում, տեքստերում որոշում է արտացոլած մշակութային, խորհրդանշային, կենցաղային իրողությունները:
- Ջուգահեռներ է անցկացնում արտասահմանյան և հայրենի մշակույթների միջև, գտնում է նմանություններ և տարբերություններ:
- Քաղաքավարի արտահայտում է իր կարծիքը, տեսակետը, վերաբերմունքը՝ մշակութային առանձնահատկությունների մասին դատողություն անելիս:
- Հետաքրքրություն է դրսևորում մարդկանց ապրումների, վերաբերմունքների

նկատմամբ:

- Ջուգահեռներ է անցկացնում, գտնում է և նշում նմանությունները, տարբերությունները իր և ուրիշների հոգևոր աշխարհների միջև (ապրումներ, տրամադրվածություններ, վերաբերմունքներ):
- Որոշում է ասածվածքների, դարձվածքների նշանակությունը և գտնում է նրանց համապատասխանը մայրենի լեզվում:

### Ուղղություն՝ օտար լեզվի գործնական կիրառություն

**Օտ.Բ-Մ VI. 22. Աշակերտն օտար լեզվով իրականացնում է տարբեր տեսակի նախագծեր (օրինակ՝ ֆիլմ օտար լեզվով, օտար լեզվով թերթի ստեղծում և տարածում, արվեստագետի հետ հանդիպման կազմակերպում, կայք-էջի ստեղծում և այլն):**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Ուսուցչի հետ միասին ձևակերպում են նախագծի հաջող իրականացման չափանիշներ:
- Թիմի անդամներն ինքնուրույն սահմանում են և պլանավորում նախագծի իրականացման փուլերը, այնուհետև թիմերը միմյանց հետ փոխանակում են իրենց կազմած պլանները, համեմատում, կատարելագործում:
- Մոբիլիզացնում են գիտելիքը և կարողությունները, սահմանում են, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերեն նախանշած խնդիրների վճռման համար:
- Ուսուցչի հետ միասին սահմանում են կատարման ժամկետները:
- Թիմի անդամները կատարում են գիտելիքի և կարողությունների համախմբում, սահմանում են, թե ինչ գիտելիք և կարողություններ պետք է ձեռք բերեն առաջադրված խնդիրների վճռման համար:
- Թիմի անդամները սահմանում են և բաշխում գործառույթները:
- Թիմի անդամները գտնում են, ընտրում և մշակում տեղեկություններ:
- Թիմի անդամներն ընտրում են նախագծի ներկայացման ձև:
- Թիմի անդամներն իրականացնում են նախագիծը:
- Թիմի անդամները փորձեր են անում, մեկ այլ խմբի ներկայությամբ շնորհանդեսի կեղծակերպում են անում, մեկնաբանությունների, դիտողությունների նախատեսումով բարելավում են նախագիծը, նրա մեջ ուղղումներ ընդգրկում:
- Թիմի անդամները կազմում են նախագծի վերջնական տարբերակը և այն ներկայացնում լսարանի առջև:

**Օտ.Բ-Մ VI. 23. Աշակերտները մշակում են օտարալեզու աղբյուրներ, տեքստեր հետագա օգտագործման համար (օրինակ՝ նյութ հայթաթել-հավաքել դպրոցական նախագծի իրականացման համար):**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Անում է օտարալեզու տեքստի սխեմատիկ գրառումներ և, նրա վրա հիմնվելով, ուսուցման լեզվով\* բանավոր հաղորդում է տեքստի համառոտ բովանդակությունը հետաքրքրված անձանց համար (օրինակ՝ թիմակիցների համար):
- Անում է սխեմատիկ գրառումներ և նրա վրա հիմնվելով հետաքրքրված անձանց համար գրում է ամփոփագիր ուսուցման լեզվով;
- Ուսումնասիրում է օտար աղբյուրներ և ուսուցման լեզվով գրում է երկու-երեք բառանոց բացատրություններ նրանցից յուրաքանչյուր մասին (նշում է հեղինակին, վերնագիրը, հրատարակման տարին, թեման, գլխավոր հարցերը):
- Թարգմանում է փոքր չափսի ոչ գեղարվեստական (տեղեկատվական, ճանաչողական և այլն) տեքստեր:

#### Ուղղություն՝ ուսանման ուսուցում

**Օտ. Բ-Մ .VI.24. Աշակերտը տիրապետում է ռազմավարական կարողությունների՝ հաջող ուսուցման ապահովման և լեզուների ուսանումը հեշտացնելու համար:**

Արդյունքն ակներև է, երբ աշակերտը.

- Կիրառում է բազմապիսի (կոգնիտային, հուզական և մետակոգնիտային) ռազմավարություններ հաղորդակցական և լեզվական հմտություն-կարողությունների զարգացմանն ու հաստատմանն օժանդակելու համար:
- Կիրառում է բազմապիսի ռազմավարություններ՝ լեզուների ուսանման գործընթացում առաջացած հիմնախնդիրների վճռման համար:
- Ուսումնական գործունեությանն օժանդակման նպատակով արդյունավետ է կիրառում ռեսուրսները:
- Աշակերտը համագործակցում է հասակակիցների, ուսուցիչների, զույգի հետ՝ արդյունքների բարելավման նպատակով:

